ԲԺԻՇԿ Լ. Հիւսիսեան ունի մասնագիտական դարձանատուն մը՝ ներքին, կանանց եւ վեներական ախտելու:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ՝

9-12 Կեսօրէ առաջ,

2-4 եւ 6-8 Կեսօրէ վերջ

ԲԺԻՇԿ Հիւսիսեան հաստատուած է Պոսթըն եւ տառեւչինդ տարուան փորձառութիւն ունի:

Բազմաթիւ հիւսնդներ ենթարկուած են իր ինսամբեն:

ԲԺԻՇԿ Հիւսիսեան իր լաւագոյնն ըրած է դարմանելու իրեն դիմող հիւսնդները:

Բժ. Հիւսիսեան կը հաւատայ, թէ դարմանուած հիւսնդ մը իր լաւագոյն ծանուցումն է:

Բժ. Հիւսիսեան կ'ուզէ շատցնել այս կարգի իր ծանուցում-դարմանուածները:

ՏՈՒԲԹ. ՊԱՂՏՈԵԱՆԻՆ (Պոսթոն) — «Ա.ՀԽԱՐՀ որ ինձ ետուր արեւ»:

ՏՈՒԲԹ. ԿԱՐՈԵԱՆԻՆ (Պոսթոն) — «Խարբուրդ հաւասի...»:

ՏՈՒԲԹ. ՀԻՒՍԻՍԵԱՆԻՆ (Պոսթոն) — իր ճարտարութիւնը ծանօթացնելու լաւագոյն կերպ մը:

ՏՈՒԲԹ. ԲԱԳԻՑԵԱՆԴԵԱՆԻՆ (Նիւ Եորֆ) — իր նորավեպերու ամփոփումն գեղեցիկ կողքով գրքի մը մէջ: Գինը՝ մէկ տուլար:

ՏՈՒԲԹ. ՔԵՇԻՇԵԱՆԻՆ (Տիբրոյք) — իր հայրենասիրական և անդին չափ հարստութիւն, որ միեւնոյն է, ազգին կը պատկանի:

ՏՈՒԲԹ. ԳԱՍԱՊԵԱՆԻՆ (Տիբրոյք) — Նոր տեսակի մեծեակ ուստիօ մը, որուն սիրահարն է ինք:

ՏՈՒԲԹ. Պ. ԴԱՐԲԻՆԵԱՆԻՆ (Տիբրոյք) — ՕՓիսուչի մը:

ՄԻՒՍ ԲՈԼՈՐ ՀԱՅ ԲՃԻՇԿՆԵՐՈՒՆ. — Կ. ճառագայթներ, գիւտեր, վերջ ի վերջոյ՝ ճամբորդութիւն դէպի Հայաստան...:

Ամերիկահայ բոլոր կարգի ու դաւանանքի պատկանող «աղդային աղուաւներուն», — գործիչ, խմբագիր, ճառաճոռոմախօս, և այլ նիւթի տիրապետութիւն, Հայաստանի քարտէսին ուսումնասիրութիւնը, հաշտարար ողի, և այլ մէկ չափ ու մէկ կշիռ՝ դասողութեանց մէջ:


«ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԻԿՆԱՊԱՀ ԶԻՆՈՒՈՒՐ»ԻՆ. — Խանութ մը, ուր կաղամբն ու տաղանդը միեւնոյն կը նոքով ու միեւնոյն գինով ծախութիւն...:

20Ռ. ԱՆԴՐԱՆԻԿԻՆ (Ֆրեզնօ) — Ռամկավար կտրիճ-կըռուողներէ (?) կազմուած զօրաբանակ մը, Կարսն ու Սարիղամիշը ետ գրաւելու եւ ի հարկին, պուշեւիկներու դէմ ըլլալիք ապըստամբութիւնները ճնշելու համար: Խոշոր Ռատիօ մը, առ այժմ մրէզնոյէն ուազմական հրահանգներ զրկելու Մուկուա...:

20Ռ. ՍՄԲԱՏԻՆ (Ֆրեզնօ) — Հրայրի եւ Գէորգ Զավուշի անմեռ յիշատակը:

20Ռ. ՍԵՊՈՒՀՀԻՆ (Պոսթոն) — Անդամ մը եւս Անկախ Հայաստան, ու անդամ մը եւս իր Ճեյրան նժոյգը...:

20ՅԳ. ԿԱՐՄԻՐ ԽԵԶԵՐՈՒԻՆ. — Գալ տարի՝ անուններու նոր փոփոխութիւն մը...:



**ՏՕՔԹ. Մ. Կ. ՍՐԱՊԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅՑ**  
Հեղինակ՝ ԱՏԱՄՆԱԲՈՅՑԻ ԻՒԹԻՒՆ-Ի

18 HUNTINGTON AVE.,

BOSTON, MASS.

Կը գարմանէ նորագոյն մեթոսներով՝ խնայելով՝  
ոռղջութիւնով, ժամանակով ու դրամով։

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ԲՈԼՈՐ ԱՄՈՒՐԻՆԵՐՈՒՆ (Մեղու Շնորհալին  
ալ մէջը) — Մէյմէկ աղուորիկ-թոմպուլիկ հարանցու։

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ՕՐԻՈՐԴՆԵՐՈՒՆ — Խնձորի նման կլորիկ  
մէյմէկ փեսացու։

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ԵՐԳԻԾԱՍԵԿՐ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ — Մեղու Շնոր-  
հալիկ Տարեցոյցը։

ԴԵՐԱՍԱՆ-ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐՈՒՆ — Մէկ սիրտ, մէկ հո-  
գի, մէկ մարմին . . .

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ԵՐԳԻՉ-ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐՈՒՆ — «Արշին մալ  
ալան . . .»։

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ՊԱՐՈՂՆԵՐՈՒՆ — Շիմի' . . .

**ԱՄԵՐԻԿԱՀԱՅ** ՆՈՒՄԴԱԾՈՒՆԵՐՈՒՆ — Տափ և Զուռնա' . . .

ԵՐԱԺԵՏԱԳԻԾ ԳՐ. ՄԻՒՆԻԻՆ — Լոռիկ թթու թանը։  
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲՈԼՈՐ ԿԱՐԳԻ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ (Բանասեղծ,  
քանասեղծուի, վիպագիր, քատերագիր, եւն.) — «Ճայտո-  
տան, երկիր գրախտավայր . . .»։

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԳՈՐԾԱՎԱՐ ՍԵՂԻՄԱԿ ԲԱԽՏԻԿԵԱՆԻՆ —  
Կարգուեցէք տղե՛րք, կարգուեցէ՛ք քաջ-քաջ,

Կնքահայր կ'ըլլանք՝ ըռնելով ձեր Խաչ . . .

Յանկալի է մեզ հարսնիքին հաւը —  
Ամուրի կեանքին չի՛ քաշուիր ցաւը . . .

Դէ՛ս, կարգուեցէ՛ք տղերք, մինչեւ շունչ վերջին,  
Արժանի լինինք փառքին-պըսակի՞ն . . .

ԼՈՒԹՅԻ ՄԻՒԱՍԻՆ —  
Շէ՛կ-չիկավարս

Մի նորահարս,  
Հեծեալ ընդ «սուրբ աւանակ»ին —

Իբրեւ Մուսան իր հին երգին —,  
Որ կոչիցէ «Տիկին Մինաս . . .»։

— Հերիք, հոգիս, մինակ մնաս . . .

ՀԱՄԱՍՏԵՂԻՆ — «Գիւղը»էն յետոյ՝ «Գիւղուի» . . . : Մի՛  
նեղուիր, տղա՛ս, համը այստե՛ղ է. այլապէս ի՞նչ կ'արժէ գիւ-  
ղը : Աղամն անդամ զիւղին կեանքը մինակ չ'ապրեցաւ : Աստուած  
Պապան երբ տեսաւ որ իր ստեղծած Աղամը շատ ալ չ'ախորժիր  
ստանձնութենէն, հաւաքեց «Գիւղ»-ին բոլոր «Սուրբ-աւանակ»-

Ները եւ անոր բերաւ, ըսելով .— «Ընտրէ՛ սոցանէ յարմարագոյ-նը՝ իրը ընկեր քեզի»: Եւ երեւակայեցէք անդամ մը, որ եթէ Ա-ղամը սխալէր ու աւանակուհիներէն թէկուզ «յարմարագոյն»ը, «իրը ընկեր» ընտրէր իրե՛ն — ի՞նչ պիտի ըլլար յետ այնու Գիւ-դին վիճակը եւ ի՞նչ պիտի կոչէնք անոնց ցեղը, մանաւանդ երբ ինդիրը Ամերիկան դատարանն իյնար՝ «քաղաքացիութեան» համար . . . : Բարեբախտաբար այդպէս չէ եղած, եւ, «Գիւղը»-ին մէջ՝ գեղուհիները անտեսած էք դուք . . . :

Մ. ՎերԱՌԻՑԻՆԻՆ .— Կարգուեցէ՛ք այս կաղանդին: «Տիկին վերածինը՝ բաղմածին՝ եւ Տիկին Սէֆէրը՝ նէփէ՛ր կ'ըլլայ»— կ'ըսէ Աստուած Պապան . . . :

ԱՐՏԱՇԷԼՍ ՎԱՆԱՐԵՍԻՆԻՆ .— Վանուհի մը գիտեմ, որ քեզի համար կ'այրի, կը մըրկի, եւ սա հետեւեալ տողերով պարերդ մը հիւսուած է, կ'երգէ ու կը պարէ .—

«Ընկերվարական»

«Ընկե՛ր Վանարեան,—

«Կ'ուղես, պոլշեւիկ եղի՛ր,

«Կ'ուղես՝ մէնշեւիկ,

«Թաքի ի՛մ եարս եղիր —

«Խածի՛ր իմ թուշիկ . . . :

«Ես կը պարեմ տոտիկ-տոտիկ

«Բայց դուն չե՛ս գար ինձի մօտիկ . . .

«Եա՛ր խօրօտիկ,

«Զա՛ն խօրօտիկ,

«Պոլշեւիկ, մէնշեւիկ Վանա՛ր, —

«Եղիր ինձ եա՛ր, արի զիս տա՛ր . . . »:

Յ. ԽԱՇՄԱՆԵՍԻՆԻՆ .— Իր «Ամերիկահայ Տարեդիրք»էն՝ 4000 օրինակի անմիջական սպառում մը: 1926 թ. տարեգրքին տպագրութեանը աճապարանքով ձեռնարկուած, իրը հետեւանք այս առաջինին դատարանութեանը՝ գնահատել գիտցող մէր ժողովուրդին մէջ:

ՊԱՐՈՅԻՒՆ (Նիւ Եորք) .— Պոլշեւիկներու պարանը . . . :

ԶԱՏԻԿ ՄԱԹԻԿԵՍԻՆԻՆ .— Քանի մը վայրկեանի համար թը-ըոցքին վերաբերուն . . . :

ԽՈՍՐՈՎ ՊԱՊԱՅԵՍԻՆԻՆ .— Մէկ-վայրկեանի Աստուածու-թիւն՝ այս հողագունդին վրայ . . . : Յետոյ՝ սիրամարդի փե-

տուրնե՛ր: Աւելի յետոյ՝ ի՞նչ կ'ուզէր թո՛ղ լինի, միայն Երեւա-նը «մերը» կը լինի . . . :

ԳՈՐԴԱՎԱՃԱՌ ՍԵԴՐԱԿ ԱԿՏՕԵՍԻՆԻՆ (Նիւ Եորք) .— Նէմ-րուտն ու Գրգուռը վկայ՝ այս տարի «Կարմիր-գորգերուն» փըր-կութիւն չկայ . . . :

Մ. ՕԶԱՆԵՍԱՆԻՆ .— Փիամօ մը (Դաշնակ) ի գնահատութիւն այն խղճամիտ աշխատանքին որ միայն Դաշնակներուն է ծանօթ այս կիազունդին վրայ . . . :

Մ. ԱՍՉՈՎԻԼԵՍԻՆԻՆ (Սիրաբիւզ, Ն. Ե.) .— Կաղանդ Պապան ի մօտոյ պիտի գոցէ զբասենեակիդ դուռը եւ Բ. կարգի ձամ-բորդութեան տոմս մը պիտի հրամցնէ ձեղ — Եւրոպական ցա-մաքամասին վրայ աղուորբիկ պառյատի մը համար: Կաղանդ Պա-պան խատիւ կը պատուիրէ որ «Տիկին Սաշագլեանը հետզ չ'վեր-ցնես. որովհետեւ առանց այդ ալ՝ պայուսակի բաւականին ծանր պիտի ըլլայ արդէն» . . . :

ԻՈՒՔԻՆ ԳԱԼՈՒՍԵՍԻՆԻՆ, (Ֆրեզնօ) .— Գլանիկի թուզթ մը ոտքին տակը եւ սիլինտր գլխարկ մը գլուխը, Զարլի Զավիէնեան դաւազան մը ձեռքին, եւ ձամբորդութիւն մը դէպի Պոսթոն, տիկ-նոջը հետ միասին:

Յ. ԳԱՊԱՍԵՍԵՍԻՆԻՆ (Ֆրեզնօ) .— Ընկերացէ՛ք Խորէն Գա-լուստեանին, 1925 Յունիսին, «Օր. Խոզաբիս կ'իզբարեանն» ալ հետերնիդ առնելով . . . : Հոս «Պատուի համար» կը բեմագրենք այդ օրերուն; եւ շուք լա՛ւ Արտաշէս կը խաղաք կո՞ր . . . :

Մ. Գ. ՖէՌԱԶԵՍԻՆԻՆ (Լոս Անիլու) .— «Ամենուն մէկ պա-տասխան» մը գրելու համար ոսկեծայր ինքնահոս մը եւ ոսկի-Արեւ . . . :

Յ. ԳՈՓՈՅԵՍԻՆԻՆ (Նիւ Եորք) .— Սպիտակ, փայլուն մաղե-րով տանտերուհի մը — «Փոնիս»-ը տաքցնելու համար . . . :

ԱՂԱՋԱՆ ԵՂՕԵՍԻՆԻՆ (Փորբէնու, Մէյն) .— Երեւան քա-զարքի ոստիկանապետութիւնը (Զիփ փոլիս կամ Շէրիփ) եւ խումք մը պոլշեւիկ բանտարկեալներ («Հեկիստ»ներ):

Կ. ԷՌԵՍԻՒԽԵՍԻՆԻՆ .— Եղեսիոյ հերոսամարտը նկարագրող սլոյէմա մը, որուն մէջ ամէն չափ գործածուած լինի . . . :

Մ. ՌԵՏՈՒԽԵՍԻՆԻՆ .— Գեղագանգուր գերուկ մանչ զաւակ մը, ինձորի պէս կլոր թուչերով:

ԿՈՒՊԵՌՆԻԿ ԹԱՆԻՏՈՌԵՍԻՆԻՆ .— Անունի փոփոխութիւն մը որ սանկ կտորիկ մը քաղցր հնչէ, օրինակ, Կարպետ Գործողեան,

կամ կ. Թոնրաշէնեան եւ կամ՝ Կիպրիանոս Օձախեանի... (Օճախեանի պէս բան մը) :

ՀԱՅՈՒՆ. — Տակառ մը գերմանական տեսակի դարեջուր եւ կարմրցուած խոզի մը գլուխը :

«ՀԱՅՐԵՆԻՔ»ի ԳՐԱԾԱՐԱԳԵՑ ՕՆՆԻԿԻՆ. — Երկու նոր լայնօքայի եւ չորս նոր գրաշարներ, տարեգրքերը («ատենիին») տարեղլիքն հասցնելու համար իրենց հեղինակներուն...:

«ՀԱՅՐԵՆԻՔ»ի ԳՐԱԾԱՐ ՏԻԳՐՈՒՆԻՆ. — Տարեցոյցներ շարելու համբերութիւն :

«ԲՆԿԵՐ»-ՊՅԱԼՈՒՆ (Պֆլո, Ն. Ե.) .— Անդամ մը եւս Զատիկ Մաթիկեանի քովը նստելու պատեհութիւն եւ «ատենախօսելու» վերջին չենս մը....

«ԲՆԿԵՐ ԹՈՐՈՍ»ԻՆ (Ուստր) .— Երկրորդ անդամ արքայութիւն մանելու պատուոյ տոմս մը, «ԲՆԿԵՐ ՊՖԼՈ»ին քովիկ...: Տիվրիկուչի մըն ալ իրը «Կողակից» :

«ԲՆԿԵՐ ԶՈՐԱՊԵՏԵԱՆԻՆ» (Պոսքոն). — Գոնէ «ասնկ փոքրիկ գաղութի մը մէջ» ատենախօսելու պատեհութիւն մը — պայմանաւոր սա մէր «դրոց-բրոցները» բոլորն ալ հոն ըլլան՝ իրը ունկնդիրներ....:

ԱՍՍՏՈՒՐԻԻՆ. — «ԲՆԿԵՐ Զօրապետեանին դաւաթ մը ջուր սահնելու «Երջանիկ» պատեհութիւնը՝ անոր «ատենախօսած» միջոցին....:

ԱՐՄԷՆ-ՎԱՀԻՆ. — Ծափահարելու պաշտօն....:

ԶԱԻԿՆ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻՆ. — Քիմիական նոր գիւտ մը, որով կարելի լինի Հայ Յեղին կեանքը երկարել, եւ անոր թշնամիներուն «ի վերին Երուսաղէմ Ել Երթանք» ընել....: «Այլապէս փըրկութիւն չկայ, որդի՝, — ազգովին «Սարսափովիչ» դարձուցին զմեղ....: Արթնցիր, աքլորները երդիքը ելան....:

ԱՐՄԷՆ ՄԻՒՅԱՅԻԼԵԱՆԻՆ. — «Ազատագրուած Հայաստան» այիսային հրատարակութիւնը եւ քոմբիմենտ տոմս մը — քատերագիրներու երեկոյը մտնելու համար....:

ՏՈՒԹՅ. ԱԴԱՄԵԱՆԻՆ (Ուստր) .— «Քառասուն եւ չորս աղցերու» վրայ աշխարհակալելու եօթնօրեայ թագաւորութիւն մը, «մէջն ըլլալով Քիւրտերն ու Ռամկավարները», որոնք «ճարոնացիներն ու չինացիներէն յետոյ», պիտի հպատակին իրեն — Եթէ Մոսկուան ըլլայ իր մայրաքաղաքը....:

ՃԱԾԱՐԱՆԱՊԵՏ ԳՈԳՈՒՆ. — Ա. Շիրվանդաղէի նման քանի մը յաճախորդներ....:

Ն. ՏԵՍՏԿԻՒԼԻՆ. — Գրքերու սպառում : ԽՄԲԱԳԻՐ ԼԵՒԹՆ ՆԵՐՍԱԿՍԵԱՆԻՆ. — Սուր մկրատ մը եւ սուր տեսողութիւն :

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ



Tel. Back Bay 0432

ՏՕՔ. ԱԼՊԵՐՅ Ս. ԱԲԷԼԵԱՆ

72 WEST BROOKLINE ST.

BOSTON, MASS.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

1-3 եւ 6-8 Կեսօրէ եսթ

ԾԱՆՈԹ. — Տօք. Աբէլեան հեղինակն է «Մայրերու Մենոր» եւ «ՀԵՅԻՄԱՐԱՆ» գիրքերուն, որոնից շուտ մը սպառեցան :

Boston Tel. Beach 9234

Ա. Պ. ՔԵՇԿԵԿԵԱՆ  
A. B. KASHGEGIAN

Փէյլքը, փէյփը-հէնկը եւ բարփենքը  
Bridgewater-ի օֆիս, 153 Spring St.  
Boston-ի օֆիս, Armen Real Estate Co.

34 KNEELAND ST.

Մի՛ մոռնաք Քէշկէկեանը :  
Զեր գործերը լաւ կը տեսնէ Քէշկէկեանը :  
Փորձեցէք Քէշկէկեանը :  
Զեզ կը գոհացնէ Քէշկէկեանը :

## ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒՔՐՆԵՐ

Բ.

Գորգի Աշխարհին Մէջ

ՊԱՏՐԻԿ ԿԻՒՂՋԻՆԿԵՍՆԻՆ — Երուսաղէմի վանքին իր ըրած կտակին առիթով, արքեպիսկոպոսութեան աստիճան, եւ անդամակցութիւնը Երուսաղէմի Միարանութեան, Բարդէն Եպսի ծխամորձէն հաշիչով մը միասին:

ԿԻՒՂՋԻՆԿԵՍՆԵՐՈՒԻՆ — Հանք մը տոլար, իրենց ազգային բարերարութիւնները աւելի ընդլայնելու համար:

ԳԱՐԱԿՈԶԵԱՆՆԵՐՈՒԻՆ — Առաքինութեան մրցանակ, եւ իրենց բարերարած որբերուն, գաղթականներուն ու տնանկներուն հաւաքական խմբանկարը:

ՊԵՏՐՈՍ ԳԱԶԱՆՃԵԱՆԻՆ — Հայ եկեղեցականներու մտերմութիւնները . . . :

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Թէլֆէկենին — Փշէ պսակ մը:

ՏՕՆՃԵԱՆ ԵՂԱՅՅՐՆԵՐՈՒԻՆ — Մասրենի, փշատերեւի եւ վայրի կանկարի ոստերէն հիւսուած պսակ մը:

ԳԱՄՊԻՌԻՆ — Համեստ եւ առաքինի մարդու տիտղոս:

ԱՇՈՏ ԹԻՐԵԱՔՔԵԱՆԻՆ — Ճէնթըլմէնութեան պատուանչանին անթառամ վարդէ ծնրակապը:

ՆԱՍԻՊԻՆ — Գորդի գործարաններ՝ 'ի Քամչաթքա եւ Հօնութու:

ՆՈՒՐԻՃԱՆԻՆ — Իր գորդի հակերը Պարսկաստանէն Նիւեորք փոխադրող արագ փոխադրական ընկերութեան մը նախագահութիւնը:

ՊէՇԱՐԻՆ — Իր լօնկ Այլէնտի Փէքթըրին մէջ յարատեւուէն գործող գործաւորներու առատ սրաք մը:

ԱՆՏՈՒՆԻՆ — Անկեղծ ու անձնուէր գորդի գնորդ մը՝ 'ի Պարսկաստան:

ՓէՇԻՎԱՆԻՆ — Տիպար Ամերիկահայու մը պատկերը եւ ծխախոտի ընդարձակ գաշտեր Սամսոն, Պաֆրա, Գավալա, Իսբէչէ:

ՉՊՈՒՔԻՆ — Հայ կառավարութեան Ամերիկայի դեսպանութիւնը:

ՆՇԱՆԵԱՆԻՆ — Մանկաւիկի մը արձանը:

ՔէՈՂՃԻԿԻՆ — Սրնթաց հեծելանիւ մը:

ՆԱՀԻԿԵԱՆԻՆ — Ուրախ եւ ժպտերեն մարդու մը պաղարինը:

ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆԻՆ — Տըղըն մը խարբութ քէօֆք:

ԳԱՐԱԿՈԶԵԱՆԻՆ — Գլուրիկէննին — Առատ գնորդներ եւ ժպտում գէմք մը:

ԱԻՄՆՈԶԵԱՆԻՆ — Ամսական 100,000 տոլարի վաճառում մը իր ապրանքներէն:

ԱԻՏՈՑԵԱՆԻՆ — Համերաշխութիւն եւ սէր:

ՔէՇԻՇԵԱՆԻՆ — Ընդարձակ ընկերակցութեան մը պայմանագիրը, Մարսելիա, Հայկագուն Ներսէսեանին հետ:

ԹՕՓԱՐԵԱՆԻՆ — Պարսկական գեսպան՝ 'ի Վաշինգտոն:

ԹՕՓԱՐԵԱՆ ՄԻՋԻՆԻՆ — Տօնձեանէն կտակ մը, եւ անոր կտակակատարը:

ՃՈՐՃ ԹՕՓԱՐԵԱՆԻՆ — Իրենց գաղթականները Ամերիկա փոխադրելէ եաք՝ պարտաճանաչ դիմողներ:

ԵՐԳԻՉՆԵՐՈՒԻՆ՝ Տիկին ԶՈՒԼԱԼԵԱՆԻՆ — Աշխարհի բոլոր թերթերուն մէջ, իր տաղանդը զովարանող յօդուածաշարքեր:

Տիկին ԶԱՊէԼ ԱՐԱՄ-ՓԱՆՈՍԵԱՆԻՆ — Նոր Թուրքի մը Ֆրանսա, Իտալիա, Գերմանիա, Պելճիքա, Հայ տաղանդը փայլցնելու համար նորէն:

Տիկ. ՆՈՒՐԻԴ ՇԱՂՈՑԵԱՆ-ՃԻՎԷԼԿԵԿԵԱՆԻՆ — Հրաւէր մը Ամերիկան թատրոններուն մէջ Երգելու համար:

ԱԼԵՄ ՔԻՒՐԹՃԵԱՆԻՆ — Նիւ Եորքի 27-րդ փողոցի Հայ լուսաւորչական եկեղեցին դպրագետութիւնը:

ԱՐՄէՆ ԹՕՐԱԹԵԱՆԻՆ — Քարուսի արձանը եւ Անանեանին մտերմութիւնը:

ԱԼԵՔՍ. ՇԻՇՄԱՆԵԱՆԻՆ — Հայ մեծատան մը Քսակը, զինքը Շալեափին մը գարձնելու համար:

Տիկին ԱՐՄԷՆ ՕՀԱՆԵԱՆԻՆ — Նիւ Եորքի Ռամկավար Ակումբին բարեկամութիւնը:

Տիկին ՄէՀՐԱՊԵԱՆԻՆ — Յարական նոր պալատ մը, Հոն նուազելու պայմանագիրը:

Տիկին ՍՈՒՐԱԲԵԱՆԻՆ — Հարուստ թատերասէրներու տարեվճարները:

Տիկ ԵԽ Տիկին ԶԱՐԻՖԵԱՆԻՆ — Նոր-զնոր խաղացանկը, Ամերիկահայուն հասկնալի քիչսներու ընտրութիւնը:

Tel. Back Bay 2708

**ՏՕՔԹ. Գ. ԿԱՐՈԵԱՆ**

447 MASSACHUSETTS AVE., BOSTON

Specialist

ՄԱՍՆԱԴԻԾ ԾՆՆԴԱՄԻԶԱԿԱՆ, ՄՈՐԹԱՅԻՆ ԵՒ  
ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Մասնագիտութեան հետեւած՝ Փարփա

Ելեքտրական քննութիւններ միզական գործարաններու՝ միմիայն ժամադրութեամբ:

ԲՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ.

2-էն 4 եւ 6-էն 8 կէս օրէ ետք

Կիրակի եւ Տօն օրերը հիւանդ կ'ընդունի  
Ժամը 1-էն 3 կէսօրէ ետք

Տօքթ. Կարօեան ծանօթ է Ամերիկահայութեան:

Տօքթ. Կարօեան բաղմաթիւ հիւանդներ բժշկած է:

Տօքթ. Կարօեան շատ գաղտնապահ է:

Տօքթ. Կարօեան ձեր բարեկամ-բժիշկն է:

Տօքթ. Կարօեան գրիչով ալ միշտ օգտակար կը լինի:

**ՏՕՔԹ. Գ. ԿԱՐՈԵԱՆ**


Տոքթ. Գասպար Մ. Կարօեան ծնած է Խարբերդի Փերչէնճ գիւղը, 1886-ին: Իր նախնական կրթութիւնը ստացած է գիւղին դպրոցին մէջ: Հայրը՝ Մկրտիչ Կարօեան, թէպէտ անուս, բայց երկիւղած, պարտաճանաչ եւ եկեղեցասէր անձ մըն էր եւ գիւղացիներէն կը կոչուէր Արդար Մկրտիչ: Հայկական ջարդերէն ետք, 1896-ին, Մկրտիչ Կարօեան Փրանսացի քափուչին հայրերու որբանոցը դրաւ պատանի Գասպարը, զայն թուրքերու ձեռքէն ազատելու համար, որովհետեւ թուրքերը նոյն տարիքի պատանիները կը հաւաքէին եւ կը թլփատէին:

Տոքթ. Կարօեանի հայրը այնչափ կը գուրգուրար իր զաւակի ապագային վրայ, որ չէր ուզեր յաճախակի այցելութիւններ տալ անոր, որպէսզի Գասպար մոռնայ իր ծնողքը եւ միշտ դասերով զբաղի:

— Տղա՛ս, կ'ըսէր Արդար Մկրտիչ աղբար, դպրոցը մի՛ ձգեր եւ մի՛ գար ինծի այցելութեան, եթէ նոյնիսկ հիւանդ ըլլամ: Ապա եթէ պատահէ որ մեռնիմ, դարձեա՛լ մի դար, եթէ օրը շարաթ կամ կիրակի չէ, որովհետեւ դպրոցը ամէն բանէ վեր պէտք է լինի քեզի համար:

Քափուսիններու դպրոցը վեց տարի յաճախելէ ետք, Տոքթ. Կարօեան, այն ժամանակ միւսիւ Գասպար, առաջին շրջանաւարտներէն մին եղաւ, եւ դըրոցն այնուհետեւ պաշտօնապէս կոչուեցաւ Քոլէն Ֆրանսէ: Միւսիւ Գասպար նոյն վարժարանին մէջ կոչուեցաւ ուսուցչական պաշտօնի, չնչին ամսականով մը, եւ ինք եղաւ որ նոյն դպրոցը ներմուծեց Հայ Ազգային պատմութիւնը: Ինք կ'աւանդէր հայերէն, պատմութիւն եւ մատենագրութիւն: Հոս տարիներ շարունակ պաշտօնավարեց:

Միւսիւ Գասպար, աչքի առջեւ ունենալով ուսուցչական ասպարէզի ապերախտ ապագան, կը ծրագրէր Պրուսայի Շերամաբուծական վարժարանը յաճախել,



Օսմ. Հանրային պարտուց վարչութեան մէջ պաշտօն մը ստանձնելու նպատակաւ, սակայն սահմանադրութեան հռչակումէն ետք՝ դէպքերը տարբեր դասաւորուեցան։ Տոքթ. Կարօեանի եղբայրը, Փօլ, որ Ամերիկա գացած էր, սկսաւ իրեն օգնել մեծ զոհողութիւններով եւ միւսիւ Գասպար նախընտրեց մտնել Պէյրութի

Փրանսական բժշկական համալսարանը, 1910-ին։

Հոս՝ հինգ տարի ուսանելէ ետք, 1914 Յուլիսին, Տոքթ. Կարօեան յաջողութեամբ աւարտեց իր բժշկական ուսումը, սակայն տոքթորան չանցուցած, մեծ պատերազմը վրայ հասաւ։ Թուրք կառավարութիւնը Պէյրութի Փրանս. բժշկական համալսարանը նկատեց թշնամի հաստատութիւն մը եւ փակեց։

Համալսարանի 17 բժիշկ ուսանողները յանձնուեցան Սամայի (Պաղեստին) ութերորդ գործառորական վաշտին։ Բարեբախտաբար Դամասկոսի մէջ, չնորհեւ կարգ մը ազդեցիկ բժիշկներու միջամտութեան, Տոքթ. Կարօեան եւ իր 16 ընկերները (2-ը յոյն, 1 հրեայ եւ 14-ը հայ) Դամասկոս քաղաքի մօտ Կատեմ վայրին մէջ վիրաւորներ փոխադրելու գործին վրայ կարգուեցան։ Հոս՝ այս կարգի բժիշկ անձերու թիւր 40-ի բարձրանալով, Տոքթ. Կարօեան նշանակուեցաւ բժշկապետի օգնական։

1916-ի երկրորդ եզիստական արշաւանքին, Յուլիս ամսուան մէջ, Երբ օսմ. արշաւող բանակը ի Քանթարա կրպարտուէր անգլիական ուժերէն, Տոքթ. Գասպար Մ. Կարօեան, յաջորդող շաբաթներուն (օգոստոս 5) գերի կ'իյնար Անգլիացիներու ձեռքը։

Անգլիական քէմֆերու մէջ, Ալեքսանդրիոյ մօտ, երկու ամիս գերի մնալէ ետք, չնորհեւ հայ ազգային իշխանութեանց միջամտութեան, ազատ արձակուեցաւ եւ գնաց Գահիրէ, ուր պլ. Խաչիկ Շամլեանի վեհանձն հիւրասիրութեան առարկայ եղաւ։ Ջրանսա երթալու համար Տոքթ. Կարօեան դիմեց Բարեգործականի ընդհ. քարտուղար Տիար Մալէզեանի, խնդրելով որ իրեն փոխատուութիւն մը ըլլայ, մինչեւ Մարսէյլ ծախքերը գոցելու։ Սակայն Տիար Մալէզեան մերժեց՝ Տոքթ. Կարօեանի պարագային անպատճաճ եղանակաւ մը։ Տոքթ. Գասպար Մ. Կարօեանի Ջրանսա մեկնիլը չյաջողուեցաւ, որովհետեւ Անգլիոյ պատերազմական պաշտօնատարեց զինք զրկեց Կիպրոս՝ բժշկական պաշտօնով։ Կիպրոսի մէջ գրեթէ երկու եւ կէս տարի պաշտօնավարեց Անգլիական հիւանդանոց-

ներու մէջ եւ անդլիացի բժիշկներու գնահատութեան  
արժանացաւ:

Զինադադարէն անմիջապէս ետք մեկնեցաւ Ձրան-  
սա, կատարելագործելու համար իր բժշկական ուսու-  
մը: Փարիզի մէջ երկու տարի հետեւեցաւ քուռ տը  
փէրֆէխոնըմանի դասրնթացքներուն (կատարելա-  
գործման դասընթացք) եւ ստացաւ Ծննդամիզական եւ  
վեներական հիւանդութիւններու վկայականներ:

Տոքթ. Գասպար Մ. կարօեան ներկայիս հաս-  
տառուած է ի Պոսրթն եւ յաջողութեամբ կը հետեւի  
իր մասնագիտութեան:

Քղիի ԱԱՏՂԲԵՐԴ ԳԻՒՂԻ ՏԵՐՏԵՐԻՆ ՎԱՐՏԻՔԸ

Աստղերդ գիւղի քահանան պիտի պատարագէր Կիրակի առ-  
տու: Մութն ու լուսուն ելաւ եւ արտօրալով հաղուեցաւ, բայց  
փոխանակ հագնելու իրը, հազաւ երէցկնոջ վարտիքը:

Պատարագի ատեն տիրացուն նշմարեց սխալը, եւ որպէսպի  
չխանդարէ պատարագը, սկսաւ կարդալ.

— Տէ՛րտէր, նայէ՛ տանձիդ վրայ,

Վար է ինկեր գանձիդ վրայ,

Կլոր փաչաներդ կ'երեւնա՞ն,

Մեծացուցանե՞մ:

Տէրտէր նայեցաւ տանձին ու գանձին վրայ, տեսաւ որ ճիշդ  
է տիրացուն եւ պատասխանեց.

— Ծօ՛ տիրացու,

Փուքդ ուռեցու,

Փէ՛ կանթեղը, մարեցու,

Մեծացուցանե՞մ:



ԱԲՀԱՅԱՆ ԽՈՒՄԲԻՆ . — Զրի տոմսակներ Ամերիկայի շրջա-  
նը ընելու իրենց խումբով:

ԹՈՐԳՈՄ ՊէԶԱԶԵԱՆԻՆ . — Իր ընտանեկան խմբանկարը,  
Պովու իր հայրիկին . . . :

ԵԴՈՒԽԱՐԴ ՊՈՂՈՍԵԱՆԻՆ . — Իր ծակած փաղուձներուն  
կարկտանցու, քիօթնասու:

«ԱՅՑԲԱՐ»ԻՆ . — Թմբկահարութեան արուեստը կատարե-  
լագործելու համար նօթայի տետրակներ:

«ՀԱՅԲԵՆԻՔ»ԻՆ . — Միլիոն մը գրամագլուխ, եւ նիւ նորք  
թայմզի չէնքը:

«ԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»ԻՆ . — Առատօրէն վճարող բա-  
ժանորդներ, եւ սօրմա վէր նուրիատուներու լէգէոն մը:

«ՀԱՅԲԵՆԻՔ ԱՄՄԱԳԻՐ»ԻՆ . — Վճարող 10,000 բաժանորդ-  
ներդ, եւ ձրի աշխատակցութիւնը բոլոր հայ վերապրող գրող-  
ներուն, եւրոպա, յայսկոյս եւ յայնկոյս Կովկասի:

«ԿՈՉՆԱԿ»ԻՆ . — Պիւտճէի հաւասարակշուութիւն գոնէ:

«ԱՌԵԽՏՈՒԻՐ»ԻՆ . — Առաթ նիւթ եւ նոյնքան առաթ բաժա-  
նորդներ:

«ԴԻՑԱՐԱՆ»ԻՆ . — Երկնից արքայութիւնը եւ յարութիւն  
առնող մեռելներ:

«ՊՐՈԼԵՏԱՐ»ԻՆ . — Սնարի խմբագրապետութեան տակ, հա-  
մերաշխ խմբագրական կազմ մը:

«ՍԱԴԱՅԷԼ»ԻՆ . — Գոյն մը վերջապէս, եւ Տիարակէքիրի հայ  
լեզուաքարեանի ընդարձակ բառարան մը:

«ԿՈՌՈՒՆԿ»ԻՆ . — Յօդուածէ նիւթեր, եւ առատ վճարող ծա-  
նուցանէրեր:

«ՀՈՌԻԶՈՆ»ԻՆ . — Հեռագիտակ մը, Հրատին հորիզոնը դի-  
տելու համար, եւ այսմաւուրքի տպագրական գիրերը:

«ԴԱՏԱԽՈՐ»ԻՆ . — Փաստաբանական կաճառի մը տեւական  
ու ձրի սպասարկութիւնը, որպէսզի, երբ դատարան ներկայա-  
նայ, դատաւորներէն փրկուի:

«ՆՈՐ ՕՐ»ԻՆ . — Դրամատէր վարիչ մը, զինքը իր հսկայ  
պարտքերէն ազատելու համար:

«ԱՍՊԱՐԷԶ»ԻՆ . — «Հայրենիք»ի ամբողջ հաւաքածուները:

«ԾԻԱԾԱՆ»ԻՆ . — Թերթի թուղթերու եւ տպագրական մեքե-  
նայի ձրի պատրաստ մը:

**ՅԱԿՈԲ ԽԱՇՄԱՆԵՍԻՆԻՆ** — իր տարեգիրքը տեւականօրէն հաստարակելու համար հարուստ պէնֆլը մը, և աշխարհի չորս ծագերուն ցրուած հայութենէն բաժնեգիններ :

ՎԵՐԱԾԻՆԻՆ (այլ անուամբ Մեղու Շնորհալի) — Պոլիս Գաթըրձը օղլու խան Պլումէնքի ամբողջ օտէոն և օրֆէոն լէքըրտները տարուան մը ապառիկի պայմանով :

**ԳՈՆՏԱԶԵՍԻՆԻՆ** — Հազուստի գործաւրական եռնիլնին համակրանքը և Պրաղիլիա, Մեքսիգո, Գանատա, Քոււզա, Հօնօհուլու ժամանող, և Ամերիկա մտնել բաղձացող գործաւրներէն 200 հոգի . . .

Հ. Բ. Լ. ՄԻՈՒԹԵՍԻՆ — Որբերուն ի նպաստ կտակ ընող Հայ հարուստ մահկանացուներ :

«ԲԱՀԻԻՄԱ»ՅԻՆ — Հայ Կրթական Հիմնարկութեան հովանաւորութիւնը և նիւթական աջակցութիւնը :

**ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵՍԻՆ** — Ուղեցոյց խոչորացոյց մը :

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ — Ամերիկահայ չէղոք օրաթերթ մը հըրատարակելու գաղափարը :

«ՆԻԻ ԱՐՄԷՆԻԱ»ՅԻՆ — Աշոտ Թիրեաքեանին քսակը, և անոր գրագէտ խմբադրին ա'լ, տարի մը ոեւէ մէկուն հետ չի կոււելու . . . անսահման համբերութիւն :

ՎԱՀԱՆ ԳԱՐՏԱՇԵՍԻՆԻՆ — Ճերարտին հետ հասկացողութիւն մը, իր Զէսքըրի Ծրագիրը գրքոյկէն լուր ունէ՞ր ան թէ ո'չ :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԵԲՈՒՆԻՆ — Իրերահասկացողութիւն և Հաշտութիւն, որպէսզի միանան նորէն, յօդուտ հայ դաղթականներուն կիրքերը զոհելով, իսկ եթէ ասիկա անկարելի է, զոնէ խղճատանք, պանքաները անձեռնիւնի մնացած 28000 տոլարը անմիջապէս առաջադրուած պէտքերուն գործածելու համար, վասնդի, հայ ժողովուրդը կթան կով է, նորէն կուտայ . . .

ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Առաջնորդնուս) — Ամերիկահայ սամէն քաղաքի մէջ կառուցուած ու կառուցուելիք բոլոր եկեղեցիներուն օծումին համար հրաւէրներ, իրեն, և, անսպառ համբերութիւն :

ԲԱԲԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ — Ամերիկահայ առաջնորդութիւնը, և նախագահութիւնը՝ «Քաջն Վարդան» Շահասիրաց լնկ. որ ի . . . նիւ եորք :

**ՇԱՀԱՅԱՐԴԱԳԵՏԻՆ** — իր գիշած տուարները զետեղելու

յատուկ պանքա մը, որ մկրտուած ըլլայ Շահէ՛ անունով . . .

ՄԱՆԻԿԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ — Նիւ եորքի 27-րդ փողոցի Հայ եկեղեցիին մշտնջենի հովուութիւնը, որպէսզի, աղատի հործաւորութիւն ընելէ :

ՆԵՐՇԱՊՈՒՀ ՔԱՀԱՆԱՅԻՆ — Նիւ եորքի 17-րդ փողոցի Ռամէկ փակուած եկեղեցիին հոգաբարձութեան խմբանկարը, և առատ կնունք և հարսնիք :

ՎԱՀՐԱՄ ՎՐԴԻ ՆԱԶԱՐԵՏԵՍԻՆ — Հաւատք, յոյս, սէր և կուսակրօնական կենցաղ :

ՏԻՐԱՅՐ ՎՐԴԻ ՄԱՐԳԱՐԵՏԵՍԻՆ — Եպիսկոպասական օծում, և Մանիկեան քահանայի ֆարմին մէջ պառւի մը մէջ մոնցուած անձնական նամակներու ամբողջական ազատագրումը :

ՎԱՐԴԱՆ ՎՐԴԻ ԳԱՍՊԱՐԵՍԻՆ — Իր միարանութեան գիրկը երուսաղէմ վերադարձի տոմսակ մը, և թուղեր ՔալիՓորնիայէն . . .

Ու այս տարուան համար, նուէրներու աղբիւրը ցամքած ըլլալով, վերջակէտ մը ինծի՝

Վ. ԱՐՄԻՆ

### ՓԱՍՏԱԲԱՆ

### ՅԱԿՈԲ Գ. ԴԵՐՁԱԿԵԱՆ

JACOB K. TERTZAG

Room 901-903

Old So. Building

294 WASHINGTON ST.

BOSTON, MASS.

Tel. Main 1396

Փաստարան Յակոբ Գ. Դերձակեանը ծանօթացնելու պէտք չկայ : Ամէն մարդ գիտէ զինքը և կը ճանչնայ :

Որո՞ւն օրինական թուղթերը շնած չէ :

Եթէ դուք բացառութիւն էք, հեղ մըն ալ դացէք իր դրասենեակը :

D. D. Nalchajian, M. D.  
5 Nichols Street  
Corner Washington Avenue

Tel. Chelsea 54 CHELSEA, MASS.

**Office Hours:** 2-4 and 7 to 9 P. M.

**Exept Thursdays**

ՏՐԵՅ. ՏԻԳՐԱՆ ՆԱՏՈՎԱԴԵԱՆ

## 5 ՆԻՔՈԼԱ ՍԹՐԻԹ

Աւաշինկթրն էվրոպիա անկիւնը

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ՝

Հայոց պատմության աշխարհ

7-էն մինչեւ 9, բացի Հինգշաբթիներէ

ԹԵՂԵՓՈՅԻ ԶՐԱՍԻ 54

## ՏՕՔՊ. ՏԻԳՐԱՆ ՆԱԼԶԱՅԵԱՆ

Տոքթ. Տիգրան Նալչամեան ծնած է Վան քաղաքը  
1872 Փետրուար 27-ին՝ Տեսորնդառաջի իրիկունը:

Իր հայրը՝ Յովհաննէս՝ նալչանի էր, այսինքն  
կօշեկի տեսակ մը պայտ կը շինէր, որ այն ատենները  
այնչափ գործածական էր Արեւելքի մէջ:

Տոքթ. Նալչաճեանի մեծ հայրն ալ նոյն արհեստն սւնեցած է, ուստի ամբողջ ընտանիքը կոչուած է Նալշաճեան։ Այս արհեստը Տոքթ. Նալչաճեանի հօրմով չէ վերջացած, որովհետեւ մեծ եղբայրն ալ սովորած է նոյն գործը եւ եղած է վարպետ նալչաճի մը Վանայ մէջ։

Պատահի Տիգրան Նալչածեան իր նախնական ուսումն առաւ նախ ծխական դպրոցներու մէջ, յետոյ գնազ քաղաքին բողոքականազ դպրոցը:

Φορφρ Λασσαկինъ կորսնցուց իր հայրը՝ Նալչաճի  
Յովհաննէսո, նաեւ մաւրը եւ փոքրը քոյրը:

Պատանի Տիգրան արտակարգ փափաք մը ունէր  
դպրոց յաճախելու, ուսում եւ կրթութիւն ստանալու,  
սակայն իր մեծ եղբայրը եւ քոյրը կը հակառակէին:  
Փոքր քոյրը, ընդհակառակը, կը քաջալերէր պատանի  
Տիգրանը որ երթալով աւելի յանդուզն կը դառնար իր  
սրտի իղձերը իրագործելու համար:

Օր մը, պատանի Տիգրան փախաւ հայրենական տունէն եւ զնաց Այդեստան՝ ապաստանելու Տոքթ. Իէյնոլուսի, Վանայ այդ հռչակաւոր Ամերիկացի մի-սիոնարին վարժարանը: Տոքթ. Իէյնոլուս սիրով ըն-դունեց զինքը եւ այնուհետեւ պատանի Տիգրան չորս աարի անրնդհատ յագեցուց իր ուսման ծարաւր:

Հոս էր, այս վարժարանին մէջ, որ պատահի Տիգ-  
րան միտքը դրաւ Ամերիկա անցնիլ բարձր քաղաքա-  
կաթութիւնը տեսնելու եւ բարձրագոյն ուսմանց հե-

տռւելու հաստատ առաջադրութեամբ։ Մասնաւորարար կ'ուզէր բժշկութիւն սովորել։

Պատանի Տիգրան այլեւս երիտասարդ եղած էր։

Տասնեւութը տարեկան հասակը հազիւ բոլորած, ձամբայ ելաւ Ամերիկա գալու եւ 1891 թուականին ցամաք ելաւ ի Նիու Եռոք։

Պ. Տիգրան Նալչաճեան չմնաց Նիու Եռոք, անցաւ Փոսթը։

Դժուարութեան օրեր վերապահուած էին անծանօթ այս միջավայրին մէջ երիտասարդ վասպուրականցին համար, որ սակայն գիտցաւ յամառ եւ տոկուն աշխատանքով հարթել իր յաջողութեան առջեւ ցցուած բոլոր խոչընդուները։

Նախ հինգ շաբաթ խոհարար եղաւ Վուսթրըթառնի մէջ, եւ «Խոհարարութիւնը ամէնէն գժուար գործըն է որ երբեք ըրած եմ Ամերիկայի մէջ», կը յայտարկ այսօր Տոքթ. Տիգրան Նալչաճեան։

Զգեց այս գործը եւ փողոցներու շինութեան գործաւոր եղաւ, ինչպէս այսօր կը տեսնենք մասնաւորար իտալացիներ, որոնք այդ գործը կ'ընեն։

Գործաւորութիւնը սակայն բնաւ արդելք մը չեղաւ, որ Տոքթ. Նալչաճեան չհետեւի իր ուսման։ Արդարեւ գործի դադարներուն եւ պարապոյ ատեն, բոպէ մը իսկ չէր կորսնցներ, կը կարդա՞ր, կը կարդա՞ր անզադար։ Այս արտակարդ եւ յամառ ընթերցասիրութիւնը ամէնուն ուշադրութեան առարկայ եղաւ եւ մանաւանդ Ֆրետերիք Տէյվիս, փողոցներու շինութեան գործին վերակացուն, առանձնապէս հետաքրքրուեցաւ իրմով եւ հարցուափորձեց օր մը։

Տոքթ Նալչաճեան բացատրեց մը. Ֆրետերիք Տէյվիսի թէ ինչ նպատակներու համար եկած է Ամերիկա եւ թէ ինչու յամառօրէն կ'աշխատի եւ կը թաղուի գիրքերուն մէջ։

Ֆրետերիք Տէյվիս իր եղբօրը յանձնարարեց այս եռանդուն հայ երիտասարդը։ Տէյվիսի եղբայրը մասնաւոր գպրոց ունէր եւ պ. Տիգրան պիտի յաճախէր հոն։

Արդարեւ յանձնարարութիւնն ունեցաւ յաջող ելք եւ Տոքթ. Նալչաճեան սկսաւ կանոնաւոր ուսման, հետեւելով կատիներէնի եւ Յունարէնի։

Այս նախապարաստութենէն յետոյ, մտաւ Պոսթընի համայսարանը (Պոսթըն Եռևիվերսիթի) ուր չորս տարուան ընթացքէ մը ետք, 1899 թուականին աւարտեց իր բժշկական ուսումը։

Ուսման ամբողջ տեւողութեան միջոցին, ամառուան արձակուրզներու ատեն՝ Տոքթ. Նալչաճեան փուշ բարդ-ով մը (ձեռքով քշելի կառք) պտուղ կը ծախէր փողոցներուն մէջ եւ կը հանէր իր օրապահիկը, ձմեռը Տէյվիսի քոլէճին մէջ կը ծառայէր, մինչեւ որ կրցաւ իր բժշկական վկայականը ձեռք բերել։

1899-ի ամառը, երբ ստացաւ բժշկական վկայականը, Տոքթ. Նալչաճեան զուրկ էր դրամական միջոցներէ, ուստի շարունակեց պտուղի եւ բուսեղէնի իր առեւտուրը եւ կրցաւ բաւական դրամ վաստիկիլ։ 1899 Նոյմ. 15ին Զըլսիի մէջ բացաւ բժշկական օֆիսը, ձիշդայթմու սբուէրին մէջ։ Հոս մնաց մէկեւեկէս տարի եւ յետոյ աւելի բնդարձակ տեղ մը վարձեց։ Այդ վայրը ապա գնեց 1904-ին եւ ուր կը բնակի մինչեւ այսօր։

Իբրեւ օտարական բժիշկ, Տոքթ. Տիգրան Նալչաճեան բախեցաւ բազմաթիւ գժուարութիւններու, սակայն ինք ընտրած էր լաւագոյն քաղաքականութիւն մը պայքարելու համար անոնց դէմ։

Աւելի եւ աւելի ուշադիր կ'ըլլար իր արուեստին, աւելի եւ աւելի կ'ուսումնասիրէր գործը եւ գիտութիւնը եւ այսպիսով կը յաղթէր արուեստակիցներու նախանձին։

Այս դասակարգը որ իրմէ միշտ պտուղ եւ բուսեղէն գնած էր, վատահութեամբ եւ հաւատքով գիմեց իր բժշկական հոգածութեան։ Այս դասակարգը, խոնարհ խաւ մը, երբեք գժուու եղած չէր Տոքթ. Նալչաճեանի պտուղներէն եւ բուսեղէններէն, վստահ էր անոր ողջմառութեան եւ նկարագրին վրայ, եւ հիմա, երբ ան բժշկական օֆիս կը բանար, կ'երթար իր առողջութիւնը վստահելու անոր։

Զըլսիի բարձր դասերը հետեւեցան խոնարհ իսաւրուն եւ Նալչաճեան անունը այնուհետեւ հնչեց բոլոր տուներու մէջ:

Քանի մը դէպքեր աւելի եւս նպաստեցին Տոքթ. Նալչաճեանի համբաւին: Քսանեւհինդ տարի առաջ կոխիփի համաճարակ մը սկսաւ աւեր գործել Զըլսիի մէջ եւ քաղաքին յայտնի քըլըպվումըն եւ չըրչվումըն մը, Միսիս Հէնրի Թըլնի Տոքթ. Նալչաճեանի խնամքին դիմեց նոյն հիւանդութենէն դարմանուելու համար: Տոքթ. Նալչաճեան մեծ ճարտարութեամբ բժշկեց Միս Հէնրի Թըլնին:

Զըլսիի քաղաքապետը հետաքրքրուեցաւ իրմով եւ Միսիս Հէնրի Թըլնիի վկայութիւնները տարածուեցան քաղաքի բարձր դասուն մէջ:

Իրաւ ալ, Զըլսիի քաղաքապետին վերջին հիւանդութիւնը յանձնուեցաւ Տոքթ. Նալչաճեանի խնամքին:

Տոքթ. Նալչաճեան 1905 Հոկտ. 25-ին ամուսնացաւ եւ 1907-ին այս ամուսնութենէն ծնաւ մանչ զաւակ մը:


Տոքթ. Նալչաճեան իր բժշկական գործունէութեան ընթացքին առաջնորդուած է հետեւեալ նշանաբանով —

Այսինքն՝

Զգոյշ եւ ամբողջական քննութիւն կատարէ, համակրական վերաբերում ունեցիր եւ դիր քու բոլոր սիրտ գործին մէջ:

Այսօր ամբողջ Զըլսի քաղաքին մէջ չկայ ոեւէ օտարական, որ չգիտնայ Տոքթ. Նալչաճեանի անունը:

Հայ բժիշկի մը այս դիրքն ու արժանի համբաւը, ի՞նչ կասկած, որ հպարտութեամբ կ'ողողէ ամէն հայու սիրտ:



Վայլէ՛, թէ կայ, քնար, զինի եւ հուրին,  
Հաեզչէ՛, թէ կայ, եզերքը հոսուն ջուրին.  
Սին հոգերով մ'ըներ այս պահը դըժոխք,  
Դրախտ թէ կայ, այն ալ այս պահն է չնչին:



Գարնան շունչը ի՞նչ քաղցր է, վարդ այտերդ երք գգուէ,  
Կանան պուրակն ի՞նչ զով է, սիրուն դէմքդ երք հոն է.  
Մ'ըներ խօսքը երեկուան, ինչ ալ ըսես սեւ էր ան,  
Վայլէ այս օրն, ի՞նչ լաւ է, մ'ըներ խօսքը երեկուան:

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄ



ՄԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ Ն. ԳՈՒԶԱԿԵՆ

ԵԱՐԻՆ ԾՈՑՆ ՈՒ ԱՍԴԵՐԸ

Եմ եա՛ր, դու յերդին ի քուն,  
Ծոցդ լոյս տար աստղերուն.  
Կամ առ զիս ծոցդ ի քուն,  
Կամ թոյլ տուր երբամ ի տուն.

ԵԱՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ.

Ո՛չ կ'առնեմ ի ծոցս ի քուն,  
Ո՛չ թոյլ կու տամ երբաս ի տուն,  
Հանցեղ երերուն պահեմ,  
Մինչ որ գայ լոյսն առաւօսուն:

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ ԱՇՈՒԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (1430 Թ.)

ԲԱՐԿԵՆԴԱՆԻ ՊԱՐԵՐԳ

Բաժակներ չինի,  
Կարմրիկ գինի  
Չեզ անուշ լինի:  
Զոր մէջէն համեղ,  
Գինին է զօրեղ.  
Փուժ անուշ արէֆ:

Տաղեր կանչեցէֆ,  
Սազերըն ածէֆ:  
Ծափ տըւէ՛ֆ, պարէ՛ֆ:  
Զիստի խորոված,  
Քէպապներ հատու,  
Խա՛շ լինի գառըն:

Այս զինարբուժին  
Տխուր եւ դառըն  
Մարդ չըլնի խառըն:  
Բաժակներ շարած,  
Ողջ ոսկէջըրած.  
Խմողն է օրինած:

ՄԵՂՈՒԻ ԲՋՋԻՒՆԵՐ

Ո՛վ որ այս տարեցոյցը համարձակի նկատել հաւաքածոյ մը թեթեւութեան, ես ալ պիտի նկատեմ զինքը յարդէն, փետուրէն աւելի թեթեւ միտք մը:

Այս սպառնալիքը ընելէ յետոյ, կը յուսամ թէ ամէն մարդ պիտի կչուէ իմ ծանրութիւնս եւ պակաս պիտի չգտնէ զիս ոեւէ արժէքաւոր մետաղի ծանրութիւնէն:

Ծանր լինելու համար պայման չէ ձոյլ կապար կամ երկաթ ըլլալ: Այդ մետաղները թէեւ ծանր, բայց շատ աժանցած են ներկայիս:

Երբ աժան երկաթո, աժան կապարը կը ձեւակերպուին, կը նրբացուին եւ գեղեցիկ նիւթերու համար կը գործածուին, հարիւր անգամ աւելի արժէք կը ստանան իրենց նախնական վիճակէն: Այսինքն ահելով ծանրութիւնը, կը վաստկին նաեւ արժէք մը:

Ծանրութիւն եւ արժէք, գեղեցիկ միութիւն մըն կը կազմէն:

Արդ, Մեղու Շնորհալին ի՞նչ մետաղի հետ ալ բաղդատէք, պիտի պահէ այն երկու յատկութիւնները: Այսինքն պիտի տաշէ իր ծանրութիւնը, եւ բատ երեւոյթիւն պիտի թեթեւնայ, ըստ էութեան չկորսնցնելով բան մը:

Ո՛վ որ կասկած ունի այս մասին, թո՞ղ կարդայ այս տարեցոյցը մէկ ծայրէն միւսը եւ համոզուի, եթէ թեթեւ չէ . . . :

\* \* \*

Այս տարեցոյցին ածականը Զուարթապատո՛ւմ դրինք:

— Ի՞նչ բաել է զուարթապատում տարեցոյց:

— Զուարթապատում իր էջերուն վրայ զուարթութիւն ունեցող բաել է:

Զուարթութիւնը ուրախութեան, ցնծութեան,

բերկութեան, շինութեան, խնդութեան, ծիծաղի եւ  
ժպիտի աւագ եղբայրն է:

Չուարթութիւնը թշնամի է տիսրութեան, հալա-  
ծիչն է լացի, փարատիչն է տանջանքի, կանթեղն է  
լուսատու՝ հոգիի խաւարին: Անիկա մարդկութեան լա-  
ւագոյն յատկութիւնն է:

Եւ այս տարեցոյցը ասոր համար ալ շինուած է:

Ծանրութիւն, արժէք եւ ասոնց հաղուստը —  
Չուարթութիւն կամ Չուարթապատում:

Մինչեւ այսօր ծանր մտքերը ծանրութեամբ կլե-  
ցինք:

Հերի'ք է, կը բաւէ՛, կ'օգտէ՛, ալ չենք կրնար մար-  
սել:

Հիմա ծանրութիւնը պիտի ճաշակենք զուարթու-  
թեամբ, ժպիտով, ծիծաղով:

Մինչեւ այսօր լուրջ խօսքեր շատ լսեցինք:

Հերի'ք է, կը բաւէ՛, կ'օգտէ՛, ա՛լ չենք կրնար լսել:

Ստենն է որ լուրջ խօսքերը լսենք զուարթ հան-  
դերձներով, ժպիտով, ծիծաղով:

Կեանքի իմաստասիրութիւնը մինչեւ հիմա ըսուե-  
ցաւ փիլիսոփայի մը խոժոռութեամբ:

Հերի'ք է, կը բաւէ՛, կ'օգտէ՛, ա՛լ չենք կրնար ուն-  
կընդընել:

Լաւ է որ լսենք զանոնք նոր դարձուածներով,  
զուարթաբանութեամբ:

Կայ ու չկայ, կեանքը սա է

Հեղ մը կամ աւելի ժպտէ

Բրած շահդ այդ է:

Եւ ատոր համար իսկ կարդայ Մեղու Շնորհալին:

\* \* \*

Ի՞նչ ըսել է Մեղու Շնորհալի:

Ո՞վ է Մեղու Շնորհալին:

Կը հարցնեն շատ շատեր:

Միջա՞տ է, թոչո՞ւն է, երկոտա՞նի է. Աստուծոյ  
սիրոյն ո՞վ է, ի՞նչ է, ըսէ՛ք:

Մեղու Շնորհալին երկոտանի մըն է ոեւէ լաւ էրիկ  
մարզու պէս, բայց իր առաջին անունը Մեղու դրած  
է, եւ մականունը՝ Շնորհալի:

Մեղու՝

Մեղուն այն միջատն է որ կը բզզայ օղին մէջ, իր  
փեթակին չուրջը, մարգագետնին եւ դաշտերուն վրայ  
ուր ժպտուներես վեր կը նային երկնքին՝ գոյնզգոյն եւ  
դեղեցիկ ծաղիկներ:

Գիտցէ՛ք նաեւ որ Մեղուն այն միջատն է որ գոյն  
չունեցող ծաղիկներուն չի մօտենար, որովհետեւ ա-  
նոնք հովի ծաղիկներ են:

Մեղուն միւս բոլոր ծաղիկներէն, մանաւանդ հո-  
տաւէտ եւ սիրասուն ծաղիկներէն կը հաւաքէ հիւթեր,  
կը լեցնէ երկու ոտքերուն քով եղած գրպանները, կը  
վազէ կը տանի իր փեթակը եւ հոն հիանալի քիմիա-  
գիտութեամբ մը զանոնք կը վերածէ մեղրի:

Երբ մեղրը կ'ուտէք, կը խորհի՞ք պահ մը թէ Մե-  
ղուն աշխարհի ամէնէն գիտուն քիմիագէտներէն մին է:

Այս է մեղուին պաշտօնը, այսինքն հիւթ հաւա-  
քել ծաղիկներէն եւ մեղր շինել:

Սակայն մեղուին զաղափարը միայն այս չէ մեր  
մտքին մէջ:

Երբ Մեղու կ'ըսենք, իսկոյն կը մտարերենք նաեւ  
անոր կիծը, խայթոցը:

Եւ ո՞ր տղան կամ աղջիկը դաշտը գացեր, ծաղիկ  
հաւաքեր եւ չէ ճաշակեր մեղուին կիծը:

Մեղուն իր խայթոցը կը գործածէ, երբ վտանգ  
մը տեսնէ: Մեղուն անձնազոհ է, որովհետեւ գիտէ թէ  
երբ խայթէ թշնամին, ինքն ալ կը մեռնի:

Այսուհանդերձ ան չընկրկիր մահուան առջեւ եւ  
կը խայթէ:

Մեղուն իր խայթոցը փորի վարի մատէն կը հանէ,  
ամուր մը կը կոխէ, կը խոթէ եւ կը խայթէ: Խայթոցը  
կը մնայ խայթուղին մարմնին մէջ, որովհետեւ այդ

կիճը այնպէս մը շինուած է որ կը մտնէ, բայց դուքս  
չեւեր:

Խեղճ Մեղու:

Կիճին հետ մեղուին աղիքներէն մաս մը դուքս կը  
թափի եւ անկէ ետքը մեղուն հոգին կ'աւանդէ:  
Հերոսակա՞ն մահ:

\* \* \*

Հիմա հասկնալի եղա՞ն մեղուին յատկութիւնները:

Մեղու Շնորհալին մեղու միջատին բոլոր յատկու-  
թիւններն ունի, բացի մէկէն: Այսինքն իր կիճը կը հա-  
նէ, կը խոթէ, կը խայթէ, բայց դուքս կը հանէ ան-  
վնաս ու չի մեռնիր, ընդհակառակը աւելի կ'ապրի:

Դարձեալ Մեղու Շնորհալիին կիճը, խայթոցը չի  
ցաւցներ, չ'ուսեցներ, չի տանջեր, ընդհակառակը կը  
բուժէ, կը դարձանէ, կ'ապաքինէ:

Մեղու Շնորհալին շատ անգամ համբուրելով աւ  
կը կճէ:

Բայց Մեղու Շնորհալին գիտէ բարեկամներն ու  
թշնամիները եւ բոտ այնմ կը հանէ, կը խոթէ, կը  
խայթէ իր կիճով:

Ահա այս յաւելուածական յատկութիւններուն հա-  
մար պատիւ ունի ինքզինքը կոչելու Շնորհալի, այ-  
սինքն չէնքով շնորհքով կիճը հասնող, խոթող, խայ-  
թող մեղու:

Հիմա հասկցանք ուրեմն թէ ի՞նչ ըսելէ եւ ո՞վ է

Մեղուի Շնորհալին



Յարակ'զ,

Զեռնակ'զ.

Ո՞վ է այն.

Լուծեցէ'ֆ,

Գիտցէ'ֆ:

# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԶՐՈՅՑ

Լսեցէ՞ք ինձի .  
Ով կ'ուզէ լինի ,  
Կարգուած ամուրի .  
Զահէլ ծերունի .  
Լինիք դուք աղջիկ  
Կամ «փախած» լինի  
Զեզ է որ կ'ըսեմ .  
Այստեղ պիտ' դրեմ  
Զեր կեանքի ,  
Ապրելակերպի  
Պատկերն իսկական  
Ընտառեկան  
Հասարակական  
Վարք ու բարքին  
Առօրեայ կեանքին :

Օր մը միայնակ  
Նստած եմ սենեակ ,  
Ինքս ինձի  
Հարց տուի ,  
Թէ այսպիսի  
Անորոշ վիճակ  
Անիմաստ կեանք ,  
Մինչեւ Ե՞րբ պիտի  
Շարունակուի :

Եկուր թէ կ'ըլլայ  
Ի՞նչ կ'ուզէ ըլլայ ,  
Հեղ մը դուրս ելեմ  
Աշխարհը տեսնեմ .  
Շրջիմ գաղութներ ,  
Դիւզեր քաղաքներ ,  
Տեսնեմ մեր հայեր

Ի՞նչ են սովորեր  
Այս «դրախտ» երկրէն  
Եւ իր բարքերէն :  
Ու վերջապէս ,  
Անմիջապէս  
Վճիռս տուի  
Զաթ ու փոթս առի  
Եւ ուղղակի  
Նիւ եռքի առջեւ  
Հեւ ի հեւ .  
Աչքս չթարթած  
Կանգ առի յոգնած :  
Զորս կողմս դիտեցի ,  
Եթէ կարելի  
Հայ մը տեսնեմ ,  
Ճամբայ մը հանեմ :  
Շատ չպասեցի ,  
Նկատեցի  
Որ թուխ աչքելով ,  
Սեփ սեւ մազերով ,  
Դիմացի մայթէն  
Ոմն շորորալէն ,  
Կ'երթար անորոշ  
Ինչպէս մեր «կալոօ» :  
Գացի մօտեցայ ,  
Վեր վար նայեցայ ,  
Բարեւ մը տուի  
Եւ հարցուցի ,  
Թէ քաղաքին  
Ո՞ր մասին  
Հայեր կ'ապրին :  
— «Բարեւ սիրեալիս» .

«Եթէ կը համիս  
«Ծանօթանանք ,  
«Բարեկամանանք .  
«Ես արդէն հայ եմ .  
«Ես կ'առաջնորդեմ  
«Այս վայրկեանիս  
«Ուր որ փափաքիս» :  
Այսպէս խօսեցաւ ,  
Դէմքիս ժպտեցաւ ,  
Առջւս ինկաւ :  
Օդը տարաժամ էր ,  
Արդէն մթնած էր :  
Բարեկամիս հետ  
Վէտ ի վէտ  
Քալելով ,  
Խօսակցելով ,  
Արձարանէ մը ներս  
Մանք վերջապէս ,  
Ուր բազմութիւն  
Զերթ խումբ մը մրջիւն  
Քով քովի նստած՝  
Ինքինքնին յանձնած  
Թուղթին եւ նարտին ,  
Կամ բախտախաղին :  
(Բայց այս մասին  
Հարկ չկայ գրել ,  
Խօսք մը իսկ ըսել :)  
Ընկերու դարձաւ  
Ժալուկով ըստաւ ,  
— «Լաւ կ'ընենք եթէ  
«Հեռանանք ասկէ .  
«Եւ միասին  
«Բարեգործականին  
«Երթանք այս գիշեր .  
«Զի օրիորդներ  
«Հանդէս են սարքեր» :  
— Շատ լաւ , շատ բարի

Պատասխանեցի ,  
Համաձայնեցանք ,  
Դոնէն դուրս ելանք :  
Կէս ժամ վերջ  
Հանդէսին մէջ ,  
Փառաւոր բազմած  
Շուրջս խոնուած  
Տիկնայք , պարոններ ,  
Քնքուշ օրիորդներ ,  
Կը դիտէի  
Եւ կը զմայլէի ,  
Տեսայ անդիէն  
Տիկնոջ մը թեւէն  
Ընկերու բոնած՝  
Գրեթէ գրկուած ,  
Ինձի մօտեցաւ .  
Խնդրելով ըստաւ  
Ու ծանօթանանք ,  
Բարեկամանանք :  
Զեռքը թօթվեցի ,  
Անոնս յայտնեցի .  
Եւ սարէն ձորէն  
Կը խօսէինք արդէն ,  
Յանկարծ անդիէն  
Փոքրիկ մը վազեց  
Տիկնոջ վէշ բոնեց  
Եւ աղաղակեց .  
— «Մամա՝ իսթէրիմ  
Պիր քօն այսքրիմ» :  
Այս բանին վրայ  
Տիկնոջ նայեցայ ,  
Սրտնեղած ,  
Կէս մը զայրացած ,  
«Ներեցէք» ըսի ,  
Դարձայ քալեցի .  
Բազմութեան մէջէն  
Ճեղքելէն ,

Ուրիշ մէկ անկիւն  
Վրդովոււած անհուն,  
Քաշուեցայ մինակ  
Ինչպէս մի համբակ:  
Բայց եկուր տես  
Ինչ որ ալ ընես,  
Բախտն երբեմն քեղի  
Տարբեր կը ժպտի:  
Քայլ մը անդին  
Դրան մը ետին,  
Կանգնած խմբովին  
Աղջիկներ թէ կին,  
(Այս մասին  
Ճշդում կատարել,  
Եղբակացնել.  
Պէտք չկայ կարծեմ.  
Զի ի՞նչ գիտեմ,  
Այս ժամանակներ  
Կանայք աղջիկներ  
Յայտնի չեն ըներ):  
Կը խօսակցէին:  
— «Քա՛ աղջի, վառվառ  
«Այդ քու քաւթառ,  
«Անշնորհք էրիկ  
«Հերիք չէ՞ հերիք,  
«Տունդ պահես  
«Օրդ սեւցնես:  
«Տեսա՞ր ես ինչպէս  
«Քեցի քովէս»:  
— Աղջի՛, ի՞նչ կ'ըսես,  
«Դուն ախմախ ես.  
«Ես իմս գիտեմ,  
«Մարդս կը պահեմ  
«Դրամը կ'ուտեմ,  
«Իսկ միւս կողմէն  
«Աստանդիէն,  
«Մէկ մը կը ճարեմ

«Քէֆս կ'անցնեմ»:  
— «Քա՛ աղջիկներ,  
«Լուե՞ր էք լսեր  
«Թէ ի՞նչ է եղեր»:  
Մէջն ինկաւ ներկուած  
Աղջիկ մը յանկարձ:  
«Մէր դրացի տղան  
«Անուն Սիրական,  
«Հինգ հարիւր տալեր  
«Պոլիս էր զրկեր,  
«Որ իրեն համար  
«Նաւէն դուրս ելեր  
«Նշանած մը զար  
«Աղջիկն եկեր  
«Եւ երր տեսեր,  
«Որ իր նշանած  
«Դիմաց չէ եկած,  
«Ուրիշ մը՞ն է տոեր  
«Անցեր գնացեր.  
«Ու այս սարսափին  
«Թողեր չոր գետին»:  
Ալ չդիմացայ.  
Սաստիկ նեղուեցայ  
Զզուած դուրս ելայ:  
Եւ ուղղակի  
Կայարան զարի.  
Մէկն երկուք չըրի  
Թրէյնը տոի:

—————

Յաջորդ առաւօտ  
Փրավիտէնսի մօտ,  
Թրէյնէն իջայ  
Շուրջս նայեցայ  
Հայ մը չտեսայ:  
Այս բախտիս վրայ  
Ուրախ ալ եղայ:  
Եւ օրն ի բուն

Մինչեւ իրիկուն,  
Անվերջ ման գալով  
Թափառելով՝  
Զերթ անդպայ  
(Խոսքս ձեզ վկայ)  
Սլուն մը մտայ.  
Օդի մ'ուղեցի  
Մէկէն կոնծեցի,  
Եւ մինչ կը շակուէի  
Որ զուրս ելէի,  
Գինեպան եկաւ  
Ականջիս ըսաւ.  
— «Հէյ մարդ անցիր  
Սենեակը մտիր  
Քիչ մը հանգչիր»:  
Լաւ առաջարկ էր  
Հարկ չկար մերժել:  
Ուստի անցայ  
Սենեակը մտայ,  
Աթոռին վրայ  
Հանգիստ բազմեցայ:  
Բայց ի՞նչ գիտնայի  
Որ այս հրաւէրի  
Մէջը միւտք մը կար.  
Վա՛յ քեզ չար աշխարհ:  
Դեռ հազիւ նստած՝  
Ու չհանգստացած՝  
Մէկ ալ յանկարձ  
Զոյդ մը թոչուներ,  
Գիշեր-հաւուկներ,  
Դոնչն ներս մտան,  
Ուղղակի եկան  
Քովս բազմեցան.  
Ի զարմանս ձեզի  
Փորձանքն ալ ինծի:  
— «Հելօ սուիրի»  
Լոին միասին.

Եւ թհւերնին  
Վզիս նետեցին:  
Վա՛յ չար սատանայ  
Այսպէս բա՞ն կ'ըլլայ:  
Շատ աշխատեցայ  
Մէկ կողմ հրեցի,  
Նախատեցի.  
Լոի հեռացէք  
Ինձմէն ի՞նչ կ'ուզէք:  
Այս զրութեան մէջ  
Կոռւելով անվերջ,  
Աջ կողմինս դարձաւ  
Միւսին ըսաւ.  
— «Աղջի՛ Հայկուէի  
«Ինչպէս կ'երեւի,  
«Այս ապուշէն  
«Անասունէն  
«Բան չի բուսնիր,  
«Ելիր հաւաքուիր  
«Զդենք հեռանանք  
«Տուն վերադառնանք,  
«Բանի չուտ է.  
«Թէ չէ ո՛վ գիտէ  
«Մէր դլիսի վրայ  
«Փորձանք պիտի դայ»:  
— Վա՛յ անամօթներ,  
Դուք հա՞յ էք եղեր,  
Կատղած պոռացի.  
Եւ դուռը բացի  
Փողոց նետուեցայ  
Փախայ հեռացայ:


—————

Յաջորդ կէսօրին  
Պօսթըն քաղաքին,  
Բամլն պարտէզին  
Մէկ նստարանին  
Վրաս նստած,

Եւ պատկերացնել  
Կեանքն այս գաղութին.  
Վկայ իմ խօսքին  
«Մեղու Շնորհալին»:

Թէ հարկն ստիպէ,  
Երկար յօդուածներ,  
Մինչեւ իսկ գրքեր,  
Կարող եմ գրել

Տիբրոյք, Միշ.



### ՔԵՍԻՐԻԿՆ ՈՒ ԿԱՂԱՄԲԸ

Խարբերդի Քեսիրիկ գիւղացիները այս տարի,  
Կիրակի օր մը, մեծ դաշտային խնջոյք մը ունեցան,  
Վուստըրի եւ Պոսթընի միջեւ, ուր կ'ըսուի թէ ներկայ  
Եղած են հազարաւոր մարդիկ:

Հանդէսին յաջողութիւնը կանխաւ ապահովուած  
էր, որովհետև Մասաշուսկի այս շրջանը խարբերդ-  
եան մեծ տոկոս մը ունի որ պիտի պատուիր Քեսիրիկը:

Խորասուզուած՝  
Նախորդ գէպքերու,  
Մասին կը խոկայի,  
Մէկէն լսեցի  
Իմ ետեւի  
Նստարանէն,  
Հայերէն  
Խօսելու ձայներ  
Լսելի բառեր:  
Դարձայ նայեցայ  
Զոյգ մը տեսայ  
Ու ճանչցայ.  
Մէկը գրող  
Միւսն ալ ֆերքող:  
Քերքող հէք տղան  
Դրող աղջկան  
Այսպէս կը խօսէր  
Միւտը կ'արիւնէր.  
— «Ա՛խ իմ անուշիկ  
«Յոյզերուս աղջիկ,  
«Ալ բաւ է, հէրիք  
«Մրտիկս մաշես  
«Յոյսերս փճացնես:  
«Եկուր դուն գրող  
«Իսկ ես ալ ֆերքող  
«Մէկզմէկ սիրենք,  
«Կարգուինք վայելենք»:  
Օրիորդն իր կարգին  
Խեղճ աղեկին,  
Անտարբեր կերպով  
Սառն խօսքերով,  
Կը յայտնէր  
Թէ ի զուր էր  
Իր աղաչանք  
Միւրոյ պաղատանք:  
Զի իր խելքով  
Ճշգրիտ կարծիքով,

Առանց դրամի  
Մէրն ոչինչի  
Կը նմանի:  
Այս որ լսեցի  
Ա՛խ մը քաշեցի.  
Ու մտածեցի  
Լաւ կ'ըլլայ կարծեմ  
Փոթիս հաւաքեմ,  
Ետ վերադառնամ  
Քաղաքս երթամ:  
Երկու օրէն ետք  
Տրտում յուսաբեկ,  
Տիթրոյթ հասայ  
Թրէյնէն իջայ.  
Եւ ուղղակի  
Աճապարեցի,  
Սենեակս դառնալ  
Տեսածներս մոռնալ:  
Սակայն իմ բախտէն  
Բնկեր մը մէկէն  
Դիմացս ելաւ  
Եւ ըսաւ,  
Երէկ կէսօրին  
Թէ մի հայ կին  
Զոյգ մը «Նիկըր»  
Երախաներ  
Է Ծներ:  
Ալ չափն անցաւ  
Հոգիս զզուեցաւ.  
Փախայ հեռացայ  
Սենեակս դարձայ:

—————

Բնթերցող ահա  
Կեանքն ամերիկահայ  
Այս է սիրելիս,  
Հաւատա՛ խօսքիս:  
Սա դա ի՞նչ է

Համդեսին հասոյքը եղած է, կ'ըսուի, մօտ երկու հազար տոլար:

Զենք գիտեր, թէ այս գումարը պիտի ծառայէ՞ իմբնելու Հայաստանի մէջ նոր Քեսիրիկ մը: Բացատրութիւնը պիտի տայ Քեսիրիկի Միութեան Վարչութիւնը:

Քեսիրիկ գիւղ մըն է ուր կաղամբ կը մշակուի: Կ'ըսուի թէ Քեսիրիկի կաղամբի գլուխները շատ նշանաւոր կ'ըլլան: Մէկը անցեալ օր կը յայտարարէր թէ գիւղին մէջ 30-40 ժաշ (օլա) կշռող կաղամբ (լահանա) տեսած է: Արդ, կաղամբին ցօղունը կամ կորունը, այսինքն կեդրոնի այն մասը որուն վրայ տերեւները այնքան խիտ կերպով զիրար կը գրկեն եւ կլոր գունու մը կը ձեւացնեն, ամենէն համեղ մասն է: Քեսիրիկցիք սիրահար են այս կորունին զոր բուսաբանական հասարակ սխալմու բով քոք (արմատ) կ'անուանեն: Անկէ առաջ կուգայ Քեսիրիկցիներու տրուած քոք կրծող (արմատ կրծող) անունը:

Քեսիրիկցիք կաղամբին լանու կ'ըսեն:

Կը քուի թէ կաղամբը եւ անոր կորունը ոչ միայն համեղ ուտելիքներ են, այլեւ բաւական սնունդ կ'արտադրեն ուղեղին: Լուրֆի Մինաս, Արամ Կեավուրեան, Փիքը Կիլիկեան, Օր. Սրբուհի Կիլիկեան, Քեռի Պարունեան, Պապա Խալընեան, Պողոս Եաղնեսն, Հայկ Կիլիկեան, Սմբատ Խալընեան, Զաքար Դանիէլեան, Մամաս Թուխօնեան, Թալանեան Եղբարք, Գարեգին Տէր Սահակեան, Զաւէն Պայքար, Տիգրան Թալանեան (Քափրէ Պետոյին քոռը), Սարգիս Նանարեան, Նրշան Փաշկանց, Սարգիս Նանարեան, Հմայեակ Տէր Սահակեան, Եղիա Տէր Սահակեան (Գառնիկ) եւն. մտաւոր, առեւտրական եւ այլ կարգի պատուաւոր եւ յարգելի նմոյշերն են կաղամբի արտադրութեան:

Քեսիրիկցիները այնչափ կը յարգեն կաղամբը որ կը նկատեն զայն իրենց ազգային խորհրդանիշը: Անցեալ տարի, իրենց խնջոյքին վայրը, կամարի մը վրայ կախած էին գլուխ մը կաղամբ, որպէսզի բոլոր Քեսի-

րիկցիները եւ միւս գիւղացիները ատով ճանչնային տեղը:

Կաղամբի հանդեպ այս արդար ու անկեղծ պաշտամունքը արդարեւ հիանալի է եւ նոյնիսկ կը յուզէ մեր սրտերը...: Այս ցոյց կուտայ միեւնոյն ատեն, թէ Քեսիրիկցիք ապերախտ մարդիկ չեն եւ կը պատուեն իրենց բարերարները...:

Լաւ պիտի լինէր կարծեմ, եթէ Քեսիրիկի Հայրենակցական Միութիւնը այժմէն պատրաստէր կաղամբէ փոքրիկ «զինանշաններ» եւ Քեսիրիկի յաջորդ խրնջոյքին հարկադրէր բոլոր համագիւղացիներուն կրել իրենց լամբակներուն վրայ գլուխ մը կաղամբ:



### ԱՅՐՈՅ ԽՕՍՔԵՐ Ն. ԳՈՒՇԱԿԵՆ

#### Ա.ԶԲ ԵՒ ԼՈՅՍ

Ես աչք ու դու լոյս, հոգի',  
Առանց լոյս՝ աչքն խաւարի,

Ես ձուկ ու դու ջուր, հոգի',  
Առանց ջուր՝ ձուկն մեռանի.

Երբ ձուկն ի ջրէն հանեն  
Ձուր մըն ալ ձգեն, նա ապրի.

Երբ զիս ի քենէ զատեն՝  
Քանց մեռնել այլ նար չի լինի:

### ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԵՆ

Կեանքը երազ մ'է, աշխարհը կեղծիք,  
Անմիտն է միայն ատոնց անտեղեակ.  
Ապրէ շէն ուրախ, ու զինի խմէ,  
Որ զատուիս կեղծեն, դուրս զաս երազէն:

## ՀՆՉԱԿԵԱՆ ՀԱԻԲ

Մեր Հնչակեան հայրենակիցները, հակառակ իրենց ծերութեան, կը բաղձան քալել երիտասարդ կուսակցութիւններու հետ համընթաց :

Զո՞ւր ջանք ու աշխատանք :

Կուսակցութեան մը գիտակը աղքատ Լազարոսի մարմին չէ, որ չորս օրէն Յիսուսի մը հրաշքով կենդանանայ :

\* \* \*

Այս տարի (1924), Լուէլի (Մէս.) Հնչակեանները խնջոյք մը ունէին, ուր՝ իրենց ամբողջ կուսակցական եւ համակրակական հարստութիւնն ու փաղանդը հրապարակ դրած էին — ընդամէնը տասնըմէկ հոգի։ Մէտֆըրտէն ինքնաշարժ մը, դժգոհ Բարեգործականի խնջոյքի վայրին անյարմարութենէն, դացեր էր Հընչակեան խնջոյքին։

Ինքնաշարժը եւ իր թանկադին բեռները երկնային պարզեւ մը եղան խեղած Հնչակեաններուն։ Բնական է որ ի նպաստ կուսակցութեան նիւթական ձեռնարկ մը եւս լինէր։ Խնջոյքը ի՞նչ կը նշանակէ Ամերիկայի մէջ, եթէ դրամական հարցը կապուած չըլլայ անոր հետ։

Հնչակեան կուսակցութիւն ըսելով՝ հասկնալու է Մարօյին Աւօն եւ Առտուան Վարդը կամ Առտուան մոխիր (գիւլ-մոխիր) Սարգիսը։

Ասոնց ի նպաստ հաւ մը, գէր հաւ մը, որոշուած էր աճուրդի հանել։

Երբ կարմրած հաւը մէջտեղ դրուեցաւ, յանկարծ շուն մը՝ որ անկիւն մը պահութաած է եղեր՝ դուրս թռաւ եւ կայծակի արագութեամբ յափշտակեց հաւն ու առաւ-փախա՛ւ։

Հնչակեանները ափ ի բերան մնացին . . .

Զարմանալի չէ<sup>o</sup> որ շուներն անդամ աւելորդ կը տեսնեն այդ կուսակցութեան համար պատառ մը հաւու միս եւ առաւ-փախաւութեան մրցումի կ'ելլեն։

## ԸՆՏԻՐ ԻՕՍԻԲԵՐ

Բաեր են առուտուր, ո՛չ թէ առուկուլ :

\* \* \*

Գարնան գառն է գովելի, աշնան հաւը :

\* \* \*

Ուրտեղ գինի, այնտեղ քնի :

\* \* \*

Մինչեւ դուն այդ հասկնաս, ուղտին պոչը գետին կը հասնի :

\* \* \*

Իմաստունին հետ քար կըէ, յիմարին հետ փիլաւ մի՛ ուտեր :

\* \* \*

Իմ ու քուն, կը քանդէ տուն :

\* \* \*

Մի՛ ապրիր որ ուտես, կեր որ ապրի՛ս :

\* \* \*

Մտածումները մաքսատուրքէ դերձ են :

\* \* \*

Օրը մի՛ գնահատեր՝ իրիկուն չեղած :

\* \* \*

Զափաղանց խոկացողին, քիչ ժամանակ կը մնայ գործելու :

\* \* \*

Խաղաղութիւնը արտադրող է ։ Խոսվութիւնը սպառող :

\* \* \*

Անօդուտ կեանք մը՝ կանխահաս մահ մըն է :

\* \* \*

Սեփական տնակը թանկ է, քան ոսկին :

\* \* \*

Յիմարութեան դէմ աստուածներն անդամ ի զուր կը կոուին :

\* \* \*

Ո՛չ ոք կընայ երջանիկ համարուիլ՝ իր մահէն առաջ :

\* \* \*

Խօսքը կը սորվեցնէ, օրինակը դարձի կը բերէ :

\* \* \*

Ո՛վ որ առաջ չերթար, ետ կ'երթայ :

\* \* \*

Ո՛չ դպրոցին, այլ կեանքին համար կ'ուսանին:

\* \* \*

Ո՛վ որ լաւ կը զանազանէ, լաւ կ'ուսուցանէ:

\* \* \*

Կուռքդ գետին տապալէ, ըլլայ ան Ոսկի, Հրեշտակ կամ  
Փառք:

\* \* \*

Առաքինութիւնը գինիի կը նմանի, որչափ հիննայ այնչափ  
արժէքը կը բարձրանայ:

\* \* \*

Բան մը լաւ գիտնալն ու կիրարկելը բարձրագոյն արժանիք  
մընէ, քան հարիւր բան գիտնալ կիսկատար:

\* \* \*

Վարդը ինքինք զարդարելով կը զարդարէ նաեւ պարտէզը:

\* \* \*

Մարդուն կամքը այնքան աղատ է, որքան նետուած քար  
մը իր վաղքին մէջ:

\* \* \*

Առաքինի գործը այն է միայն, որ գործողին զգալի զրկանք  
մը կը պատճառէ՝ նիւթական, Փլղիքական կամ բարոյական:

\* \* \*

Եսասէրները կրնան ուրիշին աւանը կրակել՝ միայն իրենց  
հաւկիթները եփելու համար:

\* \* \*

Զուրի ամենափոքր կաթելը չի չորնար երբոր միանայ ով-  
կիանոսին:

\* \* \*

Մարդ ամենէն աւելի պէտք կ'ունենայ իր խելքին՝ երբ գործը  
յիմարի մը հետ է:

\* \* \*

Բնութիւնը մարդիկը միեւնոյն մակարդակին վրայ կը դնէ.  
Պաստիարակութիւնը զանոնք կը դատէ:

\* \* \*

Ուր որ կիները կը յարգուին, Հո՛ն աստուածութիւնները  
համ են:

\* \* \*

Առանց խաչի ոչ մէկ պատկ:

\* \* \*

Բոնի ուժով կառավարել ուղղողներուն իշխանութիւնը՝ առ-  
տուան մը տեսողութիւնը միայն կ'ունենայ:

\* \* \*

Ազատութիւնը կը կորսուի, ուր հաւասարութիւնը կը դադրի:

\* \* \*

Օրէնսդիր կը կոչուին անոնք որ կանոններ կը դնեն ուրիշ-  
ներուն համար, եւ բացառութիւններ ինքզինքնուն համար:

\* \* \*

Ոչ մէկ տեղ կան աւելի կարօններ, քան այն աղղերուն մէջ,  
որոնք ճոխ ու բարդաւած կը կոչուին:

\* \* \*

Ժամանակը ամենէն նախախնամող պարգևեախօսն է:

\* \* \*

Շաբաթը մարդուն համար է, եւ ոչ թէ մարդը շաբաթին  
համար:

\* \* \*

Սուտին կեանքը կարձ կ'ըլլայ:

\* \* \*

Սէրը հոգիին կրակն է:

\* \* \*

Սիրելը կեանքին գերագոյն հաճոյքն է:

\* \* \*

Սէրը այր մարդուն կեանքին մէկ մասն է, իսկ կնոջ՝ ամ-  
րող էութիւնը:

\* \* \*

Այն սիրոը որ սիրել զիտէ, մի երկնային դրախտ է. զԱս-  
տուած ունի իր սրտին մէջ, զի Աստուած ոէր է:

Ամփոփեց

Պոսքըն, Մէս.

Վ. Ս. ՄԱԼԻԱՍԵԱՆ



## ՀԱՅԿԱԿԱՆ ՖԼՄԻՆԻԶՄ

Հայ տիկիններէն ոմանք վերջերս ձեռնարկած են շահեկան շարժումի մը, որուն զարգացումը կրնայ անակնկալներ վերապահած ըլլալ մեր ընտանեկան կեանքին համար:

Եղելութիւնը այն է, որ մեր «Հնորհալի» օրիորդները ամուսնանալիք ետք կը պնդեն պահել իրենց սեփական մականունները, աւելցնելով անոնց վրայ նաեւ անունը իրենց ամուսիններուն:

Նորութիւն մըն է այս անշուշտ եւ կը բուրէ ժամանակակից Փեմինիզմ, իր բոլոր նրբութիւններով: Ամուսնացող օրիորդները, կ'ենթադրե՛նք, որովհետեւ ալացոյց չունինք ըսելու համար թէ գիտե՛նիք, նախագէս պայման կը դնեն իրենց ամուսիններուն հետ, թէ պիտի պահպանեն երկու մականուններն ալ, քանի որ ամուսնական դաշինքը կը կնքուի երկու հաւասար կէսերու միջեւ: Եթէ երկու կէսեր մէկ ամբողջութիւն պիտի կազմեն, ապա ուրեմն պատճառ մը չկայ որ երկու կէս անուններ ամբողջական անուն մը չհիւսեն:

Իսկ եթէ ամուսնացողներէն մին պիտի փոխէ կամ ջնջէ իր անունը, ինչո՞ւ այրը չի ջնջէ զայն եւ առնէ կնոջ մականունը: Այսքա՞ն դարեր այրերը գործեր են այդ անիրաւութիւնը, ջընջեր են կիներու մականունները եւ տուշեր են իրենցը անոնց, թո՛ղ այս անդամ ալ կիները գործեն փոքրիկ անիրաւութիւն մը:

Սակայն կիները դաժան եւ անցութ չեն ինչպէս այրերը, անոնք կը բողոքեն անիրաւութեան դէմ, ուստի կ'ուզեն արդարութիւն միայն ընել երկու կողմերուն:

Այս է հայ գիտակից կիներու տրամաբանութեան հիմը եւ ընթերցողը ինք կրնայ դատել իր ճաշակին եւ ըմբռնումին համաձայն ներկայ պարագան:

Դիտելի է որ անուանազուգութեան կողմնակիցները մեծ մասով հայ երգչուհիներն են, ինչպէս նաեւ քանի մը բարձր կրթութեան տէր տիկինները: Ահա քանի մը նմոյշներ — Տիկին Զապէլ Արամ Փանոսեան, Տիկին Նուարդ Շաղոյեան-Ճիվէլէկեան, Տիկին Սաթենիկ Ռափայէլեան-Մորլեան, Տիկին Արաքսի Մուրատեան-Օտապաշէան, Տիկին Սիրանոյշ Մութաֆեան-Տէր Սարգիսեան, Տիկին Վարդուհի Քալանթար-Նալբանտեան, Տոքթորուհի Տիկին Օֆելիա Ներկարար Գասապեան: Այս բոլոր օրինակներուն

մէջն թերեւս արդարացումի պատճառներ վերագրենք Տիկին վարուժանի (մեծ բանաստեղծին այրին), որ կը կոչուի հիմա, Տիկին Վարուժան Արիկեան:

Եթէ միւս երգչուհի տիկիններն ալ հետեւին այս օրինակներուն, Տիկին Զուլալեան ինքզինք պիտի կոչէ Տիկին Ռօզ Տօնապետեան-Զուլալեան, իսկ օրիորդները վաղը միւս օր պիտի կոչ-պետեան Տիկին (այժմ օր.) Ալիս Քիւրքնեան — ... (?), Տիկին (այժմ օր.) Արաքսի Յակոբեան — ... (?), ևն. ևն.:

Եթէ այս բոլորը զարգացուին, եւ արդէն հայ տիկինները տրամադրիր են զարգանալու, հետզհետէ անունները մէջտեղ պիտի գան կատարելագործեալ ձեւով մը. օրինակ. —

Տիկին Զապէլ Տէր Մեսրոպեան — Արամ Փանոսեան:

Տիկին Նուարդ Տէր Շաղոյեան — Լեւոն Ճիվէլէկեան:

Տիկին Սաթենիկ Ռափայէլեան — Վահան Մուրլեան:

Տիկին Արաքսի Մուրատեան — ... Օտապաշէան:

Տիկին Վարդուհի Քալանթար — Զաւէն Նալբանտեան, ևն. : Հետեւեալները որոնք կը վարանին այս խումբին մէջ մընելու եւ կամ չեն ձգած իրենց դիրքերը, պիտի կոչուին. —

Տիկին Ռօզ Տօնապետ — Ենովք Զուլալեան:

Տիկին Ալիս Քիւրքնեան — . . . . .

Տիկին Արաքսի Յակոբեան — . . . . .

Եւայլն Եւայլն Եւայլն Եւայլն:

Եթէ պատահի որ այս մեծ ու պզտիկ երգչուհիներու աղջիկներն ալ երգչուհի դառնան եւ միեւնոյն տեսակէտը ունենան անուանազուգութեան նկատմամբ, երկարացունչ անունները պիտի դառնան անխուսափելի, օրինակ. —

Տիկին (Զապէլ Արամի աղջիկը) ... Տէր Մեսրոպեան — Արամ Փանոսեան — Սիրուն Սիրունեան (օրինակ):

Տիկին (Ռափայէլ Մուրլեանի աղջիկը) ... Ռափայէլեան — Վահան Մուրլեան — Սէր Սէրեան:

Եւ այսպէս յաջորդաբար:

Կը տեսնէք որ իրաւունք մը արժեցնելը ունի իր բաղմապիսի անպատճէութիւնները: Հայ մարդիկ ներկայիս կը ջանան քաղցրահնչիւն, կարծ եւ յիշելի անուններ ունենալ եւ ստեղծել, նի, նի, դը, խը, ծը եւ ուրիշ բաղաձայններ կրծատել, մինչ հայ կիներու Փէմինիզմը ո՛չ միայն արդելք կը հանդիսանայ ասոր, այլ եւ կը կնճոռտէ հարցը:

Այս պայմանները նկատի ունենալով, կ'առաջարկեմ, որ հայ Փէմինիստ երգչուհիները եւ միւս տիկինները կանդնին երրորդ գետնի մը վրայ. այն՝ որ ջնջեն թէ՛ իրենց եւ թէ իրենց ամուսիններու մականունները, այսինքն՝ լքեն անուանազուգութիւնը և ընտրեն իրենց համար բոլորովին նոր մականուն մը, որ լինի հայեցի, միավանակ կամ երկվանկ, սիրուն, կոկիկ, դիւրահընչւն:

Հո՛գ չէ այս զիջումը կ'ընեն այրերը և նրան էզ կուտ Փէմինիզմ կը լինի:

### Ա.ՍԿԵ Ա.ՆԿԵ

Տղան. — Մայրիկ, ինչո՞ւ տիսրեր ես:

Մայրը. — Անոր համար որ հայրդ մազերս կտրել կ'արդիլէ:

Տղան. — Մայրիկ, մազերդ չի կտրած արդէն կապիկի մը կը նմանիս, եթէ կտրես՝ ի՞նչի պիտի նմանիս:

Մայրը. — Սուս անպիտան, մազեր կտրել՝ այժմ սթայլ է:

### ԱՆԵՐԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԻԼ

Հաւաքոյթի մը մէջ աներես երիտասարդ մը կը ծանօթացուի գեղեցիկ աղջկան մը: Ան այնքան գովասանքի խօսքեր կ'ընէ օրիորդին, որ վերջինը ինքինքը շոյուած զգալով չի կարողանար մերժել երիտասարդի առաջարկը զինքը տուն տանելու համար: Ներս հրաւիրուելէ յետոյ երիտասարդը այնքան առաջ կ'երթայ որ համբոյր կը խնդրէ: Օրիորդը նկատելով որ չափը կ'անցնի, կ'ուզէ նիւթը փոխել՝ ըսելով,

— Գիտե՞ս, Նոր Զէլանտի մաւրերը ի՞նչ տարօրինակ սոսորութիւն ունին: Քիթերը իրար կը քսին:

— Շատ լաւ. կը պատասխանէ աներես երիտասարդը՝ քունք:

### ՀԵՏԱԲԲԹԻՐ ՑՂԱՆ

— Մայրիկ, երբ որ դուն եւ հայրիկը ամուսնացաք, ես ո՞ւրէ էի:

Մայրը. — Մեղրալունէն առաջ առաջ հօրդ քովն էիր, իսկ անկէ ետքը իմ քովը եկար:

### Ա.ՌԱԿ Վ. Վ.ՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՑԻՒՆ

ՍԻՍԵԹ ԵՒ ԳԼՈՒԽ (ԼԵՊԼԵՊԻ)

Գըլուկը սիսեռին նայեցաւ.

«Ինտո՞ր քուրիկը, ինձ նման ես, ըստ,

Բայց մեր ցեղէն չեմ կարծեր քեզ,

Զի կոկիկ չես, կըս կլոր ինձ պէս:»

— Նոյն ազգէն եմ, ըստ սիսեն,

Միայն սա կայ,

Որ ի խալկին ես դեռ չընկայ,

Խաշխշէի, մրմրկէի,

Յետոյ եւ քո կերպն առնէի:

Մնաս բարով,

Երբամ շուտով.

Ի հող մտնել

Եւ բողբոջե՛լ:»

— Ի՞նչ քողուս զիս եւ կ'երբաս

Գէպ ի հողը,

Ես ալ կուգամ,

Զագ կուտամ:»

Գնացի՞ն:

Գըլուկն (լէպլէպի) ամուլ, անձագ մնաց,

Խոկ սիսեռը ծաղկեցաւ, զի քնութեան էր հարազան:

Զեզ ասեմ ձեզ, քոլոր հայեր,

Մատաղ ըլլամ արեւուն ձեր.

Բնական նամբէն մի շեղիք, մի՛,

Որ պտղաբեր լինիք յերկրի:



## ՀԵԹԱՆՈՍ ԱՐԵՒԵԼՔՆ Ի ՊՌՍԹԸՆ



Երբ իրիկուն կուգայ եւ արեւը կը խոնարհի հորիզոնին վրայ, Նիլէնտ Սթրիթի թիւ 32-ի առաջին յարկին արեւելեան երաժշտութեան ձայներ տակաւ կ'ողողեն այդ փողոցը:

Քլանինեք, ջութակ, սանդուռ եւ քանոն՝ փոքրիկ թմբուկի մը ընկերակցութեամբ արեւելեան չափերը կը բերեն ականջիդ եւ յիշողութեանդ ընդմէջն կը պատկերացնեն հին եւ երանելի հարսանիքները, խըն-

ջոյքներն ու խրախճանութիւնները երկրի մը՝ ուրկէ մարմնապէս բաժան, բայց որուն հոգւով ու ճաշակով կապուած կը մնանք:

Բարձրացէք Պոլտոյ անշուք խաներուն նմանող սանդուխներէն վեր եւ առաջին պատկերը զոր պիտի տեսնէք հոն՝ խուռն բազմութիւն մըն է սրճարանին սրահին մէջ, բաղկացած հայերէ, յոյներէ եւ քանի մը սիւրիացիներէ: Նստած են անոնք շուրջբոլորը սեղաններու որոնց վրայ թեթեւ ըմպելիները զրահ կը ծառայեն առիւծի կաթին եւ վագրի արեան սպասարկութեան:

Յունա-հայ նուազախումբը կ'ածէ եղանակներ հելենական, հայկական, թրքական եւ առ հասարակ արեւելեան: Քաջակազմ կին մը որ լեհական կնիք ունի, բայց «Երուսաղէմի աղջիկներէն» կը սերի անկասկած, մերթ ընդ մերթ կուգայ մէջտեղ ու կը կաքաւէ նուազախումբին ընկերակցութեամբ.

Օ՛ այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կը ձօնեն, գեղեցկութեան այդ աղօք-քն, աղօք-քը այդ մսեղէն.

Օ՛ այդ իրանը նապուկ ելեւէջովն ըստինքին՝ Որոնց մէջ կաթն իսկ կ'եռայ յուզումներէն սաստկագին.

Այս տողերը պիտի չգլանար «Հարհ»ի անմահ հեղինակը, եթէ տեսնէր հիացիկ ու հիպնոսացած ամբոխը այս արեւելքին, որ իգական մէկ հատիկ նմոյշ մը բեմադրած՝ միսր կը պաշտէ եւ անով՝ ամբողջ սեռը:

Ամուրիներ շատ կան խրախճանութեան մասնակցողներէն, սակայն փոքր թիւ մը չեն կազմեր ամուսնացեալները, որոնք մէյ մէկ սուսով գիշերը պիտի կերակրեն իրենց կիները եւ պարտկեն դասալիք հեթանոսական բացակայութիւն մը ընտանեկան յարկէն:

Եւ հրապարակ կուգան բոլոր այրերը որ պարելու չնորհք մը ունին: Կր պարեն հասարակաց պարուիիին հետ, կը պարեն առանձինն եւ կը պարեն խումբով: Երիտասարդ հայ մը որ քաջ ընդօրինակող մըն է, թուխ եւ սեւահեր, կուգայ մէջտեղ ու ճարտարօրէն արեւելեան պար մը կը պարէ: Իր պորտը կը վէտպէտի,

կուրծքը կը դողգղայ, թեւերը կը սարսուան, դլուխը կ'օրօրի, մազերը կ'ալեկոծին եւ աչքերը կ'երազե՞ն նուաղկոտ: Անոր ամբողջ մարմինը կիրքը կը խորհըրդանչէ:

Կը ծափեն ամէնքը, կը պարպուին բաժակները առիւծի կաթին եւ վագրի արեան:

Յոյներ կուգան առաջ, Յոնիականի կղղիներէն եւ նոր Յունաստանէն: Թաշկինակի մը առանցքին վրայ կը դառնայ անոնցմէ մէկը, մարմնի նուրբ ձեւեր գծելով, եւ կ'ոլորի ու կ'ոլորի, մինչեւ որ նուագը կը նրաղի իր պարին հետ:

Հաստամարմին հայ մը եւ հասարակաց պարուհին կը նետուին առաջ, ոգեւորութիւնը բարձր պահելու համար «կոչնականներուն» եւ իրենց կիները խարոզներուն: Եւ կը պարե՞ն զոյզ պորտերով, զոյզ սրբունքներով, երկու զոյզ թեւերով: Հետաքրքրութիւնը կ'աւելնայ, տոլարնե՞ր կը նետուին նուազածուներուն, կը բացուին քսակները ժլատներուն եւ կը դրուին յոտս հեթանոս մսի ներկայացուցչուհին:

Եւ այս բոլոր հայ եւ յոյն աքլորները հոգեկան այն բաւարարութիւնը կ'ունենան, թէ կնոջ մը առջեւ, եւ նաեւ այրերու, ցուցադրած կը լինին իրենց բովանդակ մարմնական կիրքը, հոգեկան անժխտելի եւ երկաթեայ հակումները եւ ձեւը այն երեւակայութեան որ միմիայն պագչոտ արեւելքը կրնայ ուրուագծել:

Հեթանոս ինջոյքը կը տեւէ կէս գիշերէն անդին: Արեւը դարձեալ կը ծագի արեւելքէն ու Նիլէնա Սթրիթի Արեւելքը կը թմրի, կը նուաղի:



## ՅԱԻՐԺԱՆԱՐՍԵՐԸ ՇՈՎՈՒՆ ՄԷԶ

ՆԱԽԹԱՍՔԵՅ ՊԻԶ

Պոսթընի ժամեկահիւս ծոցին մասնիկներէն մին է Նանթասքէթ Պիչ, ծովեղերք մը, որ ովկիանոսին կը նայի: Պոսթընէն հեռու չէ, ընդամէնը ժամուան մը ճամբար ծովով եւ թերեւս նոյնքան ցամաքով:

Նանթասքէթ Պիչ Հրապուրիչ է ամառը, երբ արեւը կը մերձենայ հիւսիսային կիսագունդին: Այս եղանակին է որ Պոսթընի Հրաբիւր հազարները կը թափին անոր ծովեղերքին վրայ՝ պարզելու համբար ամենէն յատկանչականը մարդկային տեսարաններէն:

Հանդիպեցէք հոն կիրակի օր ծը եւ պիտի համոզուիք, թէ իրաւունքը ո՞րքան պինդ բռնած եմ ձեռքիս մէջ: Ընդարձակ ծովեղերքին երկայնքը հազարներ ծով կը մտնեն ու կ'ելլեն, ուրախ, զուարթ եւ դիւրաշարժ:

Բոլորը քաղաքակրթութեան կապանքներէն փախածի երեւոյթն ունին եւ կարծես նախամարդուն կեանքը կ'ուզեն վերապրիլ զոնէ ժամ մը, որ մը, շարաթ մը, իսկ բախտաւորները՝ ամիս մը:

Ժան ժագ Խուսօսի «Ֆարա Գեպի Բնուուիլն» հոս է որ մարմին կ'առնէ, կը ձեւաւորի: Ամէնքը ձգուում մը ունին իրենց բովանդակ մարմիններով շփման մտնելու տարրերուն հետ: Մերկ են կամ կիսամերկ են անոնք՝ Պոսթընի ջերմութենէն այս հալածականները, այր, կին, աղայ:

Լողողներու երեւոյթը նոյնքան շահեկան է որքան փոկերու, ծովառիւններու եւ բեւեռային կենդանիներու լողանքը կենդանաբանական պարտէզի մը մէջ: Վազգուսուք, սուզում, ջրկատակ նոյնքան ընտանի ու հաճելի են մարդուն, որքան բեւեռային ճերմակ արջի մը, որ իր ձագերուն հետ կը խալայ աւազանին մէջ արեւին դէպի մայրածուտ խոնարհելէ հետք: Կառավարութեան կողմէ ծովազգեստներու վրայ զրուած զրաբնութիւնը արդելք մը չէ, որ այրերու եւ կիններու Փեղիքական առանձնայատկութիւնները յատկորէն չնշմարուին:

Հսուած է, թէ լաւ չէ փորձել տեսնելու կինները իրենց մերկութեան մէջ, եթէ յուսախարութիւն մը կ'ուզուի խնայել: Ասիկա կրնայ ճիշտ ըլլալ անոնց համբար, որոնք կ'ահաբեկին իրենց սեփական մերկութենէն իսկ: Սակայն Նանթասքէթ Պիչի պարզած համայնապատճերը չ'արդարացնել ամէն ինչ հագուստով դիմալու խորհուրդը: Արդարեւ այս հաւաքական լոկանքը ուրիշ բան չէ, եթէ ոչ արուեստահանդէս մը կիսամերկ մարմիններու, նրբակազմ սրունքներու, ալազամարէ իրաններու եւ անսուտ ու անխարդախ դեղեցկութիւններու: Սակայն բաղդատութեան համբար պակաս չեն հակադրութիւնները մարդկային ճեւերու, որոնց սրունքն ու թեւերը միայն կարելի է դանազանել:

Ահա կին մը, որ կը թռչախ աւազուտին վրայ եւ կը դիմէ դէպի ովկիանոս: Կապոյտ է անոր իրանը ծածկող լողազգեստը, կապոյտ է ծամակալ գըլիսարկը, կապոյտ է ովկիանոսը, կապոյտ է երկինքը եւ կապոյտ են այն զոյտ

ծը աչքերը, որոնք մեծագոյն զարդն են ծովազնաց յաւէրժամարսին: Բոլոր կապոյտները ներդաշնակ են հոս եւ զիրար կ'արտացոլեն:

Ո՞ր ժայրն է րերեր սա՛ միւս մանկամարդ կինը, որ չի ծածկեր իր հրավայրներն ու չնորչները: Գիտէ՞ ան, թէ ի՞նչ չող ու շառայլ կը ցանէ իր բուրափերը: Զի՞ նմանիր ան մէկու մը, որ իր ամբողջ հարստութիւնը կը ցուցաբերէ առանց տուար մը պահելու կամ կծծի ունեւորի մը երեւոյթը տալու իրն:

Նանթասքէթ Պիչի երկու սեռերու այս ցուցահալնէսը կը համոզէ, թէ որ բա՞ն դեղեցիկ է մարդկային ցեղը:

Եւ եկած է այս բազմութիւնը արեւին ճառագայթներէն համբաւընելու, ովկիանոսի ալիքներուն հետ զրկախառնուելու եւ ծովեղերքի նուրբ աւազներէն խածուուելու:

Արեւը, մայրը անգործարանական ու գործարանական կեանքի, հաղոր համբոյը ու պագ կուտայ իր սիրահարներուն եւ թունիկներուն, կարապի վիշտայը ու պագակ կէմքերը, հուանի թեւերը եւ բարեկազմ սրունքները գունափոխի վիշտն: Արեւին համբոյըներու քանի մը ժամուան է ձիւնելով: Արեւին համբոյըներու թիւնուն տարափակոյնի վերածելու, իսկ քանի մը օրուան մտերմութիւն մը՝ պատուի մերկով մը թաթախելու զանոնք:

Բայց ծովը, աղջուրը եւ ալիքները թերեւս աւելի զգայացուց են յաւերժամարտիւն համար, որոնք կը խայտան ու կը կատակին ովկիանոսի փէշեամբասերուն համար, որոնք կը խայտան ու կը կատակին ովկիանոսի փէշեամբասերուն համար, որոնք կը կատակին ովկիանոսը մէջ, հեղօրուն հետ: Մինչեւ իրանները բարձրացող ջուրերու ժամերութիւնը մէջ, հեղօրուն առաջացող ալիքները կը ծիծաղին յաճախ այս խարտիշահեր գեղեցկուհետներուն, փրփուրէ ծաղկեփունքներ նուիրելով անոնց եւ խոնարհելով այցելութեան այս պատուին ի տես:

Ամբողջ օրը խելայեղ արշաւը գէպի ծով եւ գէպի ցամաք կը շարունակուի, մինչ արեւն իր ջերմ համբոյները, ովկիանոսը իր գուտանքները, ներբաններուն կամ, իր փայտայնքները և աւազը իր լեղուանուշ հաղումները՝ ներբաններուն կամ, կողերուն՝ կը շարունակն վայելքի ու հաճոյքի աղբիւր մը հանդիսանալ այս անհամար բազմութիւն:

Իրաւ, Արեւին տանն է այս, ծովին ու կապոյտին օրը, հովին տօնախմբութիւնը եւ աւազին յարդանքը:

Իրիկունը, երբ արեւը հազար եւ մէկ գեղանէիներու համբոյըները՝ շալ-կած: Կը խոնարհի գէպի հորիզոն, հետզհետէ կ'ամայանայ Նանթասքէթ Պիչ: Ովկիանոսը կ'ընկըլի ետ, եւ զայլելի մարմինները կ'անհետին աւազուտին վրայէն, ուր միայն անոնց յիշատակ:

Գեղեցկուհի է մարդը քաղաքալիթիւն մէջ, սակայն որքա՞ն աւելի գեղեցիկ պիտի ըլլար ան, եթէ ընութեան հետ իր կիսամերկ ժամադրութիւնները ըստ ընէր յաճախ ու զրկարաց Նանթասքէթ Պիչի առջեւ, ուր հովին ու ծովը ցոյց կուտան բնական սահմանները հաղուստին եւ անոր տակ ծածկուած իրական ճշմարտութիւններու:



Վարդան Մամիկոնեան Տարօնցի ըլլալով, Մշեցիները սուրբ Կարապետին հետ հաւասար կը նկատեն զինք:

Կը պատմուի թէ Խրիմեան Հայրիկ սովորութիւն ըրած էր վանեցիներ տանիլ ամէն տեղ՝ ուր պաշտօնավարութեան կը կոչուէր: Այսպէս երբ Հայրիկ Մշոյ Սր. Կարապետի վանահայր կարդուեցաւ, բոլոր վանեցիները քովը տարաւ, պաշտօնի դրաւ:

Այս կարգադրութիւնը պատճառ եղաւ որ Մշեցիները թշնամանն եւ լաւ չվարուին հետը:

Երբ Հայրիկ կը պատրաստուէր թուրք կառավարութեան կողմէ դէպի Երուսաղէմ աքսորանքը կրելու, Վարդանանց Զօրավարաց տօնը վրայ հասաւ եւ Մշոյ Սր. Կարապետ վանքը Խրիմեանի հանդիսաւոր ոլատարագովը պատուեց Աւարայրի Մշեցի հերոսը:

Սր. Կարապետի Մշեցի վանականները սակայն ուղեցին վրէժ լուծել Հայրիկէն եւ Վարդանի ձօնուած շարականին մէկ տունը չարափոխելով, մէծածայն երգեցին.—

Վարդան, քաջ նահատակ  
Որ վանեցիր զվանեցին,  
Վարդագոյն արեամբդ քն  
Պսակեցի՛ր զՄշեցի՛ն:

Կը հաւաստուի թէ Հայրիկ չմոռցաւ իրեն եղած այս անարդը եւ Երբ յարմար ատենը գտաւ, Մշեցի վանականները Ռւրֆայի ճամբով եւ ոտքով աքսորել տուաւ դէպի Երուսաղէմ:

Այնուհետեւ, Երուսաղէմի մէջ, աքսորին Ա. տարին, Երբ Վարդանանց տօնը կը տօնուէր, Մշեցի նոյն վանականները կ'երգէին.

Վարդան, քաջ նահատակ  
Որ վանեցիր զվանեցին,  
Վարդագոյն արեամբդ քն,  
ՎԱՇԽ, ԼԲՔԵՑԻՌ զՄշեցին:

Արար մը, 40 տարի սպասելէ ետք, լուծեց իր վրէժը զինքն անարգողէ մը եւ յետոյ բացադանչեց.

— ՎաՇԽ, շատ աճապարեցի:

### ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԱՆՌԻՆՆԵՐ

Խարբերդի քաղաքացիները բնորոշ որակումներ կ'ընեն իւրենց քաղաքի թաղեցիներուն.

Կաղէ կանչող՝ Ասորցիք  
Աղա իշխան՝ Սր. Ստեփաննոսցիք  
Ալուճ թոփող՝ Սր. Յակոբցիք  
Խուրայիին(1) երթող՝ Սր. Կարապետցիք  
Շալ կապող՝ Սինամուրցիք:

Խարբերդի զանազան զիւղեր եւ քաղաքներ կը բնորոշուին հետեւեալ կերպով.—

Խորոզ խաղցընող՝ Մէզրէցիք  
Խըրթէք ուտող՝ Քաղքըցիք  
Բալկա ուտող՝ Մորենիկցիք  
Զաղջըպան ալիւրի գող՝ Եղէգըցիք  
Քիպէ ուտող՝ Հիւսէյնիկցիք  
Զէթ ծախող՝ Բազմըցնցիք  
Քոք կրծող՝ Քեսիրիկցիք  
Կաւ ծախող՝ Դետեմցիք  
Յարդ ուտող՝ Երդմնկցիք  
Թութ ուտող՝ Փերչենցիք

Գիւղեր բնորոշելու այս սովորութիւնը գրեթէ ընդհանուր է դաւաններու մէջ:

Բարերդցիք կ'ըսէին.—  
Ճընկը Մընկը՝ Քէլ-Օստեղցիք  
Ճունը կերան՝ Բալախորցիք  
Պոզ պոզ իշուան՝ Երկուացիք  
Մուրբայ Դրկից՝ Վարզահանցիք  
Ճիկէր ուտող՝ Քաղաքացիք (Բարերդ)  
Զիմէն պայիր՝ Փնջրկեցիք  
Ոսկէ շարան՝ Թոմնեցիք  
Օձու թապախ՝ Նուացիք  
Մկներն ուտող՝ Կըրզուացիք  
Ոսկոր կրծող՝ Էրզրումցիք

## ԱՅԼԱՆԴԱԿ ՄԱԿԱՆՈՒՆԵՐ

Մեր մականունները մեծ շավով ցոյց կուտան թէ արհեստներու նուիրուած է եղեր հայ ժողովուրդը զարերէ ի վեր: Սակայն միւս կաղմէ փոքր չէ թիւը այն մականուններուն, որոնք նուիրագործումն են այն ստրկութեան, անարգանքի եւ անճռոնի վերաբերումի՝ որուն ենթակայ են եղեր այդ անունները կրողներու նախահայրերը՝ թուրքերէ եւ իսլամներէ:

Թուրքիոյ եւ արարական երկիրներու սահմանաներձ հայ մականունները երբեմն նոյնիսկ զարշելի են: Օրինակ, երեք թոյլատրելի չէ որ արարներու հետ բնակող հայեր կրեն սա անունները.— Քուսուսեան, էքրան, Խարեան, Զարգուրեան, Արալանեան (ոչ թէ Ասլանեան որ Առեւծեան կը նշանակէ):

Դժբախտութիւն այն է որ շատեր հպարտութեամբ կը շարունակեն ստորագրել այս անուններով:

Քէօլէամ կը նշանակէ Ստրուկեան, Փիս Օղլանեան՝ ազտուա Մանչուկեան, Ճինկէօգեան՝ Ճինաչքեան, Խախատեան ինքնին ապացոյց է թէ կրողին ի՞նչ ըսել ուուկը են: Դարձեալ մարդեր զիտեմ որոնք իրենք զիրենք Տէօյիւսեան կը կոչեն եւ այս՝ ամենայն հանդարտութեամբ: Այնթապցի մը կը կոչուէր իշողուեան, յետոյ այդ անունը վերջապէս փոխեց, երբ կրցաւ ըմբռնել թէ իշու մը գաւակ լիներուն մէջ հպարտանալու պատճառ մը չկար: Նոյն դասուն կը պատկանին սա անունները.— Քէօլ Օղլանեան, Շըլըրտըմեան, Կէօլ գիւղէօյիւսեան, Ճունիսեան:

Ըսինք արդէն, թէ թուրքերն ու իսլամները աւելորդ անուններ փակցուցած են բազմաթիւ հայերու, պարզապէս զանոնք անարգելու համար: Իսկ մեր բարեմիտ այլ ստրուկ պատերը հպարտացած են որ այսինչ զապթիչէն, այնինչ հարկահաւաքը (թահսիլասը) զիրենք կոչած է Տօմուզ Օղլու, Ճամուզ Օղլու, Գոկազըզ Օղլու, Թախրապրու Օղլու, Ազզը Ազզը Օղլու, Եւայլն Եւայլն: Այս Օղլուները յետոյ գարձած են 18-րդ դարուն մէջ բացարձակապէս որդեգրուած հայկական միօրինակ եԱլին:

Անուններու այլանդակութեան գլուխ գործոցներ դեռ ունինք մեր տրամադրութեան տակ, բայց զանց կ'ընենք, յարմար առիթի մը վերապահելով անոնց հրապարակումը: Աւելորդ է ըսել թէ ունէ անճռոնի մականուն կրող անձի մը վերաւորանք հասցնել չէ մեր շարժառիթը, այլ այն՝ որ մեր հայրենակեցները անդրադանան իրենց մականուններու ծագման եւ ըստ այնմ ընտրեն յարմար ու վայելուչ նոր անուններ:

Չեմ հասկար թէ ինչո՞ւ այսօրուան Այլ կարապեաը, էշէք Սիմօնը, Սըչան Մկրը, Թիլքի Արթինը, Տանկարգ Վաննէսը, Խումիում Մարկոսը տակաւին պիտի յամակին իրենց զաւակներուն ժառանգ ձգել անունները լուծի մը՝ որ մեր մարդիններուն հետ փացուցած է նաեւ մարդկային արժանապատութեան տարբական ըմբռնումները:

Ասունն է որ թօթափենք սա ճիւաղային մականունները, եւ կրենք ազտուա աղնիւ հայկական որակուաներ:

Ց. Գ.— Փութաքէթէն պրն. Յովհաննէս Ճամուզեան կը դրէ:— «Երկու

խօսք ունիմ ընելիք քեզի, ո՞վ Մեղու Շնորհալի, 15 տարի կ'ընէ Ամերիկա եմ եւ անունն Ճամուզեան է: 37 տարի կ'ընէ զիս Ճամուզեան կը կոչեն: Կինս ու զաւակներս Ճամուզեան կոչուելով՝ աքսորուեցան եւ կորան: Հիմա ամուրի եմ եւ նշանած կ'ուզեմ, բայց աղջիկները Ճամուզեան անունէս կը խրտչին, մինչդեռ ես ոչ ճամուզի, դոմէչի, կաշի ունիմ եւ ոչ ալ տարիքս 30-էն աւելի ցոյց կուտայ:

Ես Սիւրսիւրիի (Խարբերդ) Ճամուզեաններէն եմ, բայց չկարծես թէ ճամուզներու (գոմէչ) սիւրիիւին (Հօտ) մէջ մնացած եմ:

Մարսէլլ պիտի երթամ կարգուելու, բայց քու զրած նոթիդ վրայ վստահ եմ թէ աղջիկները զժուարութիւն պիտի հանեն եւ պիտի պահանջեն որ Ճամուզեան անունն փոխեմ: Քեզի խօսք կուտամ որ առնելիք կինս մեղրին ու կարագին մէջ պիտի պահանմ:

«Ամա՞ն, Մեղու Շնորհալի, Հողիդ սիրեմ, ինձի անուն մը դտիք եւ ԱՌէ որ զործածնմ, այլապէս շատ աղջիկներ ճամուզի կին պիտի չուզեն ըլլալ: Հօրս անունը Ասաքել էր, ա՞խ ինչո՞ւ լուսահողին լաւ անուն մը չկատկեց ինձի:

«Գոնէ դո՞ւն զթա ինձի, ո՞վ Մեղու Շնորհալի»:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ

Շատ լա՞ւ, կը դթամ քեզի եւ այսուհետեւ քեզ կը կոչեմ Յովհաննէս Առաքելան:

Հիմա ի՞նչ ապուր որ կ'ուզես ուտել, դնա՛ կեր:

## ՕՄԱՐԻ ԽԱՆՅԱՆԱՆԻ ԱԱՄԷՆ

Մենիք կը դպրինի ըլլալէ, բայց աշխարհի կայ ու կայ, նրբ ոչ անուն, ոչ մէկ հետք՝ մեզմէ ոչինչ չի մնայ.

Ասկէ առաջ չի կայինիք, չեղաւ պակասն զգալի,

Ասկէ ետքն ալ թէ ըլլանիք, նոյնին է, աշխարհ կայ ու կայ:

## ԱԱՄՅՈՒՆԱՆԻ ԱԱՄԷՆ

Վախցի՛ր այն ջրէն, որ ո՛չ կը նոայ եւ ո՛չ կը տոայ:

## ԱԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ Ն. ԳՈՒՇԱԿԵՆ

ՊԱԳ ՄԸ ՏՈՒՐ, ԽԱԼԲԱԿ

Քո եարն է Հալապ ֆաղամ,

ի շուկան շէֆէր կու ծախէ:

Աչուին է կշիռք արել,

Ունեթերով ի վեր կու ֆաշէ:

Շէֆէրին զինն ալ, հրամէ՛,

Պագ մը տուր, ու շուտ խալըսէ.

# ԱԽՏՈՐԻՆ ՎՆԱՍԸ

Հայեր տեսայ, որոնք սափրիչ էին, բայց սխառը կ'ուտէին։ Անմիջապէս հասկցայ, թէ ինչո՞ւ չէին յառաջդիմեր, յաճանորդներ քիչ կ'ունենային։ իսկ իրենք տակաւին կը խորթային եւ չէին ըմբռներ, թէ սխառը ի՞նչ մեծ չարիք հասցուցեր էր իրենց։

Նմանապէս հայեր տեսայ, որոնց ոտքերը անախորժ հոտեր կ'արձակէին, եւ այս հայերը չէին հասկնար, թէ ինչո՞ւ օտարները իրենց չէին մօտենար։

Ներկայիս չգիտեմ, բայց անցեալին մէջ մօտակայ քաղաքի ժը ամերիկացիները սովոր էին ըսելու։ «Եթէ կ'ուզէք նաև չնայ հայերը, ուժ տուէք ձեր հոտառութեան»։

Վուստը, որ հայերու խանձարուրը եղած է այս երկրին մէջ, ատենօք կը համբէր իր մէջ հայրենակիցներ, որոնց գլխաւոր սնունդը լուրիան եղած էր։ Եւ ամերիկացիները կ'ըսէին։ Արմինիբն ի՛ք մընտէյ պինգ, թիւզտէյ պինգ, ուկոնզուէյ պինգ, թիւզտէյ պինգ, էնտ ֆրայտէյ կէր սի՛ֆ»։ Այսինքն՝ հայերը երկուշաբքի լուրիա կ'ուտան, երեքշաբքի՝ լուրիա, չորեքշաբքի՝ լուրիա, հինգշաբքի՝ լուրիա, իսկ ուրբար կը հիւնդանան։

Ներկայիս, Վուստըրի հայերը կը վկայեն, որ շատ յառաջդիմած են։ լուրիան շաբաթը անդամ մը կ'ուտեն, եւ իրենց վրայէն անուշ կը հոտի, սակայն անդին ուրիշներ կան, որոնց ստամոքսները լուրիա՛, սո՛խ, սխառ'ը կը հոլովեն ամէն օր։ Այս սննդեղէնները այնպիսի կազային յատկութիւններ ունին, որ կը նսեմացնեն վարդին, մեխակին եւ շահպլակին բուրումները...

Անցեալ օր մէկը սխառը կերած էր եւ թատրոն պիտի երթար։ «Մի՛ երթար, ըսի՛ ուրիշները կը նեղուին, չեն ախորժիր, գարշանքով կը նային վրադ։ Իրաւունք ունի՛ս ուրիշները գանցնելու։ Տունդ նստէ՛ եւ, երբ հոտը անցնի, այն օրը գնայ թատրոն»։

— Ո՞չ, — ըստ մեր ծանօթը, — սխառը կ'ուտեմ եւ կ'երթամ թատրոն կը նստիմ։ Եւ գիտէք ի՞նչ կ'ըլլայ արդիւնքը։ բոլոր քովիններս մէկիկ մէկիկ կը ձգեն նստած տեղերը եւ կը հեռանան։ Ես ալ հանդիսա մը թեւերս ու ոտքերս կը տարածեմ։

— Ճիշդ չէ ըրածդ, — պատասխանեցի։ Եւ ոկտայ պատմել, թէ ինչպէս երկու հայեր, սխառը տերէ ետք, թատրոն էին դացեր Տիթրոյիթի մէջ։ Թատրոնը խոնուած էր։ Մեր հայրենակիցներուն բերաններէն քուլա՛յ քուլա՛յ սխառը հոտեր գուրս կը ժայթքէին եւ ամբողջ թատրոնը կ'ողողէին։ Տիկիններու եւ օրիորդներու անուշաբոյր ներկայութիւնն անդամ անզօր կը գանուէր սխառըներուն դէմ, որոնք պահուած կծկած էին երկու հայերու ստամոքսներէն ներս։ Բողոք կար թատրոնի տնօրինութեան դէմ։ Ներկաները կը պահանջին, որ սխտորանաշակները թողուն թատրոնը եւ հեռանան։ Հանջին, որ սխտորանաշակները թողուն թատրոնը եւ հեռանան։ Կը սպառնան ձգել թատրոնը եւ մեկնիլ, ետ առնելով իրենց տոմսակներու դինը։

Մինչ այդ, արդէն հասկցուած էր սխտորահոտ բերաններու գիրքը։ Թատրոնի տնօրինը հարկադրուած էր մօտենալ մեր հայրենակիցներուն եւ ըսել։

— Պարոններ, կը խնդրեմ, որ հեռանաք թատրոնէն։

— Բայց մենք գրամ վճարեր ենք։

— Կ'աղաչէմ, առէք ձեր գրամները եւ չո՛ւտ, չո՛ւտ հեռացէք։ Եթէ դուք երկու սխտորի սիրոյն տրամադիր էր արհամարդէւ այս հասարակութիւնը եւ զղուանք ստեղծել, եւ տրամադիր չեմ հազար տոլարի փոխարէն դոյզն բիծ մը բերել վարկիս։

Եւ ետ տալով անոնց գրամները, թատրոնի տէրը ճամբուդրեր էր մեր սխտորակերները։

Բարերախտաբար, անոնց ազգութիւնը անորոշ մնացեր էր, այլապէս թատրոնի այդ հազար հոգինները, երբ հայու անուն լսէին, այսուհետեւ իսկոյն սխտորը պիտի մտարերէին։

## ՀԱՆԵԼՈՒԿ

Քար քարի վրայ,

քար չէ,

Սար ու ձոր կ'արածէ,


ոչխար չէ.

Հաւկիթ կ'ածէ

հաւ չէ.

Այն ի՞նչ է։

## ՄԵՐ ԿՇԾԻՆԵՐԸ



Երկու ծայրայեղութիւններ ներկայացնող տիպարներ ունինք մեր գաղութին մէջ։ Մէկը այն տիպարը, որ իր ամբողջ ինչքը, նոյնիսկ կեանքը կը տրամադրէ ուրիշին, ազգին, բարենպատակ ձեռնարկի մը, եւ միւսը, որ իր մեղքն անգամ ուրիշին չի կամենար, եւ միշտ կը մերժէ իր սեփական անձին իսկ՝ աշխարհային բարիքներու տարերքը։

Ամերիկայէն եկած հարրերդցի մարդ մը նաև ցայ լոնտոնի մէջ, որ եօքանատուն անգլիական ոսկի չափանիկ, չխմելով եւ չհագուելով։

Այս մարդը ամէն անգամ, որ ոսկի մը կը շինէր,

կը գնէր իր քամարին մէջ ու կ'ըսէր պանդուխտ Ալպանացիին նման։

— Ոսկի՛, ոսկի՛, եթէ ես ֆեզ աւրեմ, քո՞դ Աստուած ալ զիս աւրէ։

Սնունդի պակասէն ոսկոր ու կաշի դարձած, այս թշուառ հայրենակիցը օր մը տարուեցաւ հիւանդանց, ուր քժիշկները չորցած գտան իր ստամբուն ու աղիքները եւ մարդը մեռաւ կորաւ։

Իր ուխտը կիսկատար մնաց, որովհետեւ առանց ոսկի մը աւրելու, ինչ Աստուծմէ աւրուեցաւ։

Անգլիականները ուրիշները կերան, իր ժառանգորդները, որոնք հարքերդի մէջ մէկիկ մէկիկ աւրեցին ոսկիները եւ գինարբութի ատեն հաւանօրէն կուշտ մը հայոցնեցին ժլատ ու կծծի մեռեալին։

\* \* \*

Ահա կծծի մըն ալ, Բալուցի մը, որ տասնընը տարիէ ի վեր կը գտնուի Ամերիկա։ Մարդը կ'ուտէ որ չմեռնի եւ կ'ուտէ որ կարենայ աշխատիլ, բայց պիտի չուտէ, եթէ գիտնայ որ պիտի չմեռնի եւ պիտի կրնայ աշխատիլ։ Կը հազուի որ ծածկէ մերկութիւնը, բայց պիտի չհազուի, եթէ վստահի թէ մարդիկ պիտի արդարացնեն իր մերկութիւնը եւ ցուրտը գրայ իրեն։ Փարիզեան անուշահոտութիւնները անկարող պիտի ըլլային վանելու ապականութիւններն իր սենեալին՝ ուր խոզի մը ոունգերն անգամ գարշահոտութեան պիտի չուգէին դիմանալ եւ պիտի ապստամբէին։

Մակայն Բալուցի հայրենակիցը դրամ կը վաստկի տասնեւչորս տարիէ ի վեր, տոլարները կը դիզէ իրարու վրայ եւ իրմէ դուրս մարդու չի հաւատար. բոլոր դրամ ուզողները կը նկատէ խաչագող, նոյնիսկ իր ստամբուր՝ որ վերջերս անմարտութեան համար քժշկական դեղագրի մը դրամը կը պահանջէր.

— Ստամբու, դո՞ւն ալ խաչագողութենէ վարակւեցար։

Այսպիսի մրմունջ գանգատ մը լսուած է այս կըծծիին քերնէն։

«Նախանձելի իմաստուն»ը իր դրամները պանգան կը տանի, բայց ունէ պանգայի վրայ կատարեալ վըստահութիւն չունի:

— Պանգաներն ալ խաչագող են, կ'ըսէ, եւ քերեւս իրաւունք ունի...

Ուստի, դրամատուն մը, որչափ ալ վստահելի ըլլայ, չի կրնար մեր հայրենակիցէն հազար տոլարէն աւելի վարկ ստանալ:

— Հազար տոլարը լեցուն դրամ է, սէնք մը աւելի տալ անոնց՝ մեղք է: Եթէ կորսուի, թո՞ղ միայն հազարը կորսուի, գոնէ մնացած սէնքերը փրկած ըլլամ, կը խորի մեր կծծին:

Ութը տարբեր պանգաներու հետ արդէն հաշիւ ունի եւ վարկը ամբողջացուցած է, այսինքն ութ հազար տոլար «կազմ ու պատրաստ են, եւ իրեն կը սպասեն»:

Իններորդ պանգային հետ քանի մը ամիսէն իր հաշիւը կը վերջացնէ եւ տասներորդ պանգայի մը հետ գործի պատրաստութիւն կը տեսնէ, բայց որովհետեւ իր ժաղաքին մէջ ուրիշ պանգա պիտի չմնայ, մեր կծծին պանգաներու ցուցակ մը կ'ուզէ ձեռք անցընել: Ասիկա ամենէն դժուար գործն է իրեն, որովհետեւ երկու սէնքնոց նամակադրոշմ մը, թերթ մը թուղթ եւ պահարան մը հարկաւոր են նամակ գրելու եւ պանգայի ցուցակ ստանալու համար:

Թերթի մը երկու սէնք տալը նոյնակս աններելի շուայլութիւն է:

Եւ, լսեցէ՛մ, լսեցէ՛մ:

Այս պարոնը Ամերիկա գալէն ի վեր քատրոն, չօնտայլն գացած չունի եւ ստոյգ է որ երկրէն բերած շապիկը տակաւին կը հագնի:

### ԱՂՈՒՔՆԵՐՆ ՈՒ ՇՈՒՆԵՐԸ

Տղայ մը իր հօրը

— Հայրէ՛կ, աղուէսներ կը տեսնուին մէր հաւնոցին բոլոր-

ահերը:

— Տղա՛ս, մեր շուներու քաջութենէն է:

Հայ Հովիւներու Սովորութիւններէն

### Ո՞Վ ՊԻՏԻ ԴԳԱԼԿ ԿԱԹԸ

Հայ Հովիւները սովորութիւն ունին դէմ դիմաց նստելու եւ պայման դնելու որ մէկը կամ միւսը պատրաստաբանութեամբ մը կաթն առաջին անդամ ճաշակէ, դգալէ:

Խարբերդի կողմերը երկու հովիւներ այսպէս նստան օր մը, դէմ դիմաց, դգալով կաթն ուտելու:

Դգալը մէկ հատ էր, ուտողները երկու:

Մէկը ըստ միւսին:

— Եթէ յաջողիս եօթը գիւղի անուն իրարու ետեւէ ըսել, իմաստ դնելով խօսքիդ եւ անուններու ձայները յարմարցնելով, կ'առնես դգալը եւ կ'ուտես կաթը:

— «Աստուած համար հայր որդիք ի սուրբ», ըստ միւս հովիւր, խաչ մը հանեց եւ սկսաւ.

— Տաղէք, Տատառիմ,


Խող, Քնատառիմ,

Իջէն, Զարդառիմ,

Իջանք Քապուսին,

Տուր դա դգալըն ինձ:

Եւ առնելով դգալը, կերաւ կաթը, որովհետեւ արտասանութեան փորձը յաջողած էր:



### ՀԱՆԵԼՈՒԿ

— Ինչո՞ւ էշերը երբ դարվեր ելլեն, ծուռ կը քալեն:

— Մեռեալներու ոսկորներու մէջէն ի՞նչ նշանէ կրնաք հասկընալ վարդապետի ոսկորը:



### ՀԱՆԵԼՈՒԿ

Զարմանք ասեմ քեզ, սիրելի

Վին մը ծնաւ գոռոզ որդիի:

Տղան ունի ալիք ծառի,

Երբ ծերանայ, դառնայ սեւի:

Այն ի՞նչ է:

## ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Շատ մը ամերիկահայեր կան, որոնք չեն կրնար հայերէն և անդլիւրէն բառերը ուղիղ արտասանել: Այսպէս,

**Զօրավարին կ'ըսեն՝ Զօրաւոր.**

**Բարսեղ Աղբարին կ'ըսեն՝ Պայսիքըլ աղբար.**  
Լոյրին (փաստաբան) կ'ըսեն՝ Լովեր.

**Լիզ(lease)ին կ'ըսեն՝ Լիսթ.**

**Սիրաքիւզին կ'ըսեն՝ Սարը իօքիւզ.**  
Սանդուխին կ'ըսեն՝ Սանդուխ:



## ՄԻԱՄԻՏ ԽՕՍՔԵՐ

Ամերիկայի մշեցիները խնձորին էփրէ կ'ըսեն, ինչ որ անդ-լիւրէն բառ մըն է:

Մշեցի մը որ նոր Ամերիկա եկած էր՝ օր մը հարցուց ուրիշ մշեցիի մը:

— Ծո՛ լաօ, էփրին Անդլիւրէնն ի՞նչ է:



## ԿԱՐՃ ԽՕՍՔԵՐ

Մարդկային բնուրենին կարդացուած մաքերու եզրակացութիւններ

Սէրը, սահմանաւորումի կապանքներուն չենթարկուող սաւառնում մըն է:

\* \* \*

**Խիզախութիւնը՝ անկեղծութեան ստնտուն է:**

\* \* \*

**Ինքնաճանաչումը կեանքի համայնադիտարանն է:**

\* \* \*

**Ենթագիտակցութիւնը՝ գիտակցութիւնը գերող խարազանն է:**

\* \* \*

**Տգիտութիւնը՝ երջանկութեան հիմնաքարն է:**

\* \* \*


**Բացարձակ ազատութիւնը՝ մեծ ինքնախարէութիւն մըն է:**

**Արդարութիւնը՝ բնութեան չոիրած մէկ հիւրն է:**

\* \* \*

Հաճելի ըլլալու հգտումը՝ \* \* \* աղտոտ սակարկութիւն մըն է:

Հասկնալը՝ դժուար, իսկ հասկցնելը՝ դժուարագոյնն է:  
ՄԹ-ՏԻ



## ՀԱՅ ՀԱՐՍԸ, ՊԱՐՈՆՏԱՏՆ ՈՒ ԴՄԱԿ ԻՒՂԸ

Հայերու մէջ ընդհանրացած դարաւոր սովորութիւն է, որ նոր հարսերը չխօսին իրենց պարոնտատներուն հետ, մինչեւ որ այս վերջինները հրաման չընեն: Երբ այս հրամանը կը ստանան, այնուհետեւ հարսները կրնան ուեւէ ատեն խօսիլ անոնց հետ, եւ նոյնիսկ կրնան վէճի ալ բանուիլ:

Հայ հարսերը սակայն, մինչեւ որ չստանան այս կարեւոր արտօնութիւնը, չեն կրնար, բնաւել իրաւունք չունալու իրենց բերանները եւ խօսելու երենց ամուսիններու հայրերուն հետ:

Հայ հարսերու այս մունջութիւնը, լուութիւնը այնչա՛փ աչքի կը զարնէ, որ արեւելքի ժողովուրդները լուս եւ մունջ մէկու մը հանդիպելու ատեն՝ կ'ը-սնեն.

— «Հայ հարսի նման իմչո՞ւ մունջ կը կինաս»:

\*  
\* \* \*

Կը պատմուի, թէ օր մը, հայ հարս մը եւ իր պարոնտատը մինակ մնացին տան մէջ: Հարսին կեսուրը, տազրերը, տալերը որոնք միշտ պարոնտատի մը եւ նոր հարսի մը միշեւ խօսքի միջնորդութիւն կ'ընեն, տունէն հեռացեր դացեր էին:

Կէս օրին հարսը կերակուր պատրաստեց: Եփածը իւղի վրայ հաւկիթ էր: Ճաշի վրայ, երբ պիսի ուտէին եփուած հաւկիթը, պարոնտատն ուզեց դիտնալ թէ ի՞նչ տեսակ իւղով հարսը եփած էր հաւկիթները Ուստի հարցուց:

— Հա՛րս, այս հաւկիթները ի՞նչ տեսակ իւղով եփեցիր:

Եթէ հարսին քով տալ մը, տազր մը կամ կեսուրը մինչը, հարսը կամացուկ մը անոնցմէ մէկուն ականջին կը փախսար եւ ան ալ իր կարգին կը հա-զորդէր պարոնտատին: Սակայն չկար մէկը որ կատարէր այս գերը, իսկ հարսն ալ չունէր հրաման բարբառելու պարոնտատին:

Հարսը մտածեց թէ նշանով մը պէտք էր բացատրէր գործածուած իւղին տեսակը:

Այս միջոցին պարոնտատը կրկին եւ կրկին կը դնէր իր հարցումը.

— Հա՛րս, հա՛րս, քեզի՞ կ'ըսեն. ըսե՞ս թէ ի՞նչ իւղով եփեցիր այս հաւ-կիթները: Հազար կը բռնէ եթէ ձէթով ուտեմ: Ըսէ՛ թէ ի՞նչ տեսակ իւղ գրեթ:

Հարսը, ճարահատ, վեր առաւ իր յետոյքը, աջ ձեռքը տարաւ այդ կողմի թաւ միսերուն եւ հեղ մը չա՛փ զարկաւ, միեւնոյն ատեն նայելով իր պարոն-տատին:

Հայ հարսը ըսել կ'ուզէր, թէ հաւկիթը դմակ իւղով եփած էր:

## ՉՈՒԿԻ ՄԼ ԱՐՏԱՌՈՅ ԳԻՒՆԸ

Իտալացի ազնուական մը որ դղեակի մը մէջ կը բնակէր, կը պատրաստուէր տօնել իր ամուսնութեան տօնախմբութիւնը: Բոլոր տարրերը նպաստաւոր եղած էին իրեն, բացի ովկիանոսէն որ մերժած էր պարզեւել անհրաժեշտ ձուկը:

Սակայն, Տօնախմբութեան իսկ առոտուն, իւղած ձկնորս մը երեւցաւ մէծ վահանածուկ մը ի ձեռին, այնչափ մէ՛ծ որ կարծես ձուկը այս առթիւ ստեղծուած ըլլար:

Դղեակը լեցուեցաւ ուրախութեամբ եւ ձկնորսը իր աւարին հետ ներս առնուեցաւ սրահը, ուր ազնուականը խնդրեց ձկնորսէն ուզած գինը դնել ձուկին վրայ, իսկոյն վճարելու խոստումով:

— Հարիւր խարազանի հարուած կոնակիս, գինն է ձուկիս եւ մէկ հարուած իսկ պակաս չեմ ընդունիր, ըսաւ ձկնորսը:

Ազնուականն ու իր կոչնականները շատ զարմացան, բայց ձկնորսը վճռական էր, իսկ դիմադրութիւնն անօգուտ:

— Լաւ, լաւ, բացազանչեց ազնուականը, այս մարգը երդիծարան ըլլալու է, բայց ի՞նչ ընենք, ձուկը պէտք է ունենանք: Կամաց զարկէք եւ թո՛ղ ձուկին գինը վճարուի մեր ներկայութեան:

Երբ յիսուն հարուած զարնուեցաւ.

— «Կեցէ՛ք, կեցէ՛ք», գոչեց ձկնորսը, «այս գործին մէջ ընկեր մը ունիմ, եւ կը վայլէ որ անիկա ալ առնէ իր բաժինը»:

— «Ի՞նչ, ասանկ երկու յիմարներ կա՞ն եղեր աշխարհի վրայ», բացազանչեց ազնուականը, «տո՛ւր անունը եւ իսկոյն հոս բերենք»:

— Լաւ, ըսաւ ձկնորսը, ընկերս պիտի գտնէք ձեր մէծ դրան առջեւ, ձեր գոնազանն իսկ է ան, որ չէր ուզեր ներս թողուլ զիս, մինչեւ որ իրեն չխոստացայ տալ վահանածուկիս համար ստանալիք դրամիս կէսը:

— Թո՛ղ, վերէք զայն ըոսէապէս, եւ թո՛ղ ամենախիստ արդարութեամբ ընդունի իր բաժինը:

Այս արարողութեան աւարտումէն ետք, ազնուականը վորհնաց իր գոնազանը եւ առատօրէն վարձատրեց ձկնորսը:

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ



Փրավիտէնսի մէջ հայ աղջիկ մը ուզեցին ամուսնացնել հայ պարոնի մը հնաւ:

Գաղափարին գեղեցկութեան, զործին խոստանալիութեան եւ ապագայի փայլունութեան առջեւ աղջիկը խոնարհեցաւ:

Սակայն աղջիկը սովորական տիպարներէն չէր եւ անձամբ կ'ուզէր սառուցէր իր թեկնածու կողակցին մտացիութիւնը, իմացականութիւնը: Ուշադիր եղէք, մտացիութիւնը, ո՛չ թէ զբանի քանակը, ինքնաշարժը եւայլն:

Մտացիութիւնը չի կշուռիր կշիռով, չի չափուիր չափով, չի հաշուռուիր թիւով, այլ կը զնահատուի փորձով:

Եւ յիշեալ օրիորդը, որուն անունը զագանի պէտք է մնայ, առաջին առթիւ պատյանի ելաւ թեկնածուին հետ, զոր ա՛յնքան կը գովէին:

Զոյզը՝ Փրավիտէնսի գեղեցիկ Սթէյթ Քափիթուի սիրուն անդուխներէն վար իջնելէ յետոյ՝ անցաւ քաղաքին փողոցներէն: Օրիորդը ամէն առթիւ հանդիպած երեւոյթներու նկատմամբ խօսակցութիւն կը բանար իր թեկնածուին հետ եւ կը ջանար եղբակացութեան մը գալ անոր մտացիութեան մասին:

Երբ քաղաքի նամակատան առջեւէն կ'անցնէին, օրիորդը նամակ մը տուաւ թեկնածուին եւ ըսաւ:

— Պարո՛ն, կը հաճի՞ք այս նամակը փոստը ձգել:

— Ամենայն սիրով, օրիո՛րդ, անմիջապէս:

Թեկնածու պարոնը զնաց փոստ օֆիսէն ներս, փնտուելու նամակատուփը, ուր սովորաբար նամակները կը ձգեն: Փնտոե՞ց, փնտոե՞ց, փնտոե՞ց, բայց նամակատուփը չկրցաւ դանել:

Անմիջապէս, այսինքն տասը, տասնեւհինդ վայրկեանի ապարդիւն խուզարկութենէ մը ետք, պարոնը, նամակ ի ձեռին, վերադարձաւ սպասող օրիորդին եւ ետ տուաւ զայն:

— Օրիո՛րդ, առէք ձեր նամակը, նամակատուփը չկրցայ դանել:

— Իրավու...

Եւ տուն վերադարձան: Հոս օրիորդը յայտնեց թէ կը մերժէ թեկնածուն:

— Ինչո՞ւ, մեղա՞յ, տղան ի՞նչ ունի որ, քա՞, սըւոր ըրածին նայէ, դոչէց տուտուներէն մին:

— Ի՞նչ տեսակ տղայ կ'ուզես դուն հազա, չենքով չնորհքով մանչ մըն է,

— ըստ միւսը:

— Թագաւորին տղա՞ն կ'ուզես: Մանթաշօփի՞ն հարս կ'ուզես ըլլալ, թէ սանկ համալ սարանական պարոն մը կ'ուզես առնել, հեզնեց երրորդը:

— Քոյրիկնե՞ր, — պատասխանեց զարզացած հայ օրիորդը, — ձեր ըստածներէն եւ ոչ մէկը կ'ուզեմ իրբեւ ամուսին: Նախ կ'ուզեմ, որ իմ ամուսինս ես ինքո ընտրեմ, եւ երկրորդ՝ կ'ուզեմ այնպիսի մէկը ընտրել, որ շատ դրամ չունենայ, բայց փոստատան տուփը դանելու չափ խելք ու իմացականութիւն ունենայ...



### ՀԱՆԵԼՈՒԿ

Զուր ջրաւոր,  
Փող փէէ թեւաւոր,  
Թնդայ ներքին զօրաւոր,  
Թնդայ վերի զօրաւոր,  
Ելնի արդար դատաւոր:  
Այն ի՞նչ է:




### ՀԱՆԵԼՈՒԿ

Գաղ գաղ(1), գունտ էր գաղ.  
Գաղին ներքեւ զոյդ աչեր,  
Աչերուն միջեւ կը չնչէր.  
Անոր տակէն կը կանչէր.  
Աւելի ներքեւ պարկ մը գէր,  
Պարկին տակը զոյդ սիւներ:  
Այն ի՞նչն է:

(1) Գանկ:

### ԱՄԵՐԻԿԱԿԱՋ ԲԱՐՖԵՐԵԿԻ



### ԻՇԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կրէնտ Ռաֆիիտցի (Միշ.) մէջ նշանաւոր հայ մը կայ որ մարդ կը լուսանկարէ: Մեծ զանգուած մըն է — երկայնութիւն քառասուն եւ լայնութիւն վաթսուն կանգուն: Ուսեալ մարդ է, սակայն այդ ուսումը կանգ առած է 1890 թուականին եւ անոր տեղ դրաւած է կեանքի արհամարհանքը:

Այս և. Վ. Կրէնտ Ռաֆիիտցի մէջ կազմած էր իշային ընկերութիւն մը որուն նախազահը լինելու պատիւը վերապահած էր լրեն:

Ատենապետն էր Ս. անուն մէկը, իսկ գանձապահ՝ Կ. Ա.՝ Ընկերութեան նպատակն էր Էշ ըլլալ, ապրիլ իշավարի եւ մեռնիլ իշաբար:

Խշականներու համաձայն, աշխարհի վրայ եթէ կար կեանք

մը որ պէտք էր ընդօրինակել՝ այդ ալ իշուն կեանքն էր:  
 Օր մը իշային ընկերութեան նախագահին ներկայացաւ քա-  
 ղաքին հայ երեւելիներէն ձ. Ն. եւ ըստ.  
 — Կը հաճի՞ք զիս ալ իշային ընկերութեան անդամ ընդունիլ:  
 — Կը նանք թէեւ, բայց միւս կողմէ չենք կրնար ընդունիլ:  
 — Ինչո՞ւ:  
 — Որովհետեւ առայժմ տրամադիր չենք քած էջ ընդունելու:

Իշային ընկերութեան նախագահը օր մը բոնեց Մեղու Շնոր-  
 հալիի օձիքէն եւ հետեւեալ խօսակցութիւնն ըրաւ.  
 — Դուք լեզունե՞ր կը սովորիք.  
 — Այո՛, ըստ Մեղու Շնորհալին:  
 — Գիրքեր եւ հանդէսներ կը կարդա՞ք.  
 — Այո՛:  
 — Բանասիրական ուսումնասիրութիւննե՞ր կ'ընէք:  
 — Այո՛.  
 — Ուրեմն մե՛ղք ձեզի.  
 — Ինչո՞ւ:  
 — Որովհետեւ կը տեսնեմ թէ նոյատակ ունիք շուտ մեռնելու:  
 — Մի՞թէ այդ աշխատանքները կը մեռցնեն մարդը:  
 — Կասկած մի՞ ունենանք, որ դուք ձանձրացեր էք ձեր կեան-  
 քէն եւ ատոր համար է որ կ'ուսումնասիրէք:

Օր մը իշային ընկերութեան անդամներէն մին ձ. Ն.ին խա-  
 նութը մտնելով բացաւ ձեռքը եւ երկնցուց ձ. Ն.ին:  
 ձ. Ն. դարձաւ այս համբաւաւոր ընկերութեան նախագա-  
 հին ու հարցուց.  
 — Ի՞նչ կ'ուզէ այս պարոնը:  
 — Զե՞ս հասկնար, ձանկ մը զարի կ'ուզէ:

Իշային ընկերութեան նախագահը իր մեծդիութեամբ եւ  
 դէմքով աւելի ցուլի կը նմանի քան իշու: Հետեւաբար իրեն պի-  
 տի պատշաճէր աւելի ցուլային ընկերութեան մը նախագահը  
 ըլլալ, քան իշային:

Տեսնելով զինքը, շատեր կարծեն թերեւս որ այս նախագա-  
 հը շնորհ պիտի չգտնի կիթերու մօս:

Բոլորովին սխալ էայդպիսի կարծիք մը: Եւ ահա թէ ինչո՞ւ:

Լուսանկարչատան մօս գտնուող ճաշարանի մը մէջ, ամե-  
 րիկացի կին մը որ միշտ կը դիտէր իշային ընկերութեան նա-  
 խագահը, հարցուց ճաշարանապետին:

— Ո՞վ է այդ մարդը:  
 — Լուսանկարիչն է:  
 — Կը հիանամ իրեն:  
 — Իր ո՞ր բանին համար:  
 — Որովհետեւ ճիշդ ցուլի կը նմանի եւ իրեն նման չկայ այս  
 քաղաքին մէջ: Ես կը պաշտեմ ցուլերը:  
 Եւ ամերիկուհին, յետոյ, ապացոյցը տուաւ իր անկեղծու-  
 թեան . . . :

### «ՎԱՇ ՀԱՅՎԱՆ, ՎԱՇ»

Հայ երգի մեծագոյն երգիչը, պ. Արմենակ Շահ-Մուրատ-  
 եան, անգամ մը Քալիֆորնիոյ Ֆրեզօն բաղադին մէջ հիւր կը  
 գտնուէր մեծահարուստ հայրենակցի մը տունը:

Ուրիշ հրաւիրեալներ եւս եկած էին:

Հիրընկալ տան տէրը ամէն եկողի կը ծանօթացնէր երգիչ  
 Շահ-Մուրատեանը: Բոլորը լսած էին անզուգական երգչին ա-  
 նունը եւ յարգանեով կ'ողջունէին զայն:

Հրաւիրեալներէն մէկը երբ ներս մտաւ, հիւրընկալ տանու-  
 տէրը ըստ սովորութեան.

— Պարո՞ն, ծանօթացէք պ. Արմենակ Շահ-Մուրատեանի  
 հետ:

— Շահ-Մուրատեա՞ն:

— Այո՛, երգիչ Շահ-Մուրատեան:

— Ո՞վ է Շահ-Մուրատեան . . .

Այս միջոցին պ. Շահ-Մուրատեան ինքը միջամտելով.

— Դուք Շահ-Մուրատեանի անունը չէ՞ք լսած:


— Ո՛չ:

— Իրա՞ւ կ'ըսէք:

— Այո՛:

— Վա՞յ հայլան, վա՞յ:





## ՄԷՋՐԵՑԻ ՍԱՐԳԻՍ

Ինքնատիպութիւնը ծանուցում մըն է: Անով հոչակ կը ստանան մարդիկ, անուն կը ձգեն ու կը ծանօթանան երկնքին ու երկին:

Եւ Սարգիս առաջիններէն է, որովհետեւ իր մէջ կը խտանայ ծանուցումը, հետեւաբար ինքնատիպութիւնը:

Սարգիս սիկարէր կը ծիւէ, իր սեփական մատներով:

Սարգիս պաղպաղակ կ'ուտէ, իր սեփական բարերով:

Սակայն, Սարգիս ջուր չի խմեր,

Սարգիս կերակուր ԶՈՒՏԵՌ, իր սեփական ձեռներով:

Սարգիս ճաշարանին մէջ կը նստի սեղանի մը առջեւ, խնա-

րարը կուգայ կը կապէ կրծկալը վիզէն, կը բերէ կերակուրները առջեւը եւ կը կերցնէ:

— Վարպե՞տ, ի՞նչ է անունը այս կերակուրին, կը հարցնէ Սարգիս:

— Տոլմա՛ է, Սարգի՞ս:

— Ի՞նչ կայ տոլմային մէջ, վարպե՞տ:

— Ծեծուած միս ու բրինձ կայ, Սարգի՞ս:

— Երէ ուտեմ, լաւ կ'ըլլա՞յ:

— Շա՞տ լաւ կ'ըլլայ:

— Լի՞ց ուրեմն, խորէ քերան:

Եւ ճաշարանատէրը պատստ մը կ'առնէ կերակուրէն եւ կը լեցնէ Սարգիսին բերանը:

Նոր կերակուրներ կուգան սեղանին վրայ.

— Ի՞նչ է անունը այս կերակուրին, վարպե՞տ:

— Լուրիս է, Սարգի՞ս:

— Ի՞նչ տեսակ լուրիս է:

— Կանանչազարդ (փիյազ):

— Երէ ուտեմ լաւ կ'ըլլա՞յ, վարպե՞տ:

— Շատ լաւ կ'ըլլայ, Սարգի՞ս:

— Լի՞ց ուրեմն, կոխէ քերան:

Ու Սարգիս, ամէն կերակուր ներս ընդունելէ առաջ, բերնին առջեւ հարցաքննութեան կ'ենք-արկէ, անոնց տեսակը, որակը, զարդը նկատի կ'ունենայ եւ ապա կ'ուղարկէ մառան ստանոնքը՝ զանոնիք մարսելու:

Սարգիս ամգամ մը տասներկու պնակ մուհալլէպի կերաւ, ուրիշ անգամ մը կարսայ մը մածուն լըմպեց:

Թէեւ ամէն կերակուրի 25 սէնք կուտայ, բայց ջուրին համար սոլայ մը վարձած է, որ փարջը վեր կը վերցնէ եւ առանց շրբունիքներուն դպցնելու կը բափէ Սարգիսին բերանը, երբ ան ծարաւի: Այս առան անգամ մը երկու երեք մղոն հեռու էր ժամանէ: Սարգիս ծարաւցաւ, ելաւ զնաց տղան փնտոելու, գտացայն եւ անոր ձեռնով ջուրը խմեց:

Սարգիս ինչո՞ւ կը ծիւէ, կը խնջէ, իր սեփական ձեռներով, եւ կերակուրն ու ջուրը միայն չի վստահիր իր մատներուն, կը մնայ լուծելի զաղունիք մը:

Հարցնե՞լ իրեն: Անկարելի է, որովհետեւ Սարգիս բերանը

փակած է : Ամէն բան կ'ըսէ , ամէն հարցումի կը պատասխանէ :

— Սարգի՛ս , ինչո՞ւ կերակուրդ դուն ինքդ չես ուտեր .

Այս է Սարգիսին պատասխանը , այսինքն երկար լուրին մը : Եւ եթէ այս հարցումն ընէ՛ք , ձեզ կ'ատէ :

Ամէն կերակուր կերցնողի քսանեւհինդ սէնթ վարձք կուտայ , իսկ իր հարսուրինը քսանեւհինդ հազար տոլարի կը հասնի :

Կրնա՞՛ք զիտնալ , թէ տուած վարձքը հարսուրեան ֆանի՞-երորդ մասն է :

Այս մեծ գումարը շահած է Սարգիս կալուածային առեւտուրէ (Միյըլ Էսրէյր) :

Սարգիս ժաջ է եւ առողջ , այսինքն ժաջառողջ :

Կին մը չունի , բայց ժամենեինք հազարն ունի :

Իր խտիալական կինը այն է , որ ամէն խօսի «այո» ըսէ , ո-րովհետեւ Սարգիս կ'ակնկալէ որ կին մը միշտ եւ հանապազ ըլլայ հնազանդ ու խոնարի :

Սարգիս եթէ կին չունի , լուսանկար ալ չունի , ինչուրէնս ալ չունի , չէյր (արժեթուղթ) ալ չունի :

Կնոջ , ինչուրէնսի , չէյրի եւ լուսանկարի չի հաւատար :

Վուստրի ամերիկեան թերթի մը մէկ տեղեկաբերք անօսմ մը ուզեց Սարգիսի լուսանկարը առնել , երբ ան կերակուր կ'ու-տէր ուրիշի ձեռքով , բայց Մէզրէցին մերժեց : Տեղեկաբերք 100 տոլար խոստացաւ , Սարգիս նորէն մերժեց , որովհետեւ լուսա-նկարի քնար չէր հաւատար :


Հիմա Սարգիս կը խոստանայ հազար տոլար պարգեւ անոր , որ կը գտնէ կերպ մը կերակուրն ինքն իր ձեռքով ուտելու , ջուրը խմելու , կին մը առնելու , լուսանկարը ժաշելու , ինչուրէնսի եւ չէյրի հաւատալու :



### ՕՄԱՐ ԽԱՅ ԵՍԱՄԷՆ

Վանէ՛ սրտէդ հոգ ու կսկիծ ,  
Խմէ զինին ամբողջ տարին ,  
Սիրէ դուստրը ողկոյզին թարմ ,  
Մայրը հալալ , աղջի՞ն հարամ :

### ԱՌԱԿ ՄԻՒԽԹԱՐ ԳՈՇէՆ



#### ԿԱՂԱՄԲ ԵՒ ԱՆՄԻՏ

Կաղամբ քարոզէր եւ կը պնդէր թէ

Ինք փորացաւի գարման ու դեղ է ,

Զինքն հում ուտողին փորը կը լուծէ ,

Եփուն ուտողին փորը կը պընդէ :

Անմիտը այս խօսքը կարծեց իրաւ ,

Եւ կաղամբէն կուշտ կուշտ կերաւ :

Այլ հա ձայներ ուլոր մոլոր ,

Ելան իր փորէն .

«Այս է քո օդուտ , Կաղամբ , անօրէն ,

Հաւատալս այս՝ որ է առաջին ,

Համարէ նաև այլեւս վերջին .

Արդ , կորի՛ր դու փորէս ,

Ո՞վ կաղամբ աներես .»

— Ինձ պէտք էր գտնել ապուշ մը քեզ պէս ,

ըստ կաղամբը ,

Այժմ հոգս անդամ չէ թէ խարուեր ես .

Իմ փափաքն էր որ միանդամ ի փորդ մանեմ .

Մտա՛յ . ես փո՛յթս չէ ալ , եթէ ելնեմ

Սնկէ դուրս Անարգի պէս :»

## ԱՆԱԿԱՆԱԼ ԶԵՐԸ

Պոսթընի մէջ եղբայր մը կար, որ քոյր մը ունէր, սիրունիկ, մատաղատի, համակրելի եւ համեստ: Օրիորդը կրթուածէր Պոլսոյ Դպրոցասիրաց Տիկնանց վարժարանը եւ քաղցր ձայնով մը գիտէր երգել:

Արդեօք այս աղջիկը կը պատկանէ՞ր այն օրիորդներու խումբն, որ բերուեցաւ Պոլսէն երկու պատուիրակ Տիկիններու կողմէ հինգ հազարական տոլարի աճուրդով մը հարսնանելու համար: Չեմ կրնար վճռական պատասխան մը տալ:

Միայն գիտեմ, որ օրիորդին արտաքինը եւ մանաւանդ ձայնը բաւական պիտի ըլլային գրաւելու շատ մը հայ երիտասարդներու սրտերը:

Եւ, իբրաւ, երիտասարդ մը յաջողեցաւ պտուկը կրակին վըրայ դնել եւ ապուրը եփել: Դիմեց եղբօրը եւ ինդրեց քրոջը ձեռքը:

— Առանց գրամի քոյրս չեմ տար, ըստ եղբայրը:

— Ինչի՞ գրամ է ուզածդ:

— Ամերիկայի մէջ մարդիկ ձրի՞ կապրին: Մի՞թէ օդ կը չնչեն եւ ջուր կը խմեն միայն: Հաղար ծախքեր կան:

— Լա՞ւ, ի՞նչ է պարտքս, — հարցուց երիտասարդ սիրահարը:

— Վեց հարիւր տոլար, — եղաւ կտրուկ պատասխանը:

— Հնչո՞ւն դրամ կ'ուզես թէ չէֆ:

— Զէ՞ք:

Եւ երիտասարդը գրեց չէք մը 600 տոլարի ու տուաւ եղբօրը, որ պաղարիւով գրպաննեց զայն:

Առեւտրական գործառնութիւնը քրոջմէն գաղտնի չէր սակայն: Քոյրը գիտէր ամէն իբրադրձութիւն եւ շատ բնական կը գտնէր: Այս աղջիկը կը խորհէր, թէ քոյրերը Ամերիկա բնակող շատ եղբայրներու համար քոյր ըլլալէ դադրած էին այլեւս եւ անոնց վրայ ծախսուած ամէն մէկ աէնթ կ'անցուէր եղբայրական օրհաշուի, անկէ եղբայրական մայր հաշուի, ապա եղբայրական բաղադրեալ տոկոսի գրութեամբ կը վերածուէր կոկիկ գումարի

մը, եղբայրական հաշուեցոյց կ'ըլլար եւ կը կախուէր քրոջը ձիւէն, հետեւեալ մակագրութեամբ.

«Եթէ կ'ուզես քոյրս կին ունենալ ֆեզի, նախ վնարէ կանսիկ սա եղբայրական պիլը: Մասնավիար չ'ընդունուիր»:

Բոլոր գերբուկ, խորտուրորդ գժուարութիւնները հարթեւէ ետք, ինչպէս առհասարակ կը պատահին ամուսնական նախապատրաստութեանց ատեն, երիտասարդը ընդունեց կրօնաւորին բերնէն այնքան ցանկալի հրամանը —

«... Եւ եղեցին երկարեան ի մարմին մի»:

Երբ լուսինը երկնքէն վեր կը բարձրանար, եւ մեղուները միւս առտու մեղը պիտի պատրաստէին, նորապսակ ամուլը, բաղմաթիւ նուէրներու հետ, յատուկ յանձնելի (սիէշը տէլիվըրի) նամակ մը ընդունեց :

Պահարանը բացուեցաւ եւ դուրս հանուեցաւ նամակ մը, որ պինդ գրկուած էր չէքի մը հետ:

«Սիրելի քոյրս եւ քեռայրս, կը սկսէին կարճ տողերը, ձեր մեղրալուսնին առթիւ ահա ձեզի կը վերադարձնեմ 600 տոլարնոց չէքը իրը նուէր: Հայ եղբայր մը երբեք պիտի չուզէ իր քոյրը վաճառել իր քեռայրին: Հայ քրոջ մը ծախքերը եղբօր մը պատուին կը պատկանին շատ պարագաներու ներքեւ: Ներողութիւն եւ երջանկութիւն»:

Նորապսակները իրարու նայեցան: Օրիորդին հպարտ զգացումները խառնուեցան երիտասարդին ինքնագոհութեան: Երկուքը ըմբռնեցին թէ եղբայրական կատակի մը առջեւ կը գտնուին, վեց հարիւր տոլար անակնկալ չէքով մը, որ մեղրալուսինը կրկին անզամ կը քաղցրացնէր:



### ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԻՆ ԲԱՐԲԵՐԻՆ

Հին օրերու Հնչակեան կուսակցական ժողովի մը մէջ ատենախօսը պարզեց օրուան քաղաքական կացութիւնը:


Ատենապետ. — Հիմա, ո՞վ որ հարցում ունի, թո՛ղ ընէ:

Ներկայ մը. — Ինչո՞ւ 1894-ին Աստունը կոտորել տուիք:

Հազիւ թէ խօսքը ըսուած էր, չորս հոդի յարձակեցան հարցում տուողին վրան եւ լաւ մը տիեցին:

Երբ ամէն ինչ խաղաղեցաւ:

Ատենապետ. — Հիմա ուրիշ հարցում ընող կա՞յ:



ՊԻԹԼԻՍԻ ՄԱՅՔ

## ԱՄԵՐԻԿԱՆՀԱՅ ՏԻՊԱՐՆԵՐ

## ՊԻԹԼԻՍԻ ՄԱՅՔ

Ո՞վ չի պիտեր պիթլիսցի Մայքը, այդ նշանաւոր հայը, որ ամէնուն բարեւ կուտայ եւ ամենէն բարեւ կ'առնէ:

Երկար տարիներէ ի վեր Վուստըր կը բնակի ան, եւ կը սիրէ այդ քաղաքը հոգեւին ու մարմնովին:

Թէպէտ Պիթլիս ծննդավայրն եղած է Մայքի, սակայն անոր մայըլ Վուստըրի համար աշխարհ բերած է զինք:

Հիմա ճիշդ Երևուն եւ հինգ տարեկան կ'ըլլայ Մայք, միջահասակ, տիպական պիրլիսցի մը:

Տիպական կ'ըսեմ, որովհետեւ Հայաստանի ամէն գաւառ իր տիպերն ունի, մարմնական եւ հոգեկան առանձնայատկութիւններով:

Պիթլիսցի Մայք զրել կարգալ չի զիտեր, անոր համար այըլը կ'երեւի նոր ծննդ հորթի մը սանարին, քոն՝ եզան մը աչքին, օ-ն օղակի մը, որուն մէջ Մայք պիտի ուզեր մատը խօթել եւ կոճկել:

Գործարանի մը մէջ կ'աշխատի Մայք եւ Փայրմէն է, հրշէջ, ուրիշ խօսքով քուլումպանի:

Եթէ, Աստուած մի՛ արասցէ, հրդէհ ծաղի, կրա՛կ իյնայ, Մայքին պաշտօնն է իսկոյն մարել զայն, եւ կամ, Եթէ չի կրնար մարել միս մինակ, արտօնուած է կանչել քաղաքին միւս հրշէջները, Փայրմէնները, քուլումպանիները եւ միասին մարել կրակը:

Գործարանատէրը շատ կը սիրէ զինքը. կատարեալ վստահութիւն ունի անոր վրայ, որովհետեւ ունի երկու մէծ առաքինութիւններ, զորոնք բաժնած են իրենց մէջ շաւնն ու կատուն:

Մայք այս Երկութը միացուցած է իր բնութեան մէջ եւ հետեւարար կը վայելէ հազուագիւտ յարգանք:

Հաւատափիրմ է Մայք շան մը պէս, այլ եւ սրատես է կատուի մը նման, եւ աւելին, ճիրաններ ունի, որոնցմով կը հալածէ առնէտները եւ յաճախ կը բանէ զանոնք:

Այս առնէտները չե՛ն սարսափիր թունաւոր դեղերէ, չե՛ն սարսափիր թակարդէ, չե՛ն վախնար կատուներէ, բայց ահարեկած են Մայքն:

Մայք առնէտներու ահարեկիչն է, թէսորիստը:

Այն օրէն ի վեր որ Վուստըր Թէկիրամ Հրատարակեց Մայքի պատկերը, ի ձեռին ունենալով որսորդութեան իր մեծագոյն պարգևներէն մին, ... առնէտ մը..., Մայքի անունը հնչեց, արձագանդ տուաւ քաղաքին ներքնաշխարհին մէջ, ուր առնէտներու թագաւորը հրովարտակով մը հոչակեց զինք՝ առնէտ աղդին մեծագոյն թշնամին:

Մայքի միւս առաւելութիւնը հաւատարմութիւնն է. գործարանը Մայքի արեւն է, մայքը, ասաղը, տունը տեղը եւ ամէն ինչ:

Ասոր համար է որ հարիւր ժամ կ'աշխատի ան, եօթն օրէ բազկացեալ շարթէ մը:

Մայքի հաւատարմութեան եւ վայելած վստահութեան ասկացոցն է ըստուար փունջը այն բանալիներուն, որը կը կապէ աջ յետոյքին վրայ:

Այս բանալիներուն մետաղը արտակարգ հաճոյք կը պատճառէ Մայքի: Եւ ա'յնքան լաւ ուսումնասիրած է բանալիներուն ձայնանիշերը (նօթա), որ անոնց հնչեւններէն կրնայ զանազանել թէ ո'ր դժան բանալին ո'ր դրան բանալին, կը զարնէ իր մէջքէն վար, ետեւը:

Սակայն կարելի չէ շափել Մայքի կարեւորութիւնը միայն բանալիներու փունջով: Ո՛չ:

Մայքը կարելի է իսկոյն ճանչնալ եւ իր ձեռքերէն:

Ամէն մէկ մատին վրայ մատանի մը կը կրէ Մայք: Իր տասը մատներէն բացառութիւն են միայն երկու բութերը:

Եւ Մայք կը ցափ որ այդ երկու մատերը չի կրնար չղթայել ոսկեայ օղակներով: Ան դժուն է սահղողոյն, որ բթամատերը չէ կաղապարեր նման միւս մատներուն:

Սակայն չկարծէր թէ միայն ձեռքի մատներուն վրայ մատանիներ ունի: Մայքի ոտնամատերն աշխարհի ամենէն երջանիլիներն են: Հոն արդէն, կօշիկներու ներու, տասը ոտնամատերը, տանց բացառութեան, տասը հատ մատանի կը կրեն:

— Լաւ չէ՞ր լինիր, կ'ըսէ Մայք, որ սահղողը մեր ձեռքի բթամատերը շնած ըլլար ոտքի բթամատերուն այս:

Մայք, ուրեմն, ունի քսան մատ եւ տասնեւութը մատանի: Եթէ քսանեւմէկ մատ ունեցած ըլլար, հաւանօրէն քսանեւմէկին վրայ ալ մատանի մը անցնէր:

Եւ թերեւ քսանեւմէկ մատ ունի Մայք, որովհետեւ իր ձեռքին մատները կը համրուին, բայց անդին կան ծածկուած ոտքերը, որոնք բոլորը մատանի կը կրեն, բայց ճշգրիտ զումարի մը արժանացած չեն ցայսօր:

Պիթլիսից Մայք մետաղներու սիրահար է, ինչպէս որ հետեւցնելու էք նախընթաց տողերէն:

Զի՞ դիտցուիր թէ ինչո՞ւ համար պայտուիլը այնչափ հաճելի է իրեն:

Ոտքերուն տակ կօշիկին՝ ճեծ ճեծ դամեր զարնել կուտայ: Այս զամերը երրեմն կը զարնուին փողոցի կրանիթէ քարերուն եւ կրակ կ'արձակեն:

Մայք, հըշէ լինելով, կարծես ըսել կ'ուզէ կրակին.

— Կրակ, քեզ ոտքերուն ներքեւ ունիմ եւ կը զգմէմ:

Այս տեսակէտէն, Մայք լաւ կը մրցի բեռնատար խոշոր ձերուն հետ, որոնց սմբակները կը կայծեն, երբ ծանր բեռ մը քաշելու տաեն կը կրկնապատկեն իրենց պայտերու թափը:

Եւ առդէն պայտը Մայքի խորհրդանիշն է:

Եթէ Մայք կը սիրէ մետաղը, կը սիրէ մատանին, շա'տ աւելի արժէք կուտայ պայտին, որը կը պաշտէ:

Պայտը վաճառանիշն է Մայքի, քրեյտ մարքը:

Ահա ասոր համար է, որ իր փողկապին վրայ խոշոր պայտ մը անցուցած է եւ անով կը շրջազայի մէշտ, կամ կ'ուլըրտի, ինչպէս կ'ըսեն վուստըրցիները:

Այս փողկապի պայտը կը նմանի իշու պայտին:

Եւ ըստովներ կան, թէ անոր մեծութիւնը՝ ճիշդ նման է Յիսուսի իշուն պայտին՝ որ ինկեր կորսուեր էր, երբ տէրը երուսաղէմի գոնէն ներս կը մըտնէր:

Հայ զոհարավաճառ հնագէտ մը հաւատարիքներ տուած է Մայքին, թէ այս պատճութիւնը ճիշդ է:

Եւ ամէն մարդ կրնայ վկայել որ հնագէտ-զոհարավաճառը սխալ չէ, որովհետեւ Մայք ինքինքը այդ պայտէն կրնայ ճանչնալ:

Քանի մը անգամ խճովին լուսանկարներ հանուած են, որոնց մէջ Մայք պատիւն ունեցած է շարք բռնելու:

Այդ նկարները երբ չարաճճիներու կողմէ ցոյց արուած են, առանց պայտի, Մայք չէ կրցած ճանչնալ ինքինքը:

Երբ չարաճճիները վեր տաս են իրենց մատները պայտին վրայէ, Մայք բացարանչած է:

— Ո՛վ որ այս պայտը կը կրէ, ա'ն եմ ես:

Սակայն Մայքի առաքինութիւնները հոս չեն վերջանար: Եթէ կ'ուզէք, առաքինութեան մէծ գուոր ճիշդ ասկէ կը սկսի:

Պիթլիսից սիրահարած է իրական սեռին, առանց գոյնի, տարիքի, մեռութեան եւ մանաւանդ ծաւալի խորութեան:

Նշանած մը կ'ուզէ եւ կը փնտոէ:

Եւ իրաւունք ունի, որովհետեւ, եթէ իր բոլոր առաքինութիւնները զորս թուեցինք հոս, տայցին իրեն այդ իրաւունքը, տաներկու հազար կանանչ տալը պատի չնորչէր իրեն իրաւունքներու սրբազնագոյնը:

Մնաց որ Մայք ունի տուն մըն ալ:

Եւ միթէ կարելի է զանց ընել ուրիշ առաքինութիւն մը զոր ունի Մայք իր այս սեփական տանը մէջ:

Սիրահար է երաժշտութեան:

Ամէն տառու կ'ելլէ ճիշդ ժամը Յ-ին, կը լարէ ձայնամեքենան, եւ իրաւունք սուեւէ կը նուազէ իր ունեցած բոլոր երդասնակները:

Եւ Մայքի սիրան ու հոգին կը խայտան:

Կէսօրին նոյն երգիները, նոյն երգապնակին վրայ մարինէ մը կուտան, իսկ իրիկունը տեղի կ'ունենայ վերջնական նուազահանդէսը, ուրկէ վերջ Մայք ինքինքը կը յանձնէ երազին:

Սակայն Մայք հայերէն երգեր բնաւ չի պահեր, նոյնիսկ Շահ-Մուրատը որ իր հայրենակիցը կը սեպուի:

Հայերէնի նախապատութիւնը զուցէ սիրոյ մէջ ըլլայ միայն:

Եւ զարմանալի փաստ է, որ Մայք, երկար տարիներու վնտառութէ ետք, դարձեալ չի յաջողիր դանել նշանած մը:

Աւելի զարմանալին այն է, որ Մայք կրցած է բազմաթիւ կրակներ մարել դորձարանէն ներս, բայց, իսկզնը, չի կրցած մարել այն կրակը՝ որ կայ իր սրտին մէջ:

Եւ Մայք երախտապարտ պիտի մնայ անոր, որ կրնայ սրտի հրշէջ մեքենայ մը հնարել եւ Մայքին փոխ տալ:

Ո՞վ որ համաձայնի Մայքին նշանած մը դանել, եւ յաջողի դանել, կը խոստանանք Մայքի հնչուն հարստութեան կէսը, այսինքն վեց հաղար տոլառ պարզեւ:

Այս հանդիսաւոր խոստումը կ'ընենք Մայքի հաշւոյն, որպէսզի նախապաշտում եւ թիւրիմացութիւններ չգատահին հանդէպ այս առաքինի մարդուն:

## ԱՍՊԵՏ ԼԻՊԱՐԻՏ

Պրճ. Վ. Մ. Քիւրքնեան, ծանօթ բանաստեղծը եւ գործիչը, իր ԱՍՊԵՏ ԼԻՊԱՐԻՏ վէպին վերջին տողերը կը գրէր:

Պրճ. Քիւրքնեան շուարեր մնացեր էր, թէ ի՞նչպէս վերջացընէ հերոս Ասպետ Լիպարիտին եւ վէպին հերոսուի իշխանուի Ալիծին արկածները:

Կը մտածէր, կը մտածէր եւ չէր գիտեր ո՞ւր յանգեցնէր գործը:

Այդ միջոցին ներս կը մտնէր պրճ. Քիւրքնեանի աղջիկը, երգչուի օր. Ալիծ Քիւրքնեան:

— Ալի՛ծ, վէպս վերջացնելու վրայ եմ եւ դժուար կէտի մը առջեւ կը գտնուիմ:

— Ի՞նչ է, հայրիկ:

— Ի՞նչպէս վերջացնեմ վէպը, ի՞նչ ընեմ Ասպետ Լիպարիտն ու Ալիծը:

— Հայրիկ, լաւ է որ երկուքն ալ կարգես, լմնցնես վերջացընին:

Եւ պրճ. Վ. Մ. Քիւրքնեան մտիկ ըրաւ իր աղջկան թելադրութեան:

Որովհետեւ վէպը կը վերջանայ Ասպետ Լիպարիտի եւ Ալիծի ամուսնութեամբ սա խօսիքրով —

«Բա՛ց աչքերդ, սէր իմ Ալիծ, քն Լիպարիտն եմ ես» :



Ամէն գարու եւ ամէն ժողովուրդներու մէջ մանչի եւ աղջիկի գուշակութիւնը յղի կնոջ մը մօտ՝ եղած է հետաքրքրութեան առարկայ:

Չենք գիտեր թէ ժամանակակից հայ կինը ի՞նչ նշաններէ կը կուահէ ծնանելի զաւակի մը մանչ կամ աղջիկի լինելը, բայց միջնադարեան հայ կինը արդէն «գիտէր» կամ գիտնալ կը կարծէր քանի մը նշաններէ:

«Եթէ կիոջ մը ԶԱԽ ԾԻԾԸ քոշմած լինէր, կը գուշակուեր թէ զաւակը աղջիկ պիտի ըլլար, իսկ եթէ աջ ծիծը քոշմած լինէր, կը գուշակուեր թէ զաւակը մանչ պիտի ծնանիք»:

Հետաքրքիր էր գիտնալ մէր իսկ մայրերէն, թէ միջնադարեան հայերու այս գուշակութիւնը իրական հիմեր կը ներկայացնէ: Ունէ ամերիկահայ կին նման զննութիւն մը կատարած է ինք իր վրայ:

Դարձեալ շահեկան է ձախի եւ աչի պարագան: Ներկայ դարու Եւրոպացի բժիշկները մանչի եւ աղջկայ ծնունդը ձախ եւ աջ արգանդներու հետ կը կապեն, մինչ հին հայերը կը կապակցէին ձախ եւ աջ ստինքներու թոռմելուն հետ:



## ՔԻՉ ՄԱԼ ՃՇՄԱՐԻՏ

Գէորգ — Երուանդ, կիներու խելքը ո՞րտեղն է:

Երուանդ — Մազերուն մէջ:


Գէորգ — Հապա որ հիմա մազերնին կը կտրեն:

Երուանդ — «Պիյութի փարլուր»:

«ԴԱՏԱՀՈՐ»

## ՀԱՆԵԼՈՒԿ

Ի ծովակի  
Զուրն է աղի  
Նաւիկ ունի  
Առանց հովի:



## ԷՇՆ ՈՒ ԻՐ ԹՐԻՔԸ

Էշն մը գետին մէջ խեղդուելու մօտ էր .  
Նեղութենի՞ն էր քէ կարիքէն ,

Մարդ չի գիտեր ,  
Միայն զբրին երես  
Իր քրիքը ցանեց :

Էշը տեսնելով քէ իր քրիք կ'երբայ արագավազ ,  
«Հէ՛յ , բշուառական քրիք» , ուժգին զոաց ,  
«Որովայնիւս դեռ նոր ելար ,  
«Լողալ այդպէս ո՞րմէ ուսար» :



## Տ Ն Ա Բ Ե Ր Ք

Երբ հայ կինը տղարբեքի ցաւերուն մէջ տառապի , տնեցի-  
ները կը մտահոգուին եւ ճար ու դարման կը սկսին խորհիլ : Օ-  
րինակ , կին մը մոմը յղի հարսին երեսն ի վեր կը փէ՛ , կը փէ՛  
փսփսալով . —

Լոյս Լուսաւորչին ,  
Շունչըս Քրիստոսին .  
Լոյս արեւոր ,  
Հարսնուկ ծոցոր .  
Զաւակ շնորհաւոր ,  
Սիրուն աղուոր  
Մեզ բարեւոր :

Երախան ծնելուն պէս մամն ահա կ'աւետէ ինդադին թէ  
մանչ է .

«Աւետի՞ս , աւետի՞ս .  
Ճետ Լուսաւորչիս ,  
Լոյս մեղաւորիս :»

Իսկ եթէ աղջիկ է .  
Տիրածին ,  
Լուսածին ,  
Աստուածածին :

Դայեկը ապա երախան իր գոզն առնելով կամ թեւերուն վը-  
րայ , կը սկսի ցնծագին գոչել .

«Շնորհաւո՞ր , շնորհաւո՞ր ,  
Լուսաւորչին պարզեւառ ,  
Քրիստոսէն օրինաւոր .  
Մեծ պապուկին փառաւոր ,  
Լուսաւորչին լուսաւոր .»

Տնեցիք մամէն կ'առնեն երախան եւ իրարու տալով «Շնոր-  
հաւոր կը մրմնջեն , բայց առանց համբուրելու , որովհետեւ երա-  
խան լոյս իւղով օծուած չէ դեռ : Միայն կ'ըսեն .

«Ծաղիկ տանք մեր զաւկին , խորոտիկ ,  
Խաչիկ տանք մեր զաւկին , աղուորիկ ,  
Լուսիկ տանք մեր զաւկին , խատուտիկ ,  
Հոգի տանք մեր զաւկին , Արեւիկ :»

## ՏԱՆ ՏԱՆ

Երախան օրօրոցէն հանելով, մայրերը կը խաղցնեն թեւեր-  
նուն վրայ, և կ'երգեն ցած ձայնով։

Տան տան, դռները.  
Ելնէ իշնէ խաները.  
Մորքենի ոչխարները,  
Ռւտենի գէր գէր մսերը։

Ոսկորը տիւտիւկ ընես,  
Չալես, ցատկես ու պարես.  
Չալես, չալես ու ժուռ զաս.  
Իրկուն ըլլայ նէ, տուն զաս.  
Դրացիներուդ բարեւ տաս.  
Հօրդ, մօրդ արեւ տաս։

Հօփ, հօփ տղաս, հօփիալա,  
Յատկէ տրդաս, տանտանա.  
Ռւտէ քաքա ու մեծնայ,  
Հօրդ մօրդ արեւ տայ.  
Արես առնու, պաշիկ տայ,  
Լուսաւորչիս բարեւ տայ։

Մափիկ ծափիկ ծիրանի,  
Հովը քելքել կը տանի.  
Եկուր պազնեմ, կը տանի,  
Կաղ-շուն զրողը չըտանի.  
Ո՞վ կը տանի քող տանի,  
Մեր պարոնը չը տանի։



## ԶՈՒՄՐՃԱԼԻ ՆՕԹԵՐ

Զուարճախօսի մը հարցուցին,  
— Սէրը ի՞նչու կը նմանի.  
— Թարմ հաւկիթի։  
— Ամուսնութիւնը.  
— Կարծր հաւկիթի։  
— Կնաթողութի՞ւնը.  
— Հոտած հաւկիթի։

Որդեակ իմ, «կոխւը» թուարանական չորս գործողութեանց  
ո՞ր կանոնին համեմատ գրելու ենք.  
— Յաւելման.  
— Օրինա՞կ.  
— «Այսպէս կ'ըլլայ այլպէս չ'ըլլար = Կոխւ կ'ըլլայ։  
— Ապրի՞ս զաւակս։

— Ծովու ձուկերէն ու երկնից աստղերէն չատ ի՞նչ կայ աշ-  
խարհիս երեսը.  
— Մարդկանց չարիքը։

Զուարճախօսի մը իմացուցին, թէ անկուտի երխասարդ  
մը՝ աղքատիկ աղջկան մը հետ ամուսնացեր է.  
— Ո՞չ, փոխանակ այլպէս ըսելու, անօթութիւնը ծարա-  
ւութեան հետ միացեր է ըսէք, — եղաւ անոր պատասխանը։

— Կիները ինչո՞ւ համար մօրուք չունին, հարցուցին սախ-  
րիչի մը.  
— Զարմանալի հարցում, պատասխանեց, եթէ ունենային՝  
ո՞վ պիտի կարողանար ածիւել անոնց կզակը, որ գոնէ տասը  
վայրկեան հանգիստ չեն կրնար բոնել։

— Ամուսնական կապը ո՞րն է.

— Այն բարակ դերձանը՝ որ նարոտ կ'ըսուի և շատեր քա-  
շելուն պէս կը փրցնեն:

Փայտահատ մը ձեռնքն ունեցած կացինովը զարկեր սպաներ  
էր այն չունը, որ իր ստքը խածած էր:

Ականատես մը հարցուց անոր.

— Ինչո՞ւ համար կացինին կոթովը չի զարկեր:

— Վասն զի չունն ալ բերնովը ստքս խածաւ: Եթէ պոչովը  
խածած ըլլար, այն ատեն ձեր ըսածին պէս կ'ընէի և կոթովը  
կը զարնէի:

Զուարձախօսի մը հարցուցին, թէ ինչո՞ւ համար չուները  
կոռուած ատեննին երեսնին անդին կը դարձնեն:

— Որպէս զի երբոր հաշտուին, իրարու նայելու երես ունե-  
նան:

— Ամուսնութիւնը ե՞րբ երջանկաւէտ կրնար ըլլար, հար-  
ցուցին փիլիսոփայի մը, որ պատասխանեց.

Երբոր էրիկը խուլ և կինը կոյր ըլլար:

— Ամուսնացեալ կին մը ինչ բանի՞ կը նմանի.

— Տիրոջը յանձնուած նամակի:

— Օրիո՞րդ մը.

— Գրուած՝ բայց տակաւին տիրոջը չյանձնուած նամակի  
մը:

— Լաւ, առանց ամուսնանալու ծերացած օրիորդը ինչի՞ կը  
նմանի.

— Նամակատան մէջ մոռցուած նամակի մը:

Թուարանի մը հարցուեցաւ.

— Ամուսնութիւնը ինչի՞ կը նմանի.

— Յաւելման:

— Բարձման:

— ԱԷ՞րը.

— Բազմապատկութեան:

— Ժառանգութիւնը.

— Բաժանման:

— Է՛յ, կեցցե՞ս թուարան:

Փողոցին մէջ բնակող սափրիչը խանութին պատուհաններէն  
մէկուն կուարած ապակիին տեղ թուղթ վակցուցեր էր. սրիկայ  
մը այս մարդուն հետ զրօննելու մտօք թուղթը պատուց և գը-  
լուխը ներս խոթելով՝

— Ժամը քանի՞ն է, վարպետ — հարցուց:

Սափրիչը ստահակին դիմուն վայս մը իջեցնելով՝

— Հիմա մէկ զարկաւ, — պատասխանեց ամենայն հանդար-  
տութեամբ:

Հարցուեցաւ կոյրի մը, որ գիշեր ատեն սափոր մը ուսին  
վրայ բռնած և ձեռքը լապտեր մը առած կ'երթար.

— Այդ լապտերը ի՞նչ օգուտ ունի քեզի.

Կոյրը պատասխանեց.

— Այս լապտերը ինձի համար չէ, այլ քեզի համար է, որ  
զիս տեսնես և ինձ չի զարնուիս:

— Օրիո՞րդ, ձեզի համար կ'ըսեն թէ 35 տարեկան էք, արդ-  
հօք իլա՞ւ է.

— Բան գործ չունին թո՞ղ ըսեն, մօրմէս աղէկ չգիտեն. դեռ  
անցեալ օր էր՝ ըսաւ թէ Զատկին 19-ս պիտի լմնցնեմ:

— Բայց մազերդ ձերմկիլ սկսեր են.

— Մօտային յարմարելու համար դիտմամբ ձերմկցուցի:

— Հապա երեսիդ խորչոմնե՞րը.

— Անոնք խորելէզի նշանն են:

Ապուշին մէկը օր մը փողոցին մէջ կը վաղէր երգելով. պատ-  
ճառը հարցուցին.

— Որովհետեւ, պատասխանեց, մէկ քանիներ ինձի «քու  
ձայնդ հեռուէն շատ անուշ կուգայ» ըսին, ես ալ զայն հեռուէն  
լոելու համար ահա կը վազեմ:

Բժիշկ մը իր յաճախորդներէն մէկուն հարցուց.

— Ինչո՞ւ համար ինձմէ կը փախչիք».

— Ա՛ս, պարոն Տօքթոր, պատասխանեց պարզամիտ մարդը

կարմրելով, շատոնց ի վեր չի հիւանդանալուս, ամօթէս չեմ համարձակիր ձեզի մօտենալ:

Հայր մը իր որդւոյն,  
— Թորո՛ս, ամէն օր համար կ'առնե՞ս կոր.  
— Այս հայրիկ:  
— Մայրենի լեզուդ կէս ըրի՞ր.  
— Լմնցուցի պիլէ:  
— Ենանկ է նէ՝ բէ՛ր մէջ մը նայիմ:  
— Ի՞նչը պիտի նայիս, սորն անդամ չի մնաց:

Հաւաքեց  
ՕՊ. Ս. Միքայելեան



ՄԱՆՉԻ ԵՒ ԱԴՐԿԱՅ ՆՇԱՆՆԵՐ

Եթէ ծոցւոր կնոջ աջ ստինքի տակը կարմրութիւն լինի,  
Մանչ է:  
Եթէ ոչ մի նշան չլինի,  
Աղջիկ է:  
Եթէ մանչ լինի,  
Երախան դէպի ծոցւոր մօր կուրծքը կը նստի:  
Եթէ աղջիկ լինի,  
Վար՝ դէպի որովայնի կողմը:

ԽՈՍՔԵՐ

Եթէ տղան չար լինի, կ'ըսեն.  
— Այծի՞ կաթ ես կերեր:  
Եթէ տղան ապուշ լինի, կ'ըսեն.  
— Կովո՞ւ կաթ ես կերեր:

ՀԱՅԵՐԵՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԱՆԳԼԻԵՐԵՆ ԲԱՌԵՐՈՎ

Շատ հայեր կան, որ անգլիերէն կը խօսին, բայց հայերէն կը մտածեն: Այդ պատճառաւ իրենց խօսքը ժպիս եւ ծիծաղ կ'առաջնէ:

Օր մը հայու մը հարցուցին.

— How do you like this country?

(Այս երկիրը կը սիրէ՞ք):

— This country's water comes to me.

(Այս երկրին ջուրը կուգայ ինձի):

Ուրիշի մը հարցուեցաւ.

— You know Mr. Garabedian?

(Կը ճանչնա՞ք ու կարապեսեանը):

— Don't hang no ear, he has sold his mother's thread.

(Ականջ մի կախեր, մօրը մանածը ծախեր է):

Դարձեալ հայու մը հարցուցին.

— Can you come to work tomorrow morning?

(Կընա՞ք զսրծի զալ վաղ առառ):

— On my head!

(Գլխուս վրայ):

— Do you smoke?

(Կը ծիրէ՞ք):

— I drink them one by one after the bread.

(Կը խմեմ զանոնք մէկիկ մէկիկ հացէն ետք):

— How many children you got?

(Քանի՞ զաւակ ունիք):

— I got boy boy, size size!

— How many children you have?

— I have no children, mildren, zildren!



## ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆԸ

Ե Ի

### ԻՐ ՔՐԷՏԻԹ ՊՈՒՔԸ

Պութնի շրջակայ քաղաքներէն մէկուն մէջ կը բնակի Մարկոս Ամուն, որ քսան եւ հինգ տարիէ ի վեր կը զանուի Ամերիկա: Ամուն օձիք կը դնէ եւ ծընունէ ծնունդ, տարին մէկ անգամ, մեծ հանդիսաւորութեամբ կը դնէ փողեալ մը: Այս լաթի կտորին վրայ ամերիկեան հողեկներու բոլոր գոյները խորհուրդի նստած են, իսկ Ամուն կը հիանայ անոնց այլազանութեան վրայ: Այս փողկապը Մարկոս Ամուն մարտար մատներու ներքեւ խելքի չուզեր զալ եւ միշտ կը բառութի անոր բաճկոնի եղբերուն:

Ամենէն նշանաւորը մէր Ամունին տափատն է որ կոնքի կողմէն այնպէս լայն կարուած է եւ թուրքիոյ լարենանիները կը յիշեցնէ: Բալած ատեն Ամունին տափատը ետեւի կողմէն մէյ մը վեր, մէյ մը վար ակօսներ կը կազմէ եւ զրապաններու բացուածքը կը ցցէ: Տասը տարուան կեանք ունի այս տափատը, հետեւարար ճեւուած է ատեն մը՝ ուր ամերիկեան հասարակաց ճաշակը լարենանինութեան էր հասեր: Սակայն, Մարկոս Ամուն, տակաւին կը հիանայ այս տափատին վրայ եւ գժզու է որ հին վարպետները այլեւս չկան հրապարակի վաճառատուններուն մէջ:

Ամունին դէմքը նկարագրելու ոլչոք չկայ, որովհետեւ կրցաք երեւակայել թէ ի՞նչի կընայ նմանիլ ան:

Բազոնէր կան թէ Մարկոս Ամուն նեղեցի է, բայց ուրիշներ կը պնդեն յամաօրէն թէ ան մեծցած է բազմաշէնի մէջ:

Պատիւ մըն է Մարկոս Ամուն հայրենակից ունենալ, որովհետեւ հարուստ է եւ պիզնի՛ս կը զարձնէ, պիզնի՛ս:

Ամուն նպարեղինաց խանութ մը ունի՛ ուր արեւելեան սոխերը միշտ վէճի մէջ են իրենց սպանիացի եղբայրներուն հետ: Ամուն արեւելցի է, ուստի արեւելեան կծու սոխը անպատութիւն կը սեպէ իրեն՝ նստիլ սա՛ սպանիացի անուշ սոխին քով:

Ամուն միշտ զործի վրայ է խանութին մէջ եւ այնչափ զբաղած է որ ժամանակ անգամ չունի քիթը խնջելու: Քիթը, տակայն, Ամունին չի սպասեր, կաթիլ կաթիլ եւ րիւրեղ կ'իյնայ վար, երրեմն սոխերու եւ երրեմն ալ ունէ բանի վրայ: Եթէ պատահի որ քիթը անտանելի զառնայ, այն ատեն Ամուն վեր կ'առնէ գողնոցին ծայրը եւ հում, հում... կը խնջէ:

Ամուն պիզնիսի համար ծնած է՝ տաղանդ ունի, քանի որ տոլար գիզած է: իր հաշեւը ինք կը հասկնայ, եւ իրմէ դուրս ունէ մէկը կը կոնայ հասկնալ: իր դիրը ինք կը կարդայ եւ իրմէ դուրս թերեւս կարդան միայն փիւնիկերէն դիտողները:

Այս ալ արդէն մէծ բան կ'ըսէ Ամունին կարողութեան նկատմամբ:

Ամունի յաճախորդներուն մէջ մէծ թիւ մը կը կազմեն սեւամորթները, այրիշները, ամերիկացիները, նաև իտալացիներ եւ մաս մը հայեր:

Ամուն ասոնց շատերուն վարկ բացած է եւ կը պահէ շահեկան քրեափր պուք մը — Ապառիկի տեաբակ:

Մարկոս Ամուն իր յաճախորդներէն միայն հայրենակիցներուն մէկ մասն անունները կը յիշէ, հետեւարար, եթէ բանաք անոր քրեափր պուքը, կը հանդիպէ հետեւեալներուն: —

Մենած քմբուկը՝ երկու փառւնտ պըթը (կարագ)

Ղավալ ֆիրը՝ երկու փառւնտ քէն թօմաթէս

Նիկրին վրայինը՝ 12 հաւկիթ

Կրանին դիմացինը՝ 2 փառւնտ շաքար

Սախո պանին՝ 1 փառւնտ ճարպ

Սառիկը

Փիլիկը

Նոր փեսին տակինը

Թուլիօննց մանկիկը

Խումարենց նիկոն

Եղէզցի Զարքիկը

Երկիրը էշ զրացնողը

Թրէյնին մէջ փախողը

Փրլիամենին հատ մը տուողը

Անկիւնի հայլալը դրացին, եւն, եւն: :

Ահա այսպիսի զոհար անուններով լիցուն է Մարկոս Ամուն քրեափր պուքը:

Հիմա ի՞նչ կ'ըսէք, չչ հաւնիր, կը հեզնէք, կը խօսիք:

Բայց դուք ի՞նչ ունիք: Քանի՛ տոլար ունիք որ մարդու չէք հաւնիր:

Փաստն այն է որ մէր Ամուն հազարաւոր տոլարներ ունի, պիզնին ունի, եւ կը պահէ քրեափր պուք մը, որ իր մեծազոյն վկայականն է:



### Միամիտ հօսքեր

### ԹՈՒՐՅԲ ՓԵՍԱՆ

Գասթամունիցի թուրքերը սովորութիւն ունին առագաստի գիշերը դուռմ կերցնելու փեսային:

Անգամ մը, երբ հարսնիքէն ետք դուռմ բերուեցաւ փեսային, փոքր եղբայրը յափշտակեց ու կերաւ զայն:

— Հիմա գնա՛, հարսին սենեակը մտիր, ըսին անեցիները փեսային:

— Դուռմ ո՛վ որ կերաւ, թո՛ղ ան երթայ պառկի հարսին հետ, պատասխանեց վշտացած փեսան:

## ՍԻՏՈՐԻՆ ՕԳՈՒՏԸ

Ասոր նման հարցում մը ըրաւ ծանօթ ընկեր մը, որ Երկար ատեն Քալիֆորնիա մնացած է եւ, լաւ ճանչնալով տեղին հայ դաղութը, հետեւեալ յատկանշական դէպքը պատմեց :—

Ֆրէզնոյի Հայ Աւետարանական համայնքը 1905-ի ատենները սեփական եկեղեցի չունէր, բայց սեփական հովիւ մը ունէր յանձին պատ. Սանդիկեանի, որ Զուլումի քաղաքականութեան ամենաջերմ պաշտպաններէն մին եղած է Ամերիկայի մէջ. այսինքն՝ պատուելին կը գտնէ, որ Հայ համայնքին ուրոյն գոյութիւնը աւելորդ բան է եւ ջանալու է օր առաջ լուծել վերջացնել Ամերիկա դաղթող Հայերը, զանոնք իսկոյն եւ եթ մկրտելով — ամերիկանացնելով :

Այս նպատակով ալ պատուելին բանակցութիւններ կատարեց Ֆրէզնոյի Կ փողոցի Ամերիկեան Գոնկրէկէշընըլ եկեղեցիի հոգաբարձութեան հետ եւ այնպէս մը կարդադրեց, որ կիրակորեայ պաշտամունքը խառն, Հայերէ եւ ամերիկացիներէ բաղկացեալ, տեղի ունենար, թէ՛ Հայերէն եւ թէ անդիւրէն լեզուներով : Ուստի կազմուեցաւ խառն հոգաբարձութիւն մըն ալ եւ փորձը սկսաւ ընթանալ առանց դժուարութեան :

Ամերիկացիները նորութեան հմայքը եւ հետաքրքրութիւնը ատեն մը ըմբոշինելէ յետոյ, դժոնութեան զգալի արտայայտութիւն մը ունեցան Հայերու դէմ, զանոնք ամբաստանելով սխտորակերութեան մէջ : Հայերը, ըստ աւանդական սովորութեան, կիրակի օր խաչ (փաշա) կ'ուտէին, սխտորով համեմուած, եւ սուրբ գիրքը ձեռքերնին կ'երթային երգելու եկեղեցիին մէջ եւ փչելու սխտորեան շունչը ամերիկացիներու դունչերուն :

Այս անզատեհութիւնը ատեն մը տանելէ ետք, ամերիկացիք դիմեցին իրենց հովիւնին եւ անոր միջոցաւ թելադրեցին, որ պատուելի Սանդիկեան խօսի, եկեղեցիին բեմէն, հօտին այն հատուածին, որ իրեն կը պատկանի :

Կիրակի օր մը, պատուելին ամպիոն բարձրանալով, բնարան ընտրեց Հին Կտակարանի այն հատուածը, ուր ըսուած է . «Խրայելացիք Եգիպտոսի սոխն ու սխտորը յիշեցին ու կարօտանի» :

Պատուելի Սանդիկեանի ինքնատիպ քարոզին եղրակացու-

թիւնը այն էր, որ Քանանու երկրին (իմա՞ Քալիֆորնիա) մեղքն ու կարաղը վայելելէ յետոյ, իսրայելացի հայերը յիշելու չէին այլեւս սոխն ու սխտորը Հայաստանի :

Քարոզը անհետեւանք չմնաց, որովհետեւ այնուհետեւ հայ համայնքին կէսը սխտոր չկերաւ, բայց միւս կէսը չկրցաւ հրաժարիլ անոր համէն ու հոտէն :

Այս անգամ ամերիկացի պատուելին միջամտեց ինդրին եւ անդլիերէն լեզուով խնդրեց եղրայր հայերէն, որ հրաժարին սխտորակերութիւնէ : Հայերը դարձեալ յամառեցան իրենց սխտորապաշտութեան մէջ, որուն վրայ ամերիկացի հոգաբարձուները վերջնազիր տուին հայ հոգաբարձուներուն, պահանջելով երկու միացեալ հօտերուն բաժանումը :

— Մենէ բաժնուելէ ետք, գացէք ձեր ուղած չափով կերէք զոխի եւ զսխտոր, — ըսին ամերիկացիք :

Հայ Աւետարանականները, ճարահատ, գացին Այ փողոցին վրայ հօլ մը (սրահ) զգարձեցին եւ, տարի մը հոն աղօթելով, տիրոջը ստեղծած միամեայ բոյոը, «ուռարմատ» սխտորը կ'ուտէին եւ կ'երգէին :


Պատուելի Սանդիկեան այնուհետեւ դալով Ամերիկայի արեւելեան նահանգները, հանգանակութիւն կատարեց եւ սեփական եկեղեցի ուզեց շինել : Այս ձեռնարկը յաջող արդիւնք տալով, Հայերը վրէժ ուզեցին լուծել ամերիկացիներէն — գացին զնեցին ճիշդ այն եկեղեցին, ուրիէ քաղաքավարութեամբ վոնտուել էին :

Այս եկեղեցին, ըլլալով սխտորակերութեան վրէժի արտայայտութիւն, այնուհետեւ կոչուեցաւ «Սխտորեան Զըրչ», հակառակ անոր, որ «Հայ Պանդխստաց Ժողովական եկեղեցի» էր իր պաշտօնական անունը : (Սովորութիւն է ներկայիս Քալիֆորնիոյ Հայերուն՝ «Զըրչ» կոչել Աւետարանական աղօթատեղին, եւ «եկեղեցի»՝ Առաքելականը) :

Ո՛վ որ այսօր Ֆրէզնո երթայ, թո՛ղ հարցնէ ուեւէ հայու, թէ «ո՞ւր կը գտնուի «Սխտորեան Զըրչ»ը, եւ իրեն պիտի ըսուի տեղը այն վայրին, ուր պատ. Սանդիկեան, առանց նկատի ունենալու պատմական ու ընկերային օրէնքները, անմիջական Զուլումի քաղաքականութեան առաջին փորձառկութիւն մը ըրաւ եւ հանդիպեցաւ «սխտորեան պատին» :



## ԿԱՏՈՒԻ ՄԸ ՕՂԵՐԸ



Դիւրին բան չէ Ամերիկայի մէջ ապրիլ եւ սիրել: Եքէ կը կարծէք քէ դիւրին է, օր մը յանկարծ դուք ձեզ կը գտնէք դատարանին մէջ ու դատաւորին առջեւ:

Դիւրին կը կարծէր Քէմպրինցի հայ մը, պ. Աւետիսի Գաղանեան, որ նպարավանառի խանութ մը ունի Կրի՞ն Սթրիթի մէջ:

Գաղանեան աղուոր կատու մը ունիր եւ շատ կը սիրէր զայն: Զափազանց սէրը միշտ վտանգաւոր եղած է մարդուս, նոյնիսկ կատուի պարագային: Բայց Գաղանեան կը պաշտէր իր կատուն: Այս պաշտումը անոր շատ մուկ բռնելէ՞ն յառաջացած էր, քէ շատ գեղեցիկ ըլլալէն, չենք գիտեր:

Ամէն պարագայի տակ, հայ նպարավանառը որոշեց զոյգ մը օդ կախել կատուին երկու ականջներէն:

(Ա՛յ, գառնո՞ւկս, Գաղանեան, օդ նուէր տալիք մէկը չգտա՞ր, եւ գացիր կատո՞ւդ գտար: Գոնէ մեզի լուր տայիր):

Ի՞նչ ընենք, մեր հայրենակիցը խանութին սիրով կերակրուած կատուին էր տուեր իր սէրը: Անցեալ շաբթու Գաղանեան ծակեր էր փիսիկին երկու ականջներէն եւ անցուցեր էր խոշոր գունաւոր օդեր:

**Պոսթըն Թթէնսքրիփթի** տեղեկաբերը կ'ըսէ քէ այս օդերը այնչա՞փ խոշոր էին, որ կատուին երկու ականջները կը ծուէին զգալիօրէն:

Փիսիկը բնականաբար դժոնի էր մնացեր իր տիրոջը այս արտակարգ հոգածութենին, որովհետեւ ականջները դժուարաւ կը շարժէին եւ յետոյ անոնցմէ մէկը այնչափ վիրաւոր էր, որ սկսեր էր բորբոքիլ:

Այս երկրին մէջ կատուները անտէր ու անտիրական չըլլալով, դրացիները տեսան Գաղանեան փիսիկին վիրաւոր ականջները, անոր տառապանքները, եւ վերջապէս միներուն երնուանքը: Գացին լուր տուին «Կենդանիներու հանդէպ անգրութիւնը արգիլոդ ընկերութեան» որ ֆնիեց խնդիրը եւ օր մը, այս տարի, պ. Գաղանեան կանչուցաւ Քէմպրինի դատարանը:

— Ինչո՞ւ ծակեցիր կատուին անկըները, հարցուց դատաւորը:

— Շատ սիրելուս համար, ըստ ամբաստանեալ հայը:

— Զեր երկրին մէջ ձեր շատ սիրած առարկային հանդէպ այդպէ՞ս կը վարուիիք:

— Տէ՛ր դատաւոր, մեր երկրին մէջ սովորութիւն է, որ երբ բան մը, իր մը եւայլն, եռ նօ, շատ սիրենք, կը խածնենք, կը կամթենք: Մեր ճիլուէն է ասիկա, նազն ու նազանքը, եռ նօ:

— Այս երկրին մէջ արգիլուած է այդպիսի Ճիլուէ, նազ ու նազանք: Կատուները պետութեան օրենքներով պաշտպանուած են: Անոնց հանդէպ ունէ անգրութիւն յանցանք է. ուստի կը դատապարտեմ ձեզ քանի տուգանքի, պայմանաւ որ այդ օդերը հանէֆ Գաղանեան փիսիկին ականջներէն:

Հայ նպարավաճառը քսան տոլարը վճարելով ըստիպուեցաւ դուրս ելլել դատարանին:

Հայ նպարավաճառը նամբան կը խորհեք.— Եթէ կատու մը սիրելը ա'յսչափ դժուար է Ամերիկայի մէջ, հապա որչա'փ աւելի դժուար բան է հայու մը համար սիրել կին մը, զոր ոչ միայն պիտի չկրնայ լածնել, կոմթել ու ծեծել, այլ ականջին բլթակներուն անդամ դպշելէ պիտի զգուշանայ...

### ՀԱՆԵԼՈՒԿ

Ինքնին ծնայ  
Ինքնին մեռայ.  
Ինքնին յարեայ,  
Նորէն մեռայ:

Այն ի՞նչն է :

### ԶՈՐ ԵՒ ՏՂՈՒ ՄԻՋԵՒ

— Տղա՛ս, ոս շանը հօ՛օ՛շտ ըսէ :  
— Հայրի՛կ, ես ըսելու տեղ՝ դո՛ւն ըսէ :

### ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՏԱԿ


Կինը (բարկացած).— Քանի մը մարդիկ առաջարկեցին ինձի, ձեզի հետ ամուսնական առաջ:

Էրիկը.— Ինչո՞ւ չամուսնացար առաջին ապուշին հետ որ առջեւդ ելաւ:

Կինը.— Ամուսնացա՞յ :

— Ինչպէ՞ս կը գտնէք ամուսնութիւնը, ֆրի՛կ .  
— Երբ նշանուած էինք, ես կը խօսի եւ կինս կը լոէր: Երբ ամուսնացանք, կինս սկսաւ խօսի եւ ես մտիկ կ'ընէի: Իսկ հիմա երկուքս ալ կը խօսինք եւ դրացիները կը լուն:

Հայ Մայրերու երգերէն



### ՇԱՐԵՐԳ

Ո՞վ նըմանի, ըլմանի,  
Իմ տղեկն ո՞վ ըլմանի.  
— Զատու մամը չըլմանի,  
Մեր պապուկը ըլմանի:

Ո՞վ նըմանի, ըլմանի,  
Իմ տղեկն ո՞վ ըլմանի.  
— Խենդուկ մօրքուր չըլմանի,  
Թօսուն քեռին ըլմանի.

Ո՞վ նըմանի ըլմանի,  
Իմ տղեկն ո՞վ ըլմանի.

— Արեւ լուսին ըլմանի ,  
Հարիկն ու մար ըլմանի :

Ո՞վ նըմանի , ըլմանի ,  
Իմ տղեկն ո՞վ ըլմանի .  
— Ծիրան ծով չըլմանի ,  
Աստուծոյ ըլմանի :

Ո՞վ նըմանի , ըլմանի ,  
Մեր տղեկն ո՞վ ըլմանի .  
— Արեւ , լուսին չըլմանի ,  
Լուսաւորիչն ըլմանի :

## ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԷՆ

Մուստափային բարեւս տաս ,  
Ու հարցնես խոր յարգանեով .  
«Օքէնին ինչո՞ւ քըուած քանը  
Հալալ ըրաւ , զինին հարամ :»

— Բարեւս տար խայեամին ու  
Բսէ . «Անփորձ ես եղեր դեռ , ո՞վ խայեամ ,  
Ե՞րբ եմ վճուր զինին հարամ ,  
Խակ մարդէն զատ՝ հալալ է նա ամէնուն :»

Ինչ որ կամեցայ , իմ կամքովս չէր ,  
Տիրոջ կամեցածն՝ իմ կամեցածն էր ,  
Քանի արդար է կամեցածն Անոր ,  
Ուրեմն մեղք է կամք ունենալս :

Հոգերն Աշխարհի , դեռ ֆեղ չըզգետնած ,  
Հոգա՛ , չի պակսի , վարդ-կարմիր զինին .  
Յիմա՛ր , ուսկի չես , որ ֆեղի քաղին :  
Ու յետոյ նորէն՝ հողէն դուրս հանեն :

## ՀԱՆԱՔ

— Տէր հայր , պամեային (կտուտ) հայերէնն ի՞նչ է :  
— Զպամեա , օրհնա՛ծ , զպամեա :

## ՍԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ Ն. ՔՈՒՉԱԿԵՆ

## ՍԻՐՈՅ ՏԱՃԱՐՀ

«Քո ծոցդ է ներմակ տաճար ,  
Քո ծծերդ է կանքեղ ի վառ :  
Երբամ ժամկոչ ըլլամ ,  
Գամ լինիմ տաճրիդ լուսարար» :

## ԵԱՐՀ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ

«Գնա՛ , ծօ տխմար , չի վայլես  
Տաճրիս լուսարար .  
Երբաս տուն խաղով լենաս ,  
Ու քողուս տաճարս ի խաւար :

ԵԱՌ , ՀՈԴԻԿՍ ՔԵԶԻ  
Մէջկունիդ է բարակ ու երկան ,  
Ծրծերուդ մէջն կայ երազ .  
Շատ մարդ է մեռել սիրուդ ,  
Կը վախեմ քէ մեռնիմ ես ալ .  
Մեռնիլ պիտի , չի կայ նար ,  
Զայս հոգեկս ի ֆեղ պիտի տալ :

## ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԷՆ

Թէ մոգերու զինիին ես սիրահար եմ՝ եմ արդէն ,  
Թէ որ կեալուր ու կոապաշտ , անհաւատ եմ՝ եմ արդէն .  
Ամէն կրօնիք ինձ հանդէպ՝ ունի կասկած առանձին ,  
Իսկ ներքնապէս , համոզումով , ես այն եմ որ՝ եմ արդէն :

Դինի խմել , ուրախ ըլլալ՝ օրէնքս է ,  
Ո՛չ անհաւատ , ո՛չ հաւատացող՝ հաւատքս է .  
«Ի՞նչ նուէր տամ» , հարցուցի ես հարս-քախտիս ,  
Հսաւ . «Ինձ տուր ուրախ սիրտդ , կը քաւէ :»


## ԼՈՒԺԵՑԵՌ

Անքոյսը Անծինին բեռցուցին , եւ անդադարին երդիքէն անցուցին :

ՍԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ Ն. ՔՈՒԶԱԿԵՆ

**ԾԻՇԵՐԼ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ**

Քանի մարն զիս քերեր,  
Քահանայի չեմ խոստովաներ.  
Ուրտեղ քահանայ տեսեր,  
Նա ծռեր համբուս ու ելեր.  
Ուրտեղ աղուոր տեսեր  
Գիրկ ու ծոցն ի դէմ զնացեր.  
Ծոցիկն ժամտուն արել,  
Ծըծերուն եմ խոստովանել:



Այսինքն, — քանի մօրմէս ծներ եմ, քահանայի խոստովանանք չեմ ըրեր:

Ուր որ քահանայ մը տեսեր եմ, ան ծռեր է եւ իմ ճամբէս գուրս է ելեր:

Ես գացեր եմ այստեղերը միայն, ուր աղուորներ կան եւ դէպի անոնց գիլկը եւ ծոցն եմ դիմեր:

Աղուորներուն ծոցը ժամտուն եմ ըրեր եւ Անոնց ծիծերուն եմ խոստովաներ:

ԱՆԺՈՒԻՐ ԱՊՈՒԻՐՆ ՈՒ ՀԱՅԴՈՒԻԿԻ

Հայ հայդուկները (Փէտայի) Բասէն էին մտեր 1895 թուականին եւ հիւր եղած էին քահանայի մը տունը:

Աղուր բերուեցաւ անոնց:

Յանկարծ աղուրը գգալող հայդուկներէն խնուացի Մարտիրոս՝ ոկտու հանել իր հազուսաները:

— Ծօ՛, Մարտիրոս, ինչո՞ւ կը հանես հազուսաներդ:

— Հանուիմ եւ սա աղուրին մէջը ցատքեմ, լողամ, կարելի է ցորենի հատիկ մը հանեմ, տամ քեզի ուտես:

**ՈՐՆ Է ԷՇԼ**

Տղան. — Հայրի՛կ, ո՞վ աւելի շատ ծեծ կ'ուտէ:

Հայրը. — էշլ:

Տղան. — Ուրեմն մայրիկը է՛շ է:

**ԶԱՐԱՌԱՋԻՆ**

Տղան. — Մայրի՛կ, ինչո՞ւ մազերդ ճերմկած են:

Մայրը. — Զաւա՛կս, շատ մտածելէն է:

Տղան. — Մայրի՛կ, ըսել է, դուն ալ կը մտածես:



\*\*\*\*\*

BELMONT LUNCH

269 Main St.

Պելմոնթ Լընչը եւ Ուաշինգթոն Քաֆէն կայուն գիներ եւ արագ սպասարկութիւն ունին:

«Մաքրութիւնը մեր նշանաբանն է».

Մէր բոլոր կերակուրները տունի պէս եփուած են.

Քանի մը ոէնթ տուր եւ քաղցրահամ կերակուր կեր:

Փորձէ մեր ամենօրեայ կերակուրի մտանաւոր դրութիւնը:

\*\*\*\*\*

WASHINGTON CAFE

109 Main St.

**Compliments  
of  
Summerfield Furniture  
Company  
174-188 Main Street  
Worcester, Mass.**

Tel. Park 1275-1276



**ՄԵՂՈՒ ՇՆՈՐՉԱԼԻՆ ԿԸ ԿԱՂԱՆԴՔ**

Պոսթըն

Պ. ՃիՄ ԴԱՆԻԵԼԵՍՆԻՆ — Օլու Սառւթհ Պիլտինկի նման չէնք մը, եւ վայելուչ Տիկին մը որ իր արեւն ըլլայ . . . :

Պ. Յ. Պ. ՊԱՐՍԱՄԵՍՆԻՆ — Իրենց խօսքը յարգող յաձաւուրդներ, որպէսզի Ճիմին գործը չդժուարանայ:

Պ. ԳՈՅՈՒՆԻՆ — (Բարելոնեան Բըկ Քըմփընի) — Նարուգողոնոսոր արքային բոլոր գորգերը եւ այն հրէայ գեղուհիները որոնցմով զարդարեց ան իր պալատը:

Պ. ԶԱՅԱԼ ՊԱՇԻՆ, (Բարելոնեան Բըկ Քըմփընի) — Նոյնուկու:

Պ. ՔԵՇԿԻԿԵՍՆԻՆ՝ Պրինուօքըր — Քէշկէկ ուտելու խոշոր շերեփ մը:

ՄԱՂԻԿԵՍՆ ԵՂԲԱՑՐՆԵՐՈՒՆ, Պոսթըն — 1925-ին կէս միլ. արժէքով չէնքի մը տիւլ-:

Պ. ԽՈՐէՆ Մ. ՅԱՐՈՒԹիՒՆԵՍՆԻՆ — Մաղիկեաններէն ըստանալիք խոշոր քըմիչըն մը:

Պ. ՅԱԿՈԲ ԴԵՐԶԱԿԵՍՆԻՆ — Պինդ ձեռք մը, որպէսզի ապակէ այն բոլոր հայ այրերը որոնք իրեն կը գիմեն ամուսնալուծուելու նպատակաւ:

Փարոս Ռիյլ էսքէքի Տէր եւ Տնօրէն Պ. ՊԱՐՈՆԵՍՆԻՆ — Աղեքանդրիոյ փարոսը մթիմոնթ Սթրիթին վրայ, որպէսզի տուն գնողներու մտքերն առաջնորդէ:

Փաստարան Պ. ՄՈՒՆԵԿԱՆԻՒ ։ Աղեքանդրիոն փաղանդ մը, նաև ցորեն մը հաւատք հանդէս հայ գրողներու:


ՍԱՐԳԻՍ ՍԱՐԱՋԵՍՆԻՆ, Դիու Եորք — Բէքըրտի հայ երգիչներ եւ նոր դիւտ մը որ Արշին Մալ Ալանը գերազանցէ:

ՏՈԲԹ. ԳԱՍՊԱՐ ԿԱՐՈՅԵՍՆԻՆ — Կոտրուած եղեգներու անտառ մը . . . :

ՏՈԲԹ. ԱԼՊԵՐԹ ԱԲէԼԵՍՆԻՆ — Նոր հատոր մը կարողութեան եւ անկարողութեան մասին:

ՏՈԲԹ. ՀԻՒՍԻՍԵՍՆԻՆ — Մունետիկ մը որ գոչք . «Հոս նա-

Phone: Park 5216—5217



GROCERS, HOTELS and RESTAURANTS SUPPLIED  
Compliments  
WORCESTER BAKING COMPANY  
Makers of  
TOWN TALK BREAD  
Mason St.  
WORCESTER, MASS.

## G. P. Clothing Company

(ԿԱՐԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆ)

215 MAIN STREET

WORCESTER, MASS.

Կը վաճառենք պատրաստի հաղուստներ, այլերու յատուկ գուլզայ, օձիք, փողկապ, թաշկինակ, շապիկ, ամէն տեսակ սպիտակեղին եւ արդուզարդի առարկաներ:

Օտարին դիմելէ առաջ, դիմեցէք մեզի, եւ եթէ դոչ շմնաք, այն ատեն կրնաք դուք ձեզ արդարացնել թէ ուրիշին դիմելու պատճառ մը ունիք:

Սակայն մինչեւ որ մեզ չփորձէք, չէք կրնար արդարացնել օտարէն ըրած ձեր առեւտուրը:

## ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ

Արտաստհմանէն նոր վերադարձած, այսու կը յայտաբարեմ բոլոր իմ ծանօթներուն եւ մեր գրասենեակի հետ գործ եւ առկախ հաշիւ ունեցողներուն, որ հաճին անձամբ կամ նամակով ինձ դիմել՝ իրենց գործերու վերջնական կարգադրութեանց համար:

Սոյն կարգի գործերու համար մեր տրամադրելի ժամերն են Երեքարթի և Հինգարթի երեկոյները ժամը 5-7-ը:

ՏՕԲԹ. Վ. ՄՈՐԼԵԱՆ

431 Old So. Bldg., Boston, Mass.

Tel. Congress 7218



## ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԷՆ

Հոգերն աշխարհին սրտմաշ կ'ընեն ֆեզ,  
Զուր տեղ, բարեկամ, հոգիդ կը լկես.  
Թորուէ՛ հոգերդ, կեանիք վայելէ,  
Աշխարհի շինելնուն՝ կարծիքդ հարցուցի՞ն:

Իմ կաւս դո՛ւն շաղախեցիք, ե՞ս ինչ ընեմ,  
Բախտիս ցանցը դուն լարեցիք, ե՞ս ինչ ընեմ,  
Ինչ որ եղայ ես կեանիխ մէջ՝ վաս քէ բարի,  
Ճակատս դո՛ւ գրած էիք, ե՞ս ինչ ընեմ:

Ումայ մը գինին չեմ փոխեր՝ սահմաններու հետ թուսին,  
Ո՛չ Գոպարի գահին հետ, ո՛չ ալ թագին Քէյուշին.  
Սիրահարին մէկ հատաշն, Արշալոյսին մէջ մարած,  
Արժէ հազար խոպտ կանչ, կրօնամոլ Տէրվիշին:



Phone: Newton North 2070

## Mourad Oriental Rug Co.

(Հնկերակցութեամբ ԶՕՐ. ՍԵՊՈՒՀԻ)

HOVSEP MEDZADOURIAN, Mgr.

251 WASHINGTON ST., NEWTON, MASS.

CLEANING

WASHING

REPAIRING

Մուրաստ Արեւելեան գորդի ընկերութիւնը, որուն  
կ'անդամակցի Զօր. Սեպուհ, կը կատարէ մաքրում, գոր-  
դի լուացք և նորոգում:

Յովսէփ Մեծատուրեան, որուն անունը կապուած է  
Հաճընի և Սիսի վերջին կոխմերուն եւ դէպքերուն հետ,  
ունի որոշ վորձառութիւն գորդի ճիւղին մէջ եւս, եւ կը  
վարէ այս ընկերութեան գործերը:

Եթէ կ'ուզէք մաքրել, լուալ եւ նորոգել ձեր գորդե-  
րը, հանդիպեցէք այս ընկերութեան կամ հեռախոս ըրէք:

ՓԱՐՈՍ ՌԻԸԼ ԷՍԹԵՅԹ ՕՖԻՍ  
570 TREMONT ST. BOSTON, MASS.

Tel. Back Bay 10982

Լոէ՛,  
Լուեցէ՛ք.

Մեր արամադրութեան տալ լիսթո եղած երեք Միլիոն  
տոլարի արժողութիւնով ամէն կարդի բրաբրդիներ ունինք,  
Մէկ, երկու և երեք ընտանիքներու յարմար բնակարաններ  
լաւագոյն շրջանակներու մէջ: Արարքմբները չատ մը տարբեր  
վայրերու մէջ եւ շահարեր մէծ ու փոքր պլաֆներ, լանինկ հասուզ-  
ներ ու զանազան տեսակի մէծ ու փոքր յաջողուած պիզնէներ:

Փարոս կը նշանակէ լոյսառու:  
Փարոս լոյս կուտայ ձեր դրամական ճամբուն:  
Փարոս ցոյց կուտայ ձեր տան ուղին:  
Փարոս կ'առաջնորդէ ձեզ՝ դէպի խանութ:  
Փարոս կը փարատէ ձեր մտահոգութիւնը:

Tel. Beach 9261

MISS S. AZARIAN

DRESSMAKING

149 TREMONT ST. Room 418 BOSTON, MASS.

Օր. Ս. Ազարեան կը պահէ կանանց յատուկ ամէն տե-  
սակ հաղուստներու մթերք մը:

Կը կարէ հարսանիքի առթիւ ամէն ճաշակի յարմար  
սուբեր եւ ֆօքեր՝ չափի վրայ (Made Order):

Իր գիները չափաւոր են:

Փորձեցէք եւ գոհ պիտի մնաք:

## ԱՐՈԵԱՆ ԳՈՆԱՐԵԼԵՆԻ ԸՆԿ.

Նշանառուքի, ամուսնութեան եւ այլ պարագաներու աղաժանդեայ ոսկեզն զարդեղէններու համար մեզի դիմեցէք:

Հայրենակիցներ,

Օտարին դիմելէ տոտք, մեզի՝ դիմեցէք. իսկ եթէ պատահի, որ օտարին դիմէք նախ, անդամ մըն ալ մեզի դիմեցէք եւ ապա ըրէք ձեր դնումները:

Նկատի ունեցէք որ կը շինենք եւ կը նորոգենք ժամացոյցներ, ամէն տեսակ զարդեղները: Մեր սկզբունքն է ուղղամիտ գործունէութիւն:

Եթէ մեզի գաք, յիշեցէք Մեզու Շնորհալիի Զուարթապատումը:

AROIAN JEWELRY CO.

453 Washington St. Room 711..

Boston, Mass.

Tel. Beach 7783

## ՍԵԴՐԱՔ ՊԻԼԷԶԵՐԵԱՆ

Ներկայացացիչ

Տիեզերահոչակ ՖՈՐՏԻ

F O R D

The Universal Car

FAY-BARRY MOTOR CO.

59-65 HARDING ST., WORCESTER, MASS.

Presented by

SETH BILEZERIAN

Tel. Park 6924

Res. 103 Austin St.

Worcester, Mass.

յեցէք, հայեր, ահա՛ կարող բժիշկ մը, որ ինքզինքը ետևբույզ չի կրնար ընկել»:

Պ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆԻՆ.— Կարի (Milk) փողոցին մէջ խոչոր հայերէն վերտառութիւն մը՝ «Ես եմ կեամի, լոյս եւ ապահովագրութիւն»:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ, Զըլսի.— Ճարպի եւ իւղի նոր եւ աւելի խոչոր գործարան մը, նաեւ գործակալ մը Գերմանիոյ մէջ որ Արշակ Զամալեանի կարողութիւններն ունենայ:

ԱՐԱՐԱՏ ՆՊԱՐԵՎԻՆԱՅ ԷՆԿԵՐՈՒԹԵԱՆ.— Ֆէթվաճեանի կամ Թէրէմէղեանի նման նկարիչներ որ նպարեղէնի թիթեռներու պիտակին վրայ Արարատը ուղիղ եւ լաւ նկարեն:

ԽՈԼԻԻԿԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ, Սըմբռվիլ.— Ածուխի հանք մը Ռէսուի մէջ եւ խոչոր անտառ մը ի Մէյն:

ՃՈՐՃ եւ ԳԱՐԵԳԻՆ ՊՈՂՈՍԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ, Էվրեկը, Մէս.— Նոր մէքենայ մը որ ոչ միայն մարդոց հագուստները ներկէ ու մաքրէ, այլ եւ անոնց հոգիները:

Պ. ՅՈՎԱԼՓ ՄԵԾՍՑՈՒՐԵԱՆԻՆ, Նիույքլն.— Հաճընի եւ Սիսի բոլոր պատուած գորգերը, նաեւ ձիտորներու խումբ մը զանոնք Նիութըն փոխադրելու:

ՆՈՐԵԱՆՆԵՐՈՒՆ.— Կիլիկեան պիտակի ամրողջ Այնթապի անտառները եւ գործակալ մը ի Պարսկաստան:

ԱՐԱԲՍ ԳՐԱՑԱՆ ՏՆՈՐԷՆԻՆ.— Կար եւ կարողութիւն կզակին վրայ փունջ մը մազ ունեցողին դէմ մրցելու համար:

Պ. Դ. ԱՐՕԵԱՆԻՆ.— Մատանի եւ աղամանդ զնող հայ կեներ, որ խելացի ըլլան օտարին դիմելէ ետք, անդամ մըն ալ իրեն դիմելու:

Պ. ՍԵԴՐԱՔ ԱԶԱՏԵԱՆԻՆ, Ամէն տեղ.— Յ. Ս. Լեւոնեանի պէս բանաստեղծ մը, որ 1926-ի մեր Զուարթապատումին մէջ փառարանէ կեանքի ապահովագրութիւնը:

Պ. ԿԱՐՈ ՄՈՒԹԱՁԵԱՆԻՆ.— Բարերդի մէջ իր հօրը ունեցած հարստութեան կէսը եւ երկու տասներկու տիլ (գործառնութիւն) 1925-ը փակելու համար իր Ռիյըլ էսթէյթի օֆիսին մէջ:

Պ. ՃՈՐՃ ՏէՐ ՍՄՐԳԻՍԵԱՆԻՆ.— Մէյ մըն ալ Հարթֆըրտը չիշելու կամք եւ կարօ Մութափեանին կպչելու ուժ:

\*\*\*\*\*

# BENEFIT SHOE STORE

C. K. PERETHIAN, Prop.

Good Line of Ladies' and Gent's  
Furnishings.

Boots, Shoes and Rubber

7 Benefit Street  
Pawtucket, R. I.

ՊԵՆԵՖԻԹ ՇՈՒ ՍԹՈՐ

Տէր եւ Տնօրէն ԳՐԻԳՈՐ ՓԵՐԵՑԵԱՆ

7 Պենեֆիթ Սթորիք, Փուբաֆէք, Ռոտ Այլըն:

Կը ծախէ կիներու եւ այրերու յատուկ ամէն տեսակ հագուստէն, կօշիկներ, կիսակօշիկ եւ լաստիկ:

Կը ծախէ թաշկինակ, օձիք, կոճակ, փողկապ, ձեռնոց եւ մանր մունր իրեղէններ:

Իր պայմանները դիւրամատչելի են:

Փութաքէթի հայ հասարակութիւնը պէտք է օդտուի այս վաճառատունէն:

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Պրն. Գրիգոր Փերեցեան ծնած է Խարբերդի Իջմէ գիւղը, 1883 թուականին: Փոքր հասակին կորսնցուցած է իր ծնողքը: Ժամանակ մը հոգացուած է իր մեծ հօրեղբօրը կողմէ: Յաճախած է իր գիւղին Բողոքականաց դպրոցը, ուր սովորած է կարդալ եւ զրել: 14 տարեկան հասակին, կոտորածներէն յետոյ, սպանդիստած է ի Կիլիկիա, Ատանա: Երեք տարի Կիլիկիա մնալէ ետք, Մերսինէն վախած է Ամերիկա: Հաստատուած է Փրավիտէնս, Ռ. Ա.:

Պրն. Գրիգոր Փերեցեան Ամերիկայի մէջ ժամանակ մը անգործ մնալէ վերջ, կօշիկ նորոգելու արհեստին մտած է եւ այդ ճիւղին վրայ գործած է չորս տարի: Յետոյ ունեցած է իր սեփական խանութը Փրավիտէնսի մէջ: Ատեն մը ետք Ամերիկա բերել տուած է իր հօրեղբօր որդիները, որոնց սովորեցուցած է կօշիկ նորոգելու արհեստը: Յետոյ այդ խանութը փոխանցած է իր հօրեղբօր որդիին: Ինք անցած է մօտակայ Փութաքէթ քաղաքը եւ դնած է 7 Պենեֆիթ Սթորիքի այժմու խանութը:

Պրն. Գրիգոր Փերեցեանի Փութաքէթ հաստատուիլը կը դուզադիպի իր նշանուելուն հետ: Այս նշանածն էր հայ լաւագոյն ընտանիքի մը մէկ աղջիկը, օր. Խաչիաթուն Գաղանձեան, որ արդէն եղած է Տիկին Փերեցեան եւ ունի չորս զաւակներ, երկու աղջիկ եւ երկու մանչ: Պրն. Գրիգոր Փերեցեան իր նիւթական բարգաւաճումը որոշ չափով կը պարտի իր տիկնոջ, որուն խորհուրդները միշտ գնահատելի արդիւնքներ տուած են:

Պրն. Գրիգոր Փերեցեանի ներկայ վաճառատունը կը գտնուի Փութաքէթի լաւ փողոցներէն մէկուն վրայ: Ան տասնեւչորս տարիէ ի վեր կը գրաւէ միեւնոյն վայրը:

Պրն. Գ. Փերեցեան ծանօթ է տեղական շրջանակներուն Զարլի Շու Մելքըր անունով:

\*\*\*\*\*

ՏՈՒԹՅ. ՏԻԳՐԱՆ ՆԱԼՉԱՋԵԱՆԻՆ — ԶԵԼՈՒի քաղաքապետութիւնը:

Պ. ՄԻՄԿՈՆ ՆԵՐՍԿԵԱՆԻՆ — Վոլթամի բոլոր հաւերը, որպէսզի հաւքաչն առնէ և ամէն օր նախ՝ սրբական ըսէ:

Պ. ՄԻՆԱՍ ԳԱՆՏԱՅԵԱՆԻՆ — Ալասքայի մուշտակներու կապոց մը:

Պ. ՀՄԱՅԵԱԿ ՏԵՐ ՍՈՀԱԿԵԱՆԻՆ — Գորդ գնելու համար անդամ մըն ալ Հալէպ, Պաղտատ և Պասրա Էրթալու թիքէթ մը:

Պ. ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ ՍՈՀԱԿԵԱՆԻՆ — Մէջնի անտառներուն մէջ որորդութիւն մը....

ՀԱՐԻ ԳԱՌՈԼԵԱՆԻՆ — Ամասիայի ինձոր մը:

ՕՐ. Ա. Ա. ԶԱՐԵԱՆԻՆ — Թրիմոնթի վրայ գեղեցկագոյն գերձակատուն մը, նաեւ հաւատոք, յոյս և....

Պ. ՓԻԹԸՐ ՏԱՇՕԻՆ — Փոխատու պանդայի մը հովանաւորութիւնը և անդամակցութիւն Բիյըլ էսթէյթ էքսէնճին:

Փրավիտէնս

ԳՈՀԱՐԱԳՈՐԾ ԱՍՍՏՈՒՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ — էքնահաններու բախտն ու հարստութիւնը:

ՏԻԳՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ — Տասնհինգ հատ նոր թրաքթ ածուխ փոխադրելու:

ՊԱՐՈՅՐ ՓԱՓԱԶԵԱՆԻՆ — Հայկական Լէգէոնի սպայութեան աստիճան:

Տիրքոյիք

ԲԱՐԵԿԱՄԻՍ ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ — Տիթրոյիթի Հայ եկեղեցոյ շինութեան յանձնառութիւնը:

ՍԱՆԻՄ ՌՈՒԲԻՆ Հ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ — Համբոյիներ նոր Տարուան առթիւ:

ԲԱՐԵԿԱՄԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԳԼՄՊԼԵԱՆԻՆ — Իր աղամանդակուռ սրտին նման ընկերուէի մը:

Վուստըր

ԱՐԻՍ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆԻՆ — Գոնջելու (քէլ) լէգէոն մը որ ձայնագրութենէ հասկնայ:

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ Պ. ՄԵԼԻՔԵԱՆԻՆ — Նոր ոսպնաձեւ մը՝ տգեղները գեղեցիկ ցոյց տալու համար:

Պ. ՄԱՂԱՔ ՊէՐՊՈՒՐԵԱՆԻՆ — Հայ յաճախորդներ որոնք ըմբռնեն թէ կամ գոհացում պիտի ստանան եւ կամ դրամը ետ:

Ա Ծ Ո Ւ Խ Ա Ծ Ո Ւ Խ  
\*\*\*\*\*

Tel. Prospect 0351 and 0352

## ՄԱՔՈՒՐ ԱԾՈՒԽ

ԱՆՄԻԶԱԿԱՆ ՏԵԼԻՎՐԻ

<b>EGG</b>	<b>\$16.00</b>	<b>NUT</b>	<b>\$16.00</b>
<b>STOVE</b>	<b>16.00</b>	<b>PEA</b>	<b>12.00</b>

ՁՄԵՌՈՒԱՆ ՀԱՊՃԵՊԻՆ ՄԻ՛ ՍՊԱՍԵՐ  
ՀԻՄԱԿՈՒԾՆԵ ԱՊՍՊՐԷ ԱԾՈՒԽՆ

## Somerville Fuel Co.

K. KOLLIGIAN & SONS

30-46 Chestnut St., Somerville, Mass.

ԾԱՆՈԹ. — Խոլլիկեան Ածուխի և փայտի տունը լաւ ծանօթէ Պոսթընի և ՀՐՃԱԿԱՅՔԻ հայութեան:

Այս տան գլուխ կը կանգնի Գրիգոր Խոլլիկեան, հայրը՝ վեց զաւակներու, որոնք ամէն օր բան մը կ'աւելցնեն նշանակելի աստիճանի մը հասած բարգաւաճումին վրայ:

Այսպ եղրայլը՝ Մկրտիչ Խոլլիկեան կը վարէ ընդհանուր դործերը:

Յարուքին Խոլլիկեան, Գեորգ Խոլլիկեան  
Յաւակ Խոլլիկեան, Խոլլիկեան,  
Խոլլիկեան

Խշան Խոլլիկեան  
Եղրայրները լծուած են դործի:

Խոլլիկեաններն ունին նաեւ կըրէյձի և օֆիսի չէնք մը Սըմբռվիլի կարեւոր փողոցներէն միոյն վրայ:

Ա Ծ Ո Ւ Խ Ա Ծ Ո Ւ Խ  
\*\*\*\*\*

Պ. ԹՈՄԱՃԱՆԵԱՆԻՆ — Սառւթհ Պրիճի վրայ մեծ խանութ  
մը, որպէսզի իր դիզուած ապրանքները չունչ մը քաշեն:

Պ. ՀԱՄԱՉԱԱՊ ՇԱՀԱՐԵԱՆԻՆ — 55½ կրին Սթրիթի վրայ  
Հայարան մը, որպէսզի լոքոմօթիվ նորոգելու բերող յաճախորդ  
մը ճամբու չղնէ:

